




Բազմի

ԸՍՍԵԳԻՐ

Գրական-թերթ
և Արտ-երգի

Ը



ԺԳ. ՏԱՐԻ

ԹԻԻ 8

ՕԳՈՍՏՈՍ 1974

digitised by 

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Յ. ՕՇԱԿԱՆ Մաթիկ Մելիֆխանեան
- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ Հոգ եւ հոգեվիճակ
- Ա. ԱՐՓԻՆԷ Աբարատն ու կարթագոզը
- Գ. ՍԱՐԵԱՆ Բանաստեղծութիւններ
- ՀԱՄԱՍՏԵՂ Համբոյրը. քատերգութեան
վերածեց՝ Բ. Փափագեան
- » » Անտիպ նամակ մը
- Լ. ՄԿՐՏՁԵԱՆ Մտածումներ բանաստեղծութեան մասին
- Գ. ՊԸԼՏԵԱՆ Անդրատառը, Ինտրա եւ Տ. Զրաքեան
- Բ. ԿՌԱՆԵԱՆ Հայ մշակոյթի մասին
- Ն. ԶԱՐԵՈՒՏԵԱՆ Ֆրանսական ժամանակակից
բանաստեղծութիւնը
- Ք. ՃԻՆՊԱՇԵԱՆ «Հայկական նիւթեր շօշափող
ուսումնասիրութիւններ»
տնուն հատորը
- * * * Խրուշչեւի ցաւը
- * * * Վերապրած մեծին փառքը
- * * * «Ուրիշ տեր չի ընդունում...»

Բազմը



ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

ՃԳ. ՑԱՐԻ. ԹԻԻ Ց Գ Դ Ո Ս Շ Ո Ս 1974 ՊԵՐՏԻՍ

3863 (486)

Յ. Օ Շ Ա Կ Ա Ն

ՄԱԹԻԿ ՄԵԼԻՔԻԱՆԵԱՆ

(Վ Է Պ)

Ն Ա Ն Ա Բ Ա Ն

Ներկայ վեպը (ինչպես այն միտմերը, որոնք լոյս տեսան «Հայրենիք» հանդեսին մէջ «Հանի Մուրա», «Հանի Ապտուլլա» գլխատուած տիտղոսներով, իսկ նր շարքին ընդհանուր վերնագիրը, «Հարիւրէկ տարուան» կը գտնենք միայն «Յուսարեք»ի մէջ հրատարակուած երրորդ միութեան վրայ՝ «Միւլէյման էֆէնտի» հանուած է. ըսել կ'ուզեմ՝ անցատուած «Մնացորդաց»ի երկրորդ հատորէն՝ «Արիւնի ճամբով»:

«Մնացորդաց»ի ստեղծագործութեան մէջ վիպային իրադարձութեան հետզհետէ ընդարձակուիլը, ծանրաթեւութիւլը, յորդումի գլխաւոր պատճառը կազմեցին սա առանձնացման: Ճակատագրին մէկ խաղովը, նկուղի մը մէջ գառագեղուած այդ մարդերը շատ բարդ իրողութեանց հանգայցներ էին: Կեանքը այդ մարդոց վրայ առանձին, թէն հանգումատիպ ողբերգութիւն մըն էր: Բայց «Մնացորդաց»ի հեղինակը չէր յուսկներ աշխարհներ նուաճել: Այդ գլխաւոր նկատումն է, որ թելադրեց անցատոււմը:

«Մնացորդաց»ի բ. հատորը՝ «Արիւնի ճամբով», պատմած է Մաթիկ Մելիքիանեանին այն կենսաշերտը, որ կը պատկանի անոր ձերբակալման, հարցաքննութեան և ճանատակման պարագաներուն: Ներկայ վեպը կու տայ Մաթիկ Մելիքիանեանը ատոնցմէ առաջ: Եւ որովհետեւ ձէկ հատիկ մարդ աշխարհ մը ազդումն է և հակազդումն է, կը հասկցուի, թէ Մելիքիանեան-

նի առիթով եւ ըլլամ փորձուած այդ աշխարհը նուաճել, ուժերուս ներած չափով:

Կը յայտարարեմ, թէ ան հնարավի անձնաւորութիւն մը չէ, վիպային գործողութեան մը համար յղացուած եւ հանդերձուած: Թէ՛ ներկայ հասարակը, թէ Մաթիկին պատկանող «Մնացորդաց» ժամերը կը պատմեն ըստայգ իրողութիւններ, որքան վաւերական անձնաւորութեանց պարունակէրը, անշուշտ ենթարկուած որոշ վիպայնացման: Մնաց որ, մեր յեղափոխական յաւատարմութիւնները ինքնին ընդարձակ մթերք են սպրուսկներու, որքան անձնաւորութեանց:

Վիպասանը, մեր օրերուն, զուարճացող մը չէ: Ան ունի այդ հասարակ դերէն վեր յաւակնութիւններ: Ատոնցմէ են աշխարհներու ճարտարագետութիւն մը (Պալգաւֆ) - Հոգիներու առարկայացում մը (Տոսթայեւսկի) - Ընկերութիւններու բնական պատմութիւն մը (Ջոլա) - Կորուսած երկրամասերու վերագրում մը (Մարսէլ Փրուստ): «Մնացորդաց» ի հեղինակը աւելի համեստ է ներկայ հասարակ մէջ:

1900ը մեր ժողովուրդին այն աշխարհն է, որ արեւմտահայ գրականութեան մէջ հազիւ թէ դալուկ անդրադարձ է արձանագրած: Գրական շքեղ սերունդ մը եւ աւելի քան եղբրական, շատ ծաւալուն, ահեղ իրադարձութիւններ մեզի կը ներկայանան այսօր, կարծես իրարու անհաղթող, եթէ ոչ կռնակ դարձուցած: Չեմ խորացներ վերլուծումը՝ պատճառներ ու ազդակներ առարկայելու: Նպատակս է գտնել, առանձնացնել այդ սերունդին (որ գրական, գործնական, մարտական իր երեւոյթով ինքզինքը կը պարտադրէ իմ մտքին) բանի մը ամուր գիծերը հոգիէ եւ մտէ, ու այդ առիթով բանի մը համապատկերները (tableau synoptique) այդ ժողովուրդի հաւաքական սպրուսկներուն: Անշուշտ ծանր աշխատանք է առիկս, տրուած ըլլալով մէկ Հասիկ մարդու գգայութեանց գումարը, կազմուած այնքան գաւազան բաժիններէ:

«Մնացորդաց» Պ. հատորը՝ «Դժոխք», յոյս չունիմ, որ ըլլայ նուաճելի ալիս նուազած իմ ուժերէն: Իր կէտին մէջ կորուսած, կործանած այդ գործին հսկայ առէն է սակայն, որ դեռ կը յամառի ու կը մզէ զիս, գէշ հատուածակի՝ իմ պարտքին վճարման:

Մաթիկ Մեյիֆիսանեանը ձանձկայ անձնապէս, կեանքի գրեթէ սեւին, ինչպէս կ'ըսեն:

Իր ընկերոջ հետ, ան ըրաւ ինծի հետ իր հանդիպումը իբր յեզպատխական ամանկ օրերու, ուր այս բառը լուրջ ակամջներն իսկ դատապարտելի էին մահուան: Մեր ժողովուրդը — հոս՝ նկատի ունիմ պոլսամերձ շրջաններու հայութիւնը — կարծես, այս դարուն սկիզբը մեղքը կը բաւեր բարձրած չըլլալու: Անոր գլխուն յօրինուած էին պայմաններ, որոնց չէին մըտածած հին ու նոր յազարկան ժողովուրդները իրենց գերիներուն համար: Պէտք չէ սխալ կշռել տարազութիւնը սա հաւաստումին: Մենք չենք պարծեմար չունեցած ազատութեան մը սնտի, մարացկան փառքովը: Բայց կը նշանակէ ուրիշ ստուգութիւններ, ինչ որ 1900ը ըրաւ ամէնէն անարգ, ախար գերութիւնը մեր պատմութեան, բացատրելի է թրքական բռնութենէն աւելի մեր հոգիին բացառիկ մէկ բարեխառնութեամբը: Կը հասկնայինք, որ գերիներ էինք: Բայց ոգրերգութիւնը հո՛ն էր, որ կորսնցուցած էինք գերութեան իմաստը, գգայարանքը, նման չըլլալով մեր պատմութեան, որոնք կը հասկնային գերութիւնը, երբ իրենք չէին ընդուներ իրենց գերի ըլլալը: Բանի որ հագիններուն խորը, շքեղ՝ կը կազմուէր իրենց ցեղային գերագանցու-

Քեան պատգամը: Յետոյ չէիմք հասկնար աւելի տարրական ճշմարտութիւններ: Մեր հոգին, պոսամերձ շրջաններ ու Պալիսը մանաւանդ, լայնօրէն իւրացուցած արեւմտեան գաղափարաբանութիւնը, ալ չէր սեղմուեր *ըլլալու այն ձեւին մէջ*, որով եղեր էին մեր պապերը, թուրքին հետ: Իմ մեծ հայրս թուրքէն չէր տառապեր: Բայց իր թռչող աշխարհ մտաւ *թուրքը ապրելով*: Ձեւ գիտեր, պատմած եւ տեղ մը. — մանկութեանս ամենէն հետաւոր յաւը ծեծն է, գոր կերայ թուրք գիւղի մը քաղնիքին մէջ: Ես մօրս գիրկէն չէի բաժնուած տակաւին: Ու ինծի տարեկից մանչ մը գիս փոխ էր գետին: Մայրս չորցուց իմ կակիծը, բայց չչորցուց անոր հետքը իմ լման կեանքիս վրայէն: Ի՞նչ ըրեր էի այդ տղան:

Մեր յեղափոխականները անշուշտ ինծի պէս գիւղէ մը չէին գար: Անոնք գաղափարի էին, ասու էին, գերման էին, անգլիացի էին: Բայց մեր ժողովուրդը՝ հիմնովին *արեւելք*: Ա՛ս էր, որ չկրցանք գգալ:

Պիտի գգուշանամ, որքան կարելի է, գաւառներ բանաձեւել: Այսօրուան մեր հոգեվիճակը շարունակութիւնն է այդ օրերու գաղափարաբանութեան: Եանուած: — Կայ կէտ մը, աս ալ մեր գիտակցիլն է մեր պարանքին: Ազգերու երջանկութեան, ազատութեան համայնապատկերներուն բոլորամուկը մեր յարումը հերքուեցաւ այն իսկ ազգերէն, որոնք ատենց նարարագետութիւնը դատախօսեր էին մեզի: Ու ի՞նչ սառչ վնասեցինք սախեզն փորձառութիւնն ալ, գոր լաւ կ'ընեմք իրարու դէմ երբեք չմտածելով շահագործել: 900ին, գիտակից ոչ մէկ պատանի երկու կարծիք ունէր ազատութեան երազին դիմաց: Այսօր անդհուած է նախադր: Հիմա, մեր շմարումին մէջ, մեր յիմարացումը մեզի մտայնի ընելու համար, իրար կը հարուածենք, խելի տասնարաններ խորտակելով իրարու գլխին, իրր թէ մեր աղտըր հետեւանքն ըլլար այդ տախտակներէն մէկ քանիին: 1900ին, պատանիներս հետու էինք նման սրբապիզծ մտածողութիւններէ:

Քսանէն վար էի ես այդ օրերուն ու նման այն հարգներուն, որոնք իմ գեղիս ու շրջանիս միւս գեղերուն մէջ կը վարանէին բաժնուիլ պատանութենէն, քանի որ իրենց սպասուած աշխարհը գոեհիկ խանութք էր արեւստներուն եւ կամ կրծուած, կտրուած, ցոլցուած հոգին շերտը, ուր արին պիտի թափուէր պատառ մը հացի համար: Մտքի ոչ մէկ փորձառութիւն, քանի որ քաղաքին վարժարան մը եւ տարի մըն ալ վստակամ ընթացք (Արմաշի դպրեւանքին առաջին դասարանը) մը միայն ունէի ինծի իբր մթերք: Վանքի այդ տարին դեռ կը թափառէր ետեւս, իմ գիւղիս մէջ: Կատէի այդ տարին, ուր կը յիշեմ օրինակած ըլլալ հարիւրէ աւելի տետրակ, որոնց կէտը նիւթ ունէր, որքան կը կարծեմ, աւետարաններուն մեկնութիւնը, մէկ չորսըսդը՝ ծանծաղապատում, տժգոյն, անխել վերակազմութիւն, մեր եկեղեցիին պատմութեան, գրուած առանց ոմի, առանց հոգիի, պարզ անուններու եւ թուականներու խաղաղութիւն: Աւելի վերջը, այդ պատմութեան հեղինակը (*սկզբնապատում*», Օրմանեան Սրբազան) գէշ-ազէկ եղանակ մը նարեց, վասնզի իր ժողովուրդին իրական կեանքին հետ հարադրակցութիւն մը գտաւ, մեր պատմիչները իբր այդ, այսինքն՝ կեանք կարգաւով հագ չէր վիեմնացիներուն նման իբրեւ բանասիրական մրցանքի կրկն: Հարիւրաւոր այդ էջերուն մէջ ես ատեցի այդ պատմութիւնը, այնքան խորունկ էր ձանձորոյքը քան չըսող այդ մտայն, անկանաչ պատմութիւն: Երեսուն լման տարիներ պէտք եղան, այդ օրերէն ասդին, որպէսզի սրբագրուէր իմ մէջ այդ սպաննող նոզկանքը, փարատէր տեղութեան ժանգը ու ես հասկնայի, սիրէի խանդավառ ու եպարտ, իմ ժողովուրդիս հոգիին այդ անգուգական

հանդիսարանը, սրտառուչ, քաղցր, գեղեցիկ, մա՛նուամոզ իրաւ: Ու խոր-
 հիլ, որ սրբագրումի սա թախտը զրացում է շատ շատերու: Հարիւր տարի
 առաջ, օտար եկեղեցիներ կը հրապարակէին մեր դժգոհ միտքերը: Յիսուս
 տարի առաջ, եկեղեցին դադրած էր ինքնիրմէ: Եւ սակայն հոն էր. եւ անկեա
 մեր ամբողջ պատմութեան խորհրդամիշ խտութիւնը. ոչ իբր տեղի հագնու
 պագարի, ծէսի, պաշտամունքի, առնուազն շէնքի, կառայցի հանդէս, այլ
 իբրև *ժամէն*, գոյացութիւն՝ կազմուած մեր դարերում ամենէն ազնիւ
 տարրերով: Ու այս տարրերը ձայն են, արիւն, մարմար, ոսկի, ապրշում
 ու քեհեզ, մեղք ու ապաշխարանք, յայտ, երազ տառապանք եւ սփռումք —
 թալարը մարդկեղէն հաստատ տախտակներու, ձեւերու վրայով: Մեր կազ-
 մէ՝ մեր յօրինած, բանաձեւած հակադրեցութիւն՝ մեզ ընկնող օրէնքներում
 դէմ, մեր ծարաւին՝ արդարութենէ, բարութենէ, խաղաղութենէ, երկին-
 քէ: Գպրեկանքի այդ տարուամ մը դասերէն իմ մէջ միակ ամուն մը կ'ապրի
 այսօր, եպիսկոպոսի մը ամունը, *Ազբիւն*: Ու չեմ ալ գիտեր, թէ ո՛ր
 հրաշքը միջամտեց, որպէսզի այդ մէկ հատիկ թառը ազատէր ընդհանուր
 աւարտէն...

Քսանը չէի մտած եւ այդ օրերում: Անտար տետրակները իրենց չա-
 րիքը տարածեցին մեր եին մատենագիրներէն իմ ըմբերցումներս'ն ալ վը-
 րայ: Կարծես նայն ապիմաստութիւնը հասարակաց բարեխառնութիւն ըլ-
 լար մեր պատմագիրներում (անլի վերջը մատենագրական հետաքրքրու-
 քիւններ պիտի յաջողէին արագորի պատանկան այդ տպարութեանց ա-
 մարդարութիւնը ու եւ պիտի հասկնայի մեր մատենագիրները, իրենց բար
 մեղքերուն հակառակ, դարձեալ իբր *վկայութիւններ*, միշտ իմ ժողովուր-
 դէս, զոր իր դժբախտութիւնը կ'ընէր կրկնապէս սրտառուչ ու յանկուցիչ):
 Ուրիշ ազգերու պատանկները իրենց անցեալէն ո՛չ թէ կը վնասուէին, այլ
 կը *բաշտէին*: Մեզի համար հակառակն էր, որ տեղի կ'ունենար: Վաճառած
 այդ աշխարհէն, ստիպուած էի դառնալ ներկային: Այդ ներկայ՝ 1900ը:
 Կատարուած էր մեր մատենագիրներէն ազրացուած *աւերածեցիչ* մէկը,
 ամենց չափ ընդարձակ: Ու մա՛նուամոզ, թուրքերէ վեր իրակամութեամբ
 մը: Աղէտը քսուած էր մեզի: Տեղ մը պատմեր եմ, թէ ինչպէս Աստուա-
 ծածնայ սօսին յաջորդ մէկ գիշերին մեր գեղը վազած էր ծամ, արդարի-
 մեղաւորի բաժնած կրակին ջուրը, որպէսզի ամով օծուած այ-
 րէինք՝ թշնամիին շյամնուելու համար: Այս բաները կը պատմուին տըխ-
 րութեամբ: Թող բախտը խնայէ ձեզի ու ձեր գաւկրներում՝ գամնմք ապրելու
 անորակիլի պահը:

1900էն քիչ վերջն էր, վաճառեցի փախուստիս հետեւող քանի մը տարի-
 ներում, որ ինծի տրուեցաւ խելամուտ ըլլալ մեր ճակատագրին: 1915ը յըս-
 տակ չէր անշուշտ իմ մտքին: Բայց ազէտ մը կը յօրինուէր: Մաթիկ Մելիք-
 խանեանը կը լրացնէր, իբր հեռու հայրենիքին կեանքի պատկերը, պատա-
 նութեան խակ շրջանը, զիս դարձնելով իմ ժողովուրդիս իմաստին, շատ ա-
 ւելի պարզ, մարդկային ճամբով մը, որքան չէին կրցած ընել ասիկա Արմա-
 շի վաճառի հարիւրաւոր տետրակները:

Կու տամ Մաթիկ Մելիքխանեանը: Կենդանագիրը կազմուած է անձ-
 նական ամբողջ ու հարագատ տարրերէ: Ապրեցայ հետը երկու շաբաթ, գի-
 քսում՝ զոր չէր ըրած ուրիշ ոչ մէկ տեղ: Մարդն էր, որ կ'երեւար: Կենալը,
 գործելը, աշխատիլը՝ ուրիշներուն փառասիրութիւնը: Իբր՝ *տեսնել*,
ճանչնալ, *սորվիլ* մեր ժողովուրդը: Մանուկ մըն էր, հակառակ մեծ վար-
 ցացումին: Մնացած էր հայ, Մակուայէն մինչեւ իմ գեղը: Գիտէր վտան-
 քը, որ կայի էր գլխուն ու յուսահատ բան էր ասիկա արգիլել չկրնալը:

Ինչ որ կը պատկանի պատմական հարազատութեան իր ու ընկերոջը անհաւատալի ռոյսակամէն, այսօր չեմ ենթարկեր մանրակրկիտ հետազոտութեան: Մեր յեղափոխականներէն շատեր պատմած են իրենց յիշատակները: Այդ էջերէն յառնող ընդհանուր տպաւորութիւնը շատ մօտիկն է ամօր, գոր ես առի Մաթիկ Մելիքիսանեանէն: Ու այդ մարդերը մէկ չէ, տասը չէ, հարիւր չէ, այլ հազարներ էին, որոնք կովկասէն ժամանած կամ ոչ՝ ելած մեր իսկ հողերում ընդերքէն ու պղտեցան մեր լեռներն ու անգուցնները ու պսակուեցան «երկնային պսակով», ինչպէս կը պատկերեն մեր գիրքերը: Այսօր չեմ հարցներ ինծի անոնց ցեղաքանութիւնը: Մաթիկ Մելիքիսանեանն ու ընկերը մեռած բանտին մէջ: («Մնացորդաց» թ. հատորը՝ «Արիւնի ճամբով», կու տայ այդ նահատակութիւնը լրիւ): Թուրքերը արդարութեան ծարաւն ունին, արեան ծարաւին չափ զօրաւոր: Ըճեքեցողը զը զրկեմ «Արիւնի ճամբով»-ին:

Այսօր, մզմաւանդէն հեռու, յիսուներէն շատ վեր, երբ ազատ երկրի մը մէջ կը մօտեցամ այդ մարդուն, այդ օրերուն ու մտածմբ այդ պատմանինն ու յաբակից աշխարհներուն, տեսքեկում մը կը պաշարէ գիւ: Քառասուն տարի առաջ, այդ պայմաններու ճնշումին գնովը, ինծի համար դժուար հասկնալի այդ մարդը, այսօր այ չէ գաղթած անկարելի ըսուելու չափ գրքուար (հասկնալի) մտալ: «Հայրենիք» հանդէսին (Ամերիկա, 1922-էն սկսող) մէջ լոյս տեսած հարիրաւոր յուշագրութիւնները դեր ունեցան սակայն: «Մաթիկ Մելիքիսանեան» (ներկայ հատորը) չի նուաներ անշուշտ հայ յեղափոխականը, իբր տիպար ու միաբիւլ(*) բայց կու տայ քննադրանք մը այն գեղեցիկներուն, միճակներուն մասին, որոնք միշտ մերը ըլլալու էին այսօր, բոլորովին տարբեր անցնցմէ, որոնք մեր ամէնուն սեփականութիւնը, միւսն ու շսկորն են դարձեր այժմ, երբ անկարող բացատրելու մեր ազատութեան պատասխանատուներ ճարելու մեր միամիտ յիմարութիւնը կ'ալետարենք (քառը հին իմաստով) ու իրարու գլխուն կը տեղանք ո՛չ միայն մեղադրանք, այլևս անագնաութիւն, մոռնալով որ բացառիկ իրականութիւնը, որ այս ժողովուրդին գերագոյն ապումն էր յիսուն տարի առաջ, մեր գերութեան տարատարսին վերիւ անկարան պատտառ՝ ազատութեան երազին, պարզ, իրաւ. ամէնուն խօսող նոյն ատեն: 1900-ին, ըսի, Մաթիկները հազար էին, սկսած մաքսի բռնակիրէն մինչև ամէնէն մաքրատաղանդ գրագետը, ինչպէս հազար են ու աւելի այսօր մեր գաղութները երկպառակող, քառահերձող մեծափառ ճնհները, որոնք գաղութները կը խաչեն, ամէն օր քիչ մը աւելի, կ'ընակնին տաւած աս ու ան հաշուետախտակներուն, մէկը

(*) Երբեքստ էի այդ նուանուր փորձել «Մնացորդաց» թ. հատորին՝ «Երեւել»-ին մէջ՝ Այաշի (կուսակցական պետերուն տարագրաւոյրը, ուրկէ մեռած գացին) խորհրդաւոր ցնչերաւան մը վրայ տարածուող հատորով մը, ուր կ'երանկան շանի մը անմաւարութեանց բերեով մեր Յեղափոխութեան ինքզինքը պիտի ներկայացնէր: Աճաբէն (1915) դաբձող շանի մը անմեքու վկայութիւնները, կամիտաւով մատուցուած պատարագ մը (Չեռչըրի մէջ պատահածը տարբեր չէր կրնար ըլլալ անշուշտ Այաշի գնչերէն) ու մեր ժողովուրդին բոլոր խտերէն գոյաւոր մարդոց միջև միմէն լոյս երկարող խօսակցութիւն մը — մազմիւս էր կազմելու այդ հատորին: Արշալոյսին գեղի մահ: Իբր ծրագիր համետ, բայց գործադրուած պարագայի շատ յատկանշական այդ հատորին դարձ մը տրուում երազ մըն է, երբ կը գրեմ սա տալերը:

միւսէն գազիր, ամէն երանգէ դաւանանութեանց հազցնելով գոյնզգոյն պատարար աս ու ան գազափարականներուն:

Ու եղած է, աս'ազ, իմ այ պատանութիւնը, որ ճոյնքամ անկարելի կը թուի, որքան իմ ծերութիւնը, երբ իմ աչքերը կ'իյնան իմ շրջապատիմ աւրիկ մը հոգին. որ կը սպասէ իմ տառապանքիս շիջումը բնդունելու: Ո՛վ կանանչարակ գարունը մեր գերեզմանին, ուր հողը շէր գիտեր մեռնիլ: Ու՛՛ ո՛վ լալկան, հոտած, բոլոր չորութիւնը սա սուրբ որակուած աշխարհներուն. ու մրկած, կոնծած ամայի ազէկտուր հանդէսը, ուր մահն իսկ կը վախճայ ինքնիրմէ: Ու ճիշդ է ասիկա դարձեալ հոգեզէն ալ մարդին համար: Ինչ որ գազթարանն է այսօր, ամբոյն է մարգոց, որոնց խցուած է ամենէն խորունկ զգայարանքը, ան՝ որով ժողովուրդ մը ինքզինքը կ'ըլլայ, ատկէ ուժ կ'առնէ եւ ոչ թէ գայն կը ջանայ ճանդիլ իր մէջէն, ամօք մը պահան տեղաւորելու համար խղճի սեմին: Բացի Ամերիկաներէն՝ եղեր եմ Ափիւսի բոլոր հոծ ու կարեւոր կայքերուն: Եղեր եմ մա՛նաւանդ ամէն գոյնն ու խու՛ւ մարդոց ոլորտներուն: Ու ամէն տեղ մարդիկ ճոյնն էին: Այսինքն՝ իմ տարիքիս մտիկներ, գերեզմաններէն մերժուած, աշխարհ մետուած ուրուականներ, գորս այդ աշխարհը կը ջանար պատուհանիլ՝ թերեւս իրենց գերագոյն մեղքը իրենց յիշեցնելու շարիքը յաւերժացեալներ մկատելով: Ողբերգութիւնը յիստունէն վերերուն, օտար, ուրացուած ու հերձուածոց: Ու անոնք, որ հասեր էին իստասունի դունրուն, մարդեր էին, Տանթէի հաւարանին արժանի գրկուած ըլլալով տեւէ ժողովուրդի աւանդութեան, հոգիին պատկանելու քարիքէն կամ շարիքէն, իստի որ հոգի կազմելու իրենց շրջանը ծախեր էին անպատիւն ու ջարդիմ ու կ'ապրէին մտանալու, միշտ, ու մտանալու սարսափէն հալածական, իրենց գլուխներուն գինը սարսափով մարսել ջանալով ու շկրծալով: Քսանին ու երեսունին մէջտեղ ծողկող տարրը ինծի կը թուի բոլորովին նոր, օտար ժողովուրդի մը պատկանիլ: Այդ տղաքը կը խօսին ու կը գրեն երկրին լեզուն, ուր կ'ապրին, բայց կ'ամչնան իրենց արեանը լեզուէն:

«Մնացորդաց»ը վկայութիւն մըն էր:

Այդ վկայութեան մէջ տիպար մըն է Մաթիկ Մեխիբեանեանը: Իր առիթով ես կը ներեմ մաս մը բուն ազատի դարձեալ մեր պատանութեան աշխարհէն:

Այս առաջադրութեամբ կը մտնեմ վիպումին:

Ա.

Յեղափոխական Մաթիկը — Մատթէոս Արտաշէս Աերզէյ Մեխիբեանեանց — ինչպէս Հպարտադին արտասանեց ինծի իր աւագանի, ծխական դպրոցի, Մոսկուայի Փաթիւթէի մարզերուն կրած զանազան անունները, երբ պարտաւորուեցաւ ծնունդ մը, դպրոց մը, առնուազն պատանութիւն մը ճարիլ, հերքելու համար արդար իմ տարակոյսը թիֆլիսէն Պրուստ ակադր հեռաւորութեանց դիմաց (տարածութիւն մը, զոր այն օրերուն ցամաքով անհնար էր կտրել-անցնիլ Հազար անգամ շապանուած) ինքզինքը ներկայացուց իբր պատուակալ ուսանող (Փանջունին կրցա՞ծ էր տեսնել զայն, ծնունդէն առաջ) Մոսկուայի բժշկական Փաթիւթէին ատամնարտական սեկցիայում: Այն օրերուն համալսարանը (մա՛նաւանդ գերմանական մարզայով) աւարտողները նոր կը սկսէին իրենց հերոսական պայքարը

տոճուճը տիտղոսին հտեւէն. համայնարանին իբր ազնուականացման անհերքելի փաստը մատուցուած իրենց սկզբ փառասիրութեանց: Մաթիկ Մելիք-խաննայ կամ աւելի պարզ ու շիճ՝ Սերգէյ Մելիք, իբր ժողովուրդի հարազատ տրիրուն ու պիռնիք, մորթեր էր տիտղոսները, Թուրքիա մտնելուն զուգահեռաբար, թեթեւալով աւելորդ զգեստէն ու պատուանշաններէն (թէեւ տարօրէն խռովիչ էր իր յամառութիւնը մօրուքիկը պահելու, ընդունելէ ետք տանկական Ֆէսը, իր առաջին զոհողութիւնը յեղափոխական դատին, յօժարելով իր ուղեղին պարտադրուած սա նահատակութիւնը արգասաւարել, շատ աւելի առատօրէն օգտակար դառնալու համար իր ժողովուրդին, շնամանկով այս կերպով հին նահատակներուն, որոնք միայն իրենց սեփական զըլուխին փրկութիւնը ունէին նկատի), հետզհետէ նոյնանալու համար գիւղացուն, քանուորին, իբր տարազ, ապրում ու հողերանութիւն:

Յամին շնորհաց հազար ինը հարիւր եւ քանի մըն ալ կտոր տարիին, ահ երեւաց, բնկերոյ մը հետ, քիւքանակամ շրջաններում (այն օրէն բաւական հազ պիտի ընդհանրանաք տանկըցած հողերուն վերագոյնանալը, պատմութեան մէջ կրկին անուանակոչմամբ մը: Այս բառին տեղ կար Պրոսասան) շնաներու մէջ կորսուած գիւղ մը: Ո՛չ մողեր, ո՛չ գիտաւոր աստղ եւ ոչ ալ հրեշտակներ կանխած էին այդ ծնունդը: Անիկա, ըսես, նման օղաքարի ըլլար ինկած երկինքէն: Անակնկա՞լ: Ատկէ աւելին չէին տեսած այդ շրջանները:

Կովկասէն կու գա՞ր: Ու ահաւոր էր ասիկա: Ուրկէ ո՞ւր՝ երբ մենք գիտէինք, որ յեղափոխականը կու գար Պոլսէն, Արեւմտադէն: Կովկասէն կու գար, ուրկէ մեր կողմերը կու գային շերամի հունա ծախելու քացող մեր հնաարտիւններուն բերնովը աշուղական երգեր ու վրացի աղջիկներուն սու աշուղներուն գովքը հիւսող սիրահարական մելանուշ եղանակներ, սա կրակի կտոր, թէեւ համառօտ (կը նշանակէ՝ կարճ) մարդը, յեղափոխական Մաթիկը: 1908ին, անշուշտ այդ Կովկասէն ես տեսայ նոր ժամանած հարիւրաւոր յեղափոխականներ, քաղմարդէս ու անորակելի: Բայց ի՞մ պատանութեան խակ ու թուառ օրերուն յեղափոխականը Պոլսէն կու գար: Կը խօսէր մերիներն մօտ բարբառ մը, սանկ քիչիկ մը Պարտիզակ, նոր Գեղ հասող, ընտանի, մեղմէ վերջապէս: Կը զատուէր մեղմէ իր գրեւտներովը — բազմատեսակ — ու զրպաններուն խորը մեծ ռարսափով տեղուարուած մեծաքանակ հաւկիթներով (կը նշանակէ՝ ձեռնառումք) ու, մանաւանդ, կարմիր գիրքերով տպուած թերթուկներու վրայ իր անհուն հաւատքովը: Չի բացատրուիր, սա կարճ էջերուն վրայ աշխարհը այն ապրումներուն, զորո յայդ մարդերը, իրենց խորհրդաւոր երեւումովը, ամէնէն ամայի, անայց վայրերուն ծոցը, կը ստեղծէին մեր, կը կրկնեմ, գեր-թշուառ պատանութեանը մատողաշ ջուրերուն խորը, որոնց երեսին ձայները կը հնչէին:

Ես ճանչցայ Մաթիկ Մելիքիանեանը Նիկիոյ լիճին ելրերն ի վեր հայ գիւղերու շրջանակէն բոլորովին հեռացած, իսկապէս ճանդնդախոյս աւանի մը մէջ, որուն անունը մեր կողմերուն տուած էր առիթ բաւական սրամիտ քաչքուքի, բոլորն ալ ժխտական երանգով, այդ գիւղին պակասող բարիքներուն յայտարար: Գեղն էր անիկա, շունեցող՝ այցի, ձիթնի: Մարգարէ ըլլալու պէտք չկայ՝ հետեւեցնելու համար պակասը խաղողին ու ձէթին: Բայց բաւական խելքի կարիք կայ՝ այդ պակասէն իջնելու համար ուրիշ աչ պակասներու, այս անգամ մարդկային պարունակէ: Հաղարներուն մէջէն կրնայիք գտնել երեսի տեղ քիչիկ մը խակ կաշին, որ այդ գիւղին աղջիկը

կը կրէր: Հիժա կը դատեմ երևւոյթը: Մալարիան զարկած էր արիւնը այդ գեղին: Աւ անոր ազլիկները, միշտ արեւին մէջ աշխատանքի, սակիանայու տեղ իրենց երեսներէն, կը դղմէին: Լիճին շուրջը բարձրագոյր նստող գեղերը կը հաւատային, որ ազլիկը չէր կրնար ըլլալ, չիմուիլ առանց վշտի: Զունէր այդ գեղը գարձեալ սակի սիրերգներ: Գեղերը իրենց հեղինակած երգերը (գուգ հեռու էք կասկածել անգամ խորունկ գեղեցկութիւնը սա ըստեղծութիւն, որուն ամբողջ ոգրերգութեամբը ճարտարապետաւած, գրեթէ միշտ սիրային տեղունդներէ, յաճախ մահուամբ պատկաւոր, բայց գէպի հոն նամբուն բոլոր իրաւ յոյզերովը եւ սաղնապանքովը տարօրէն մարդկային ու իրաւ) իրարու չէին ուշանար փոխ առչէ: Այդ գեղը մէկ հատիկն էր, ուրկէ ոչ մէկը եկած չէր զվտակուած (բառը գործածուած է հոս ներսէս Շընորհայիին զգայութեամբը) մեր ասնիքներուն: Հիժա կը դատեմ որ արքա-մութիւնը, որ մարդերէն չի յորինուի, այլ լիարդէն, էր կարգին կրթութիւն արուած մալարիային աստմներուն: Ըստ թէ լեռնախոյս, դաման, շարքալ գեղ մըն էր անիկա: Բայց չըստ, թէ չըջանին մէջ միակն էր, որ ըլլար բնակուած հայեր: Աւ չըջանը բաղկացած էր մեծ ու սղտիկ հարիւրաւոր աւաններէ, մեծ մասով Գուլկարիայէն գաղթական փամաճներէ կազմուած, որոնք իրենց զբիտանեայի արիւնը չէին հերքեր, երբ կը նուաճէին այդ վայրերուն գաժանութիւնը, կը գնէին կանանչը ու ծառը լերկ բլուրնեարու ստորաւոր ու կը շարէին իրենց հիւզակներու քահանաներու փեղոյրը յիշեցնող հանդոյցները, ոսնկ ճոռորդ գար մը, արեւին մէջ, մինչև որ խոզանին տեղ կզմիւտարբը գար կարճելու: Հայ գեղը մինակ: Հոն կը զըրկէինք մեր ասն-մայա աղլիկները, կաղերը, կոյրերը, որոնք ձեռքէ ձեռք կանցնէին իր թանկ, եղի ու մեղրի մէջ մահած ապրանք ու կը կազմէին գեղին ազնուականութիւնը, առնուազն իրր զիրք առաջին սերունդին վրայ: Այս հանգամանքը կը վերածուէր խոր արհամարհանքի, երբ մեր կողմերէն կնոյ մը ծնունդ աղայ մը, սաղաւարներուն, սաննայինը խաղընկեր, հաւանարար քանի մը որուն ամար մեր գեղը հիւր իլած: Գեղեւած ու մեծ-փոր այդ աղան կը շարշարէինք, հեղնելով իր վրայէն գեղը:

— Փորաս ալ շունիք,
որ վայրի բրուսի մէկ տեսակն էր: Գեղն էր անիկա, ուր խոտ չէր բուսներ:

Բաւական անսովոր, նոյնիսկ ծիծաղառիթ պայմաններու մէջ տեղի ունեցաւ իմ ծանօթացումը բժիշկ Մատթէոս Մելիքիանեանցի հետ: Գիտնալու էք, որ այդ գեղը ունէր մէկ հատիկ արհարան: Հասկնալու համար սա ժուժկալութիւնը զժուարութեան մէջ չէք: Բայց ահա աւելին: Մի կարդաք ու անցնիք: Այդ արհարանը — այսինքն՝ իր թելադրանքին մէկ կարեւոր մասը զոնէ — անծանօթ է ձեզմէ մեծ մասի մը, որ կը կարգայ այս տողերը քաղաքակիրթ մեծ կեդրոններու մէջ. կամ ունի այդին արեւելեան երկիրներու խեղճ ու ազտու խորշերը, գիւղերու ամէնէն անհրապոյր մէկ կէտին: Արհարանը, քառասուն տարի առաջ, այդ գեղին խորհրդարանն էր, առանց հեղնութեան: Մէկ հատիկ: Պարագայ՝ որ քանի մը հարիւր տուննոց այդ գեղին նիւթական կացութիւնը կը թարգմանէր, կը պարզէր, անշուշտ շոյթ վատքարս, ու բարոյական ալ մակարդակը՝ անշուշտ զշատ յետանկետային ինչպէս ալ վարժուէր էինք մտապատկերել, այդ ու կանխող ժամանակներուն համար, գիւղերը մեր հայրենիքին, Արուանձտեանց Արքայանի տեղեկազեր-գիրքերուն եւ ասնն-ասնն զլրագրաց սիւնակներէն շոյս ընծայուածք սրբ-ստուուչ վկայութեանց մէջ: Գրամի բացարձակ պակասը (չափազանցութիւն

չէ ասիկա, նրա թական նեղութիւնը հասած էր անհաւատալի աստիճանի մը: Շատեր կը հասնէին կարգուելու տարիքին ու պակադրումը միայն կը տեսնէին իբր դեղին գրամ: Կարնլի մետաղը կը կորզուէր գիւղացիին ձեռքէն պետական շատ ամուր, աննահանջ միջոցներով: Ուզիլի վերածուելիք միակ բերքը՝ յազակը, անհնար էր վաճառել ատանց հարկահանին որոտնող կնիքին, որ հոմանիչ էր տուրքերուն բազմապիսակ զուժարին նախօրօք դանձումին: Հացահատիկները, արժաւոր, նոյնիսկ պտուղները ենթակայ էին տիրագոյն գերութեան: Ասոնց տասանորդի տուրքը ուղիղ շարաշահութիւնն էր անձնաւորուած, զանձող պաշտօնեաներուն լայնօրէն շտաշուած զսպիչ միջոցներով, որոնք միջին դարն իսկ կը դերագանցէին իրենց անմարդկային պայմաններուն: Մեր կողմերուն եղան կապալաւորներ, որոնք դեղ մտնող ճամբաներու քերէին հաստատեցին կշատուններ, այդի գացող ու եկողներուն ծանրութեանց տարբերութիւնը արձանագրելով իբր տուրքի ենթակայ բերք...: Ահաւոր մարդ մըն էր գիւղին ներքին ծախքերուն հաւաքիչը, ընտրուած յորովայնէ արկայ մը, որուն խժոժութիւնները կը հաւասարէին թուրք Պարկահանին ընդոժին վայրագութեան, երբեմն-երբեմն զայն ալ դերագանցելով, քանի որ Անրփին ծախքի ընդհանուր որակումը կը ծածկէր թոյր բռնադատումներուն, կաշառքներուն, ժանտարմաները, ստիկանները անուշիւտ արարքներուն զուգորդ կողպուտները: Սպիրիչը, ապառիկ տուած հրեայ շրջող փերեղակը, երկաթագործը, ժամկոչը՝ իր ու տէրտէրին հաշույն, մէյմէկ տուարակ ուտերին՝ կը տնկուէին կային մէջ, արժեք տիրէ դէղին շուրջը զպար բուրբած, հարթելով ցորենին տարածուն կոնը, դէղը, արտադրողին ձգելով յանախ կաթունիք (կամէն շտորակուած խուժ հասկը, ուրիշ տանտիկներն թակը պիտի կորզէ հատիկը, ընդհանրապէս վատ որակով) ու զալ տարուան յոյսը: Պարտքը գերութիւն է կ'ըսեն եւ ունին իրաւունք, Հարստահարիչները, ո'ր կրօնքին ալ պատկանէին, կը գտնէին պետական լայն պաշտպանութիւն, դերութիւնը անբացնող ազգականի նկատուելով եւ անողջ՝ որքան ամենահաս կաղձակերպութեամբ մը գրաւի տակ էին առած հասոյթի բուրք ազրիւրները: Կապալաւորուն, վրասի տարիներուն — կարկուտը, երաշտը, մարտիւր, չեղեղը, ցեղային գրգռութիւնները պարբերական այցելուներ էին այդ վնասները հեղինակող — ուղիղ հէջ մըն էր որ կը ստեղծէր: Անասուններուն միւր, կաթը, մորթը, ոսկորները, նոյնիսկ դիակները, բեռնակիրներուն օրուայ ծառայութիւնները երբեմն տուրքի եղան հպատակ: Ու ես ճանչցայ մարդեր, որոնք արօտներուն խոտը, աշնան թափող տերիւններն ալ հասոյթի վերածեցին, անկէ զանձելով իրենց իրաւունքը: Հեռու գեղեր գաղթող մարդոց շահն ալ շտոպան գանձելէ անոնց դեղ մնացած պարագաներէն, Հացին հետզհետէ զժուարագիւտ դառնալը — գիւղացիները այդ պարագան կը պատկերէին հողը զարնող երաշտ տարածելով արդիւնքն ալ որակին — գիւղապետին անձնական հեղինակութիւնը, որ շարքաշ ու անխոնջ աշխատող, սրճարան մուտքը կը մերժէր ձեռքը-տուրքը բռնող մարդերուն, ու քիչիկ մըն ալ բարքերու նախնական ու գանդալ գընացքը իրարու էին եկած մէկ հատի վրայ պահելու թիւը այդ անիծեալ շէնքերուն, որոնք աւելի դիւրակեաց շրջաններու, մեծազոյն պատուհասը դարձան գինովութեան, թղթախաղի, եղբայրասպան կոտոր վառարաններ հանդիսանալով ու երիտասարդութիւնը ապականելով, կործանելով նոյնիսկ հոգիէն՝ ինչպէս մարմինէն: Նոր Գիւղը, Պարտիզակը տրտում վկայութիւններ էին այդ ոգիէն: Մեր կողմերը, անգործութեան, զուր սպասումին այդ օճախներն էին, որ կիները նետեցին բանուորութեան, գործարաններու մէջ հալու-

ժաշ ընող կեանքին: Ըս աշխատեր եմ ութ տարեկանէս առդին: Ու տասը չբժտած աղջնակը ինծի Հեա պիտի աշխատէր այդ խոնաւ գործարաններուն մէջ լման տասնըվեց ժամ, յաճախ գիշերք սկսեալ, մա՛նաւանդ միւն-մըմբան, որպէսզի հասնէինք ցամաք հացին, մետաքը պատրաստելով Հարուստներու միտերը փափկագեղ ընծայող, մերիններուն ազգակամուսին, խանձու-մին, ճոռուսին գնովը, վրայ տալով մա՛նաւանդ մանկութեան կուսութիւնը հոգիէ ու երազէ, երբ այդքան անարդարութիւն կը հիւռէիմք մեր զգայաբաններուն: Պզտիկ աղջիկները ինչպէ՛ս ժաշեցան գործարանին աէր աղաներուն ցանկութիւններովը, որ ուրիշ վէպ է արդէն: Սպասուհիներուն գէպի Պոլիս recruitmentը՝ ուրիշ: Սանտուներուն ողորդութիւնը՝ ուրիշ: Եզանակներուն արածութեամբը այդ մէկ Հատիկ սրճարանը կը Հաւաքուէին սանկ ու նանկ մարդեր: Տաղաւար մը, բարեկենդան մը, խոշոր ու խորունկ մին մը բացառիկ տոթի էր այդ մուտքը արդարացնող: Ուրիշ օրերու՝ միայն վաւերական, ամբողջ գեղին Համահան Հաւանութեամբը նուիրագործուած ծերունիներ, որոնց աշքին լոյսին սանկ հարիւրէն հարիւր մը գեղչուիլը կը մնար պոյմանը այդ փառքին: Կամ որոնց ողորուսուծը դարձեր էր ժամահան, զեղացին կըտէր, ասկորցած (գիրքերուն sclerose) շարտանելու շտի անհրաժեշտ շարժումներ, թեւի կամ սրունքի, դէպի արտերը ոտք փորձելու, զիրենք ծափկը գնելու գնով վաւերական անդամալոյծներուն: — պղտոր ու խայտարղէս գասակարգ, գեղին գիտութեան մէջ ճշմարիտ խորհուրդ, շտա շուտ զգարնուած իրկնուարէն, յայտ ու անյայտ մեղքերու իրք նախապատիժ, հուսով ցուէն, ցուերէն, ասոնք ալ յայտ — անոնք, յամառ ու խորդախ, օր մը յօղուածներուն, օր մը մէջքի խաղերուն ուղիով, ուրիշ օր մը սրտին դոններուն, բոլորն ալ հաշտ իրենց խորհուրդին, այլիներն՝ շէնք շնորհք սեղաւորուած, ենթակային առ ու ան անասուած արարքը նախաքաւող, յիմար ու ճամբորդ, ա՛լ Հասաստուած անոնց խորշած միւսերուն, ծակրակէն սակորներուն ներքը, երբեմն սրդի փոխուելով, աւելի շատ ձմեռ մը լման անկողին ըլլալով, ցից-ցից կրծելով քիթին դոնները, երկսին մէկ կայր, կամ փոզին վրայ, ուսեցուցուցք նստելով ու փակով՝ ինչպէս փտեցնելով, զեա խորամ շինկած գոմու ստատկները տարօրէն թելադրելով...: Մերերը այդ գեղին, մալարիայէն մազաղաթուած իրենց մարմնողէն սաղանակը, իրենց փայտերուն վրայ բեանաւորած, կը շարժուէին ալ ու ձախ, թթու ու աշխած, աղք ու շէա Հատող իրենց երկար վարտիքներուն ներքին տանակը երբեմն ծոցուտը կնիկի մը պէս ուսեցուցած կրելով...: Կը գարնէին Համեմատաբար նուազ տարւոյնի, իրենց ցուպերը, սալերուն, սաքուններուն, սունտերուն, կոճերուն, իրենց գնացքը ոչ թէ հանգիստութիւն, այլ մարդերը ողորցելու, ծերերուն հանդէպ պակասող արգահատանքը սեւեւելու մասաղներու մտքին, ու կը մտնէին կարգաւ այդ երանելի սրճարանը, որուն մուտքը իրենց տարիքը կը բանար իրենց, երբ քանի մը զուակ, բանակ մը թոռ ունէին իրենց պահանջի կողմէն, կը բոլորէին գիւղապետը, բաղդատաբար առոյգ, որովհետեւ տարիքէն շատ խոնարհ, բայց վաղահասօրէն ճերմկած, ու կը լուէին՝ անոր լուելուն, ու կը հազային՝ անոր հազալուն, ու կը խօսէին՝ անոր խօսելուն: Ըս կամ կը բանային դժուար ու զողզով իրենց բերանները, յօրանելու, միշտ գարշաւոտ, որովհետեւ անթի, նուաճուած պեխերուն խոբէն, ու քաշչուած՝ ժօրուքին բոռէն, վկայութիւն տալու համար աս ու ան դէպքին տարիէն, հարցին դրուագներէն: Ո՛հեօք, խեղճ, անթի ծերեր — մատաղներուն բաժինն ինչ էր որ — ամբողջ վաթսուկ-եօթանասուն տարի հողին մէջ ապրած, կնիկ,

զուգորդներ, թոռներ թաղած ու թաղած, ա՛յ իրենց մնացորդացը, այդ նեխած նախադիակը խաչի պէս շաղկած... Որոնք սկսող օրը կը շափէին — ջերմաշափր սուտ բան մը չէ անշուշտ: Ու սուտ չէ նաև ձայնի մը սիւնակը, մեր հողիին ներքին բարեխառնութիւնը բացատրելու դերի մը մէջ — հարսնեքուն ձայնոյթ, բարի կամ չար, ա՛յ անհաւատարիմ իրենց ակնհայտէն առաւապելով այնքան՝ որքան ապերախ իրենց զուգորդներէն, նոյնիսկ թոռներէն, ժամ իջնելու համար իրենց մարմինը ժողովրտելու ատեն հեղ մը աչք նետելով բակին, սանդուխներուն, կոտորած լուծքերուն, բոլորն ալ իրենց առողջ օրերուն դիրք ներկայող... Ու անոնց թանձր, դէպի անարտայայտութիւն ու դէպի ազլութիւն հակած դէմքին վրայ ապրելու սկիզբ մըն էր զգացող քաւութեան: Հիւանդութիւններէն ոճանք տարիքներու հետ զբաժնէ որչա՛հ հաշտութիւն ու իրենց կարգ մը նշաններով ալ դաշնակից իրարու: Այդ սրճարանին մէջ ծերերու սա պատկերը ով գիտէ ի՞նչ շահեկան դասընթացքի մը նիւթը պիտի հայթայթէր եւրոպական մեծանուն փրոֆեսորներու: Ինծի համար, այդ օրերուն, անկա տանթէական խորհուրդ մըն էր ցուեբէն, կրօնական, լուծութեան (անգամներու) անկախարար, պարզ, պատմութեանց գիրքերով, որ ամէն մէկ ծերին ճակատը ունէր իրեն զբաղաւ: Լայնօրէն իջած գեղին սեփականութեան, ծերերու վայել թոյլբերանութեան իբր հետեւանք, բայց, պէտք է ձգել կեանքը, այսպէս կիսատ, ծերերը՝ այսպէս ուրուազիծ, ամէն մէկուն մէջ ապառաժի պէս յստակ յօրինած ողբերգութիւնը ապրումին ու... քաշել, որպէսզի քաշէ վէպն ալ: Դժբախտ արհեստ մըն է գրելը: Որքան բան կը զոհէ ան, գրողը՝ որպէսզի մտայելի մընայ ընթերցողին ժամանակացոյցին, աւելի յաճախ ճաշացուցակին, մարտոզտութեան խորհուրդին, սիւնքին: Է՛, աշխարհին ո՛ր բանն է ուղիղ, որպէսզի ըլլայ ատկեալ գրողին համար ալ: ... Այդ սրճարանին մեծարուած, ինչպէս փախցուած ու միշտ վճարուած հիւրերն էին դաշտային ու անտառային պաշտպանութեանց կենսապայտօնան, անհամազօհատ, բայց պետապէս ըստառուզէն պահակները, ալպանացի բոլորն ալ: Համիւրը շրջապատող նախարարներուն բարձր հեղինակութեամբը բոլորած սա մարդերը, ով չի գիտեր՝ Ալպանիոյ մէջ քանի մարդ փոխէ վերջ, եւ ազգեցիկ՝ Համիւրէն աւելի, որովհետեւ մօտ, իրական, ռուսերը: Արտերը, լեռները հսկելու պատրուակը անոնք կ'արժեւորէին(*) քիչ մը ամէն տեղ հարազատ միջոցներով, բայց սա կեանքով գիւղին համար զանկալ անասնութիւնն անդին ալ տրբութեամբ մը, կարծես մեղքնալով իրենց անգոյ սիրտին շորքած խորշերէն, թշուառութեան ու անզարման հանդէսին վրայ: Արտի, հետի, առանձին, խմբովի անոնք կը ներկայանային զիւղապետին տա ու ան արտին, անտառակին, արօտին իբր թէ հասցուած վնասին համար (կենդանիներուն ցուկովը, սմբակովը, քամակովը (թուլումը եղին) կը զանձէին վնասուած խոտին, ընդեղէնին, փլցուած թուփին կամ կրխառուած հողերուն ու ժուժ մըն ալ իրաւ, հաստ, փոր բեռնաւորելով իրենց աղիքներուն՝ կը հեռանային համ ու ահա՛, երես չհանելու համար ոճքած կեանքովը, որ նախախնամութեան անդարձ կարգադրութեամբը սահմանուած էր իր մեղքը հասկէ քաւելու իբր նախափորձ, սա ծառայութիւնները մշտապէս մատուցանելու միւլիւմա-նին, աշխարհին մինչեւ վախճանը՝ ինչպէս կը տրամաբանէր եօթը տուննոց

(*) Այս մտած լայնօրէն խօսուած է «Մնացորդաց»ի երկ հատորներուն եւ «Հարկեր Բնի սարուած» (ԵՍԻԷԿՄԵՆ ԷՓԵՏԻՏ) վեպի մէջ:

ճանճակայանի շէրմաւար մուլան, երբ այդ աւլանայինները մամազի ու լը-
 ւայման կը հրաւիրէր, իրենց կուշա փորէն վերջ, քարոզելով տնոց պարտք
 ու պատուհաս, իւլամին փառքն ու անհաւատին կորածքը, հասցնելով սա
 մութ, բութ խզճմասնքներուն գծուարընկալ աւջերուն...: Ու այցորդ պաշ-
 ամակալներ, ոսկեգոծ թուճերով միերու քամակին, ով գիտէ ո՛ր գեղին
 մէջ իրենց սիրուհիները գտնելու...: Ու կու գային տակաւին շարժուն զո-
 քաթիւները, կասկածելի, մուգիւր օտարականներ որտալու սահմանուած,
 պաշտօնապէս հաշակի ելած աւազակախումբերը հեռապնդող, գեղէ գեղ
 հաղորդակցութիւնը ապահովող, որոնց սպանները կ'արժէր տեսնել, գեռ
 միէն չիջած, փոխյիսնապետներ, շողաղուն կալոմներով, գեղջուկ՝ ինչպէս
 յոխարտ, խորագէտ թուրք սակայն, մտովի լղելով համարաբ գիւղապետին
 աղջիկներուն, որոնք անհասկնալի օրէնքով մը շքեղ բացառութիւններ էին,
 շոր, ճահճոտ, այրեցուցիչ այդ մարդերուն համար անկարելի գեղեցկութիւն-
 ներ, անուշ, զգլխիչ ու պուպրիկ, գեղին գեղեցիկաւար, անկիւնոտ միտե-
 բով, խորդած մարթով, մեծ-փոք գրիթէ, յգի աղջիկներուն պարզած զգու-
 ղին պատկերը հիմնովին հերքող, եւ որոնք իրենց այդ բարիքն ու շնորհը
 կը քաւէին առնէն գրիթէ գուրս ելլել չկրնալով, իրենց նշանածութեան
 շրջանին՝ ինչպէս ամուսնութենէն վերջն ալ, շորոհինդ գաւկի մայր, բայց
 պահող անաղարտ շէնքը, կանոնաւոր կատայցը իրենց գիծերուն, թարմու-
 թիւնը իրենց մոյշքին, զգլխանքը իրենց միտերուն, որոնցմով հովանաւոր էր
 եղեր պարմանութիւնը իրենց: Գիւղապետին աղջիկներուն հեքիաթը այդ
 գիւղին համար բարիք էր՝ որքան շարիք: Թերուս եւ կէս յիմար այդ յիս-
 նապետները կը փնտռէին տակաւին բարեկամութիւնը գիւղապետին մէկ հա-
 տիկ մանչուն. — սա աւելի անբացատրելի հմայք մը, հրաշք մը գրիթէ,
 այդ վայրերուն համար այնքան տարօրինակ, քանին մէջ իսկ հակայ իրր
 մարմին, գիրքերուն բառով գեղանմն, փարթամ, հրապուրիչ ու այլապէս
 ազդեցիկ, իր հայութիւնը ընելու աստիճան սխալ մը, ըստ վկայութեան
 զիւղէն անցնող ամէն միւսիւմանի: Այդ տղան իր մարմնական շէնք այն-
 քան ապաւորիչ, իր այդ տուրքին կը յաւելուր տակաւին նոյնքան յորդ, կա-
 տարեալ իմացական շնորհներ, խօսելով թուրքերուն լեզուն — իր պատու-
 նութիւնը անցեր էր թրջութեան ամէնէն թուրք մայրաքաղաքին, Գրուսայի
 մէջ — անհաւատարմի վայելչութեամբ, նախանձը զրգոկուտ աստիճան հա-
 զարապետ փաշաներուն, որոնք ճմաշալլա՛հ, մաշալլա՛հ ըսելով տղուն
 արեւը շար աւջերէ գերծ պահելու համար կը դիմէին ամէն ու մախին, հա-
 լածելով շարքին ուժերը եւ կը ցաւէին ծնունդին, իրենց կարծիքով միշեւ
 սատրապամութեան (եպարքոտութիւն) ճամբայ ունէր այդ երիտասարդը...
 եթէ երբեք ընդունէր արդար կրօնքը: Ան գպրոցական կապեր ալ կը շարու-
 նակէր պահպանել դաւառակին փաշային աղոցը հետ, թուրքերուն համար
 դժուար ըմբռնելի երիտասարդներ (կը զրկեմ ընթերցողը ճշարիւր մէկ տար-
 ւան) շարքէն երբորդին՝ «Սիւլէյման էփէնտի»ին, որուն տիպարը առած
 եմ իրմէն), երկու եղբայր: Փաշան որքան անզգամ (պէյ էր ան դեռ փաշա
 շեղած, ինքզինք պարտադրող), տղաքը նոյնքան զգաստ ու ազնուական: Որ-
 սերու պատահութեամբ կը հրաւիրուէին գիւղապետին մանչէն, ինչպէս
 կը հրաւիրուէին իրենց բարեկամ երիտասարդը իրենց գոյրերը, մանկատի
 մայրերը արգիւելով սաւանուելէ ու քրիստոնեայ հարսներու նման սեզանա-
 կից ընդունելով զանոնք իրենց հետ: Հեքիաթ չէ ասիկա, այլ իրաւ ապրում:
 Հարիւր մէկ տարւաւմ վէպին աշխարհը ձեզի կ'ըսէ շատ բան այդ ուղղու-
 թեամբ: ... Անոր գեղէն բացակայութեան, փոխ-յիսնապետները կը դար-

մաՅԻՅ (բառը հասկցէջ հին իմաստով) իրենց ձիերը, կ'ուռէին հաւը, փիւլաւը, առաջները՝ միւս գիւղապետին տունէն. աւելի յետոյ, բռնապետութեան խտրացմամբ, Թուրքերուն հանդէպ երախտագիտական զզացման մէջ իբր հաւասարութեան ապացուցում՝ շարաթներով իսկ ցամաք հաց չտեսնող գիւղացիին կոնակէն (այս ծախքերն են, որ տարուէ տարի կ'աճէին, պետական տուրքին զուգընթաց շարքէ մը դառնալու աստիճան, քանի որ անոնց վճարումը պայմանաւոր էր հասարակաց բաշխումով), ի փոռս եւ ի տխրի հայ հաւատարմութեամբ. — տարազ, որ քանի մը դար եղաւ ընթացիկ, անխուսափելի բացատրութիւն հայ եւ Թուրք յարաբերութիւնները լուսաւորող: Հարստահալած կազմակերպութիւններուն մէկ կարգադրութիւնն էր ասիկա, հայրենասիրական պարտականութեան սմէնուն վրայ տարածումին իբր անդրանկ փորձ, որպէսզի հաւատարիմ հպատակ հայը ստրուպիւնէր խոր իր յարգանքին մէջ զգամ մը եւս, զոր պարտական էր տածել մեր ցեղը հանդէպ օսմանեան փառապա՛նծ եւ բարեգործով զահուն: Ո՛վ մեր գերութիւնը՝ քեզ ինչպէ՛ս մոռնալ: Դուն ջարդերուն չափ աւժով ես իբր պատկեր, իբր քանդակ մեր հոգիէն ներս ու անոնցմէ աւելի կակճազին, վասնզի անյաղթ կը մնա ժամանակէն ու միջոցէն, ու կը կազմէս մեր մտքին խորագոյն զըժ-բախտութիւնը, կազմեր ես դարերով: Գիւղապետը, այդ աստուածավախ, իր ժամուն, օճախին, աւանդութեանց պատկառուն, բծախնդիր, ատեն մը չէր յօժարած հաւատարմութեան այս ցոյցին ու ճերքեւ ձեռացը կարգադիր էր քանի մը տարի այս անտանելի գուլումը փախիր փախարայի, մինչեւ որ նախանձորդի մը կողմէ մտանուած, ստացաւ խիտ ազդարարութիւն, յարգելու կառավարական հրահանգները, ու ծոկց գլուխ, մեղանչելով օճախին դէմ: Օտան(*), որ այդ օրերու դեղի կեանքին ամէնէն սրտաուռ զարցրութիւնն էր կազմեր դարերով եւ յեզափոխականներու հաւանական բուժում մը կրնար հայթայթել, արգիլուեցաւ: Բայց անոր հացը պիտի չպահուէր, մինչեւ վերջնական կործանումը բոլոր դարիպներուն, երգիչներուն, անցորդներուն, այս անգամ սեփական տունին մէջ:

(Շար. 1)

Թ. ՅՇԱՅԱՆ

(*) Այդ անունը կը տրուէր գիւղերու մէջ այն բնակարաններուն, որոնք սեփականուած են գեղի եամայնէին, աղբիւրին, մտաուսին, վանքին, ճամբին, գերեզմանատան սենակին մեամ: Գիւղացիք հերքով, յամենաւս էին և՛ս գիշերուած մը համար հիւրընկալի մամբարդը, իրենց սեղանէն հանելով շածինը նախորդներու ապաւին: Թուրքերուն՝ ինչպէս իրիստոնեային սիրելի այս թերևս շատ վաղցրտար տաճարիւնը մինչև ևս ևս փոխարկուած գամագամ սեղեր տակաւին կը յարգուէր: Նիկիայ շրջանի հայ գիւղերը կառավարական կարգադրութեամբ փակուեցան, կարիքի ժողովրդ (վճարատար) տնտեսաբար թնկերը պատուարելի տրոհուեալ համար:

Յ. Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն

Հող եւ Հողեվիճակ

Ոչ մէկ ապրում,
 Ոչ մէկ յայգ,
 Վազմէական մտերմութեամբ մը սակայն
 Կընդելուզուիմ
 Անգոյակից էութեանդ.
 Տագնապահար մտածումիս
 Եւ գոյութեանս մինչեւ հունկ
 Նեարդներով ներագոր :

Ոչ հողակոյտ,
 Ոչ մէկ յուշ,
 Այլ չապրում տեղ մը եիմ
 Կըլլայ իմ մէջ
 Հող ու երոզ,
 Հող ու արիւն,
 Անդրշիրիմեան ոգեղէն պտտում
 Եւ հողէն յառնող՝
 Ռազմական նուագ,
 Զօրաշարժ տարերջ :

Ոչ իմացում,
 Ոչ մէկ թռիչ,
 Այլ կը ծնիս,
 Կը ծառայիս դուն իմ մէջ
 Մակընթացադ յայտնութեամբ .
 Կը փողփողիս
 Ուղիներուն ներաշխարհիս,
 Կանաչարիք նման լոյսին երթեւեկի,
 Զիս մղելով
 Գրոհներու իմացական.
 Կամարներէդ լիութեան՝
 Կ'անցնիմ նուաստ,
 Կ'անցնիմ հպարտ,
 Իբրեւ պարսեալ
 Եւ յազթական... :

Ոչ քախանձանք,
 Ոչ արցունք,
 Այլ գոհութեամբ ինձնահանձ՝
 Կ'արարե՛ս զիս.
 Շնորհարարչիս լոյսովդ սնած՝
 Կ'ըլլամ լծորդն արարչութեանդ,
 Կ'ըլլամ զիրը մտածումիդ,
 Տեառնագրուած՝
 Իմացութեան մագաղաթիդ վըրայ կոյս...

Խօհերուդ մէջ դարահանգոյց՝
 Հոգեղէն երգ կայ,
 Հոգեղէն ապում-
 Հոգեղէն ետք կայ,
 Հոգեղէն ձգտում:
 Ծնունդն է եոզիս
 Հոգիդ գարաւոր հոգեխառնութեան-
 Հոգեդ գէպի լոյս,
 Դէպի կեանք նետուող՝
 Հոգեշրջութեան
 Հեքիաթն եմ շրջուն
 Եւ ուղեւորն անանցագիր...:

Թափառական քրուպատուր՝
 Դարպասներուդ աստուղական,
 Այլ ակութիւն հայրենական
 Բոցն ես իմ մէջ,
 Բարտիներու մշտասօսափ
 Շունչն ես իմ մէջ...:

Ոչ կոչնագիր,
 Ոչ կոչունք,
 Այլ կը մտնես
 Լուսամուտէն օրերուս,
 Դարերու քայլերով փոշոս՝
 Իբրեւ անհունչ նախազգացում,
 Զգայնութեան երիզներուս անձայնանիշ՝
 Զայնագրելու
 Խոստումներու զեռ չերկնուած մեղեդին,
 Որ պիտի գայ, պիտի գայ...:

ՅԱԿՈՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ա. Ա Ր Փ Ի Ն Է

ԱՐԱՐԱՏՆ ՈՒ ԿԱՐԹԱԶՈՂԸ



Կապո՛յա, անամոյ երկինք: Տաքուկ արև: Սազարթներու մեղմ փոփոււք: Թարմ խոտի բոյր, ու՛ ջրառատ, կայսրոսոյ առուի երգ:

Կը քալեմ գլզլացող ջուրերու կողքէն, արեւի ջերմութիւնը ծածրակիս ու ակնարկս հեռաւոր անտառապատ լեռներուն, որոնք առաւօտեան մէզին մէջ անիրականի պատրանքը ունին ու երազանքի մզող խորհրդաւորութիւն:

Այսպիսի պահերու է, որ կը սիրեմ կեանքը, կը նանչեմ ճամբարօրէն, յաւերժօրէն զեղեցիկը, որ բնութիւնն է միայն ու հողիս խաղաղած, իր անզորութիւնը դաւած, բնութեան հետ միաձուլուած, պիտի ուզէի ըսել այդ զեղեցկութեան մէկ մասնիկը դարձած՝ կ'երգէ:

Շուն մը, կարծես զիս սթափեցնելու համար, հաջիւղով կը մղէ կտուկս ու կը ստիպէ, որ կանգ առնեմ:

— Լսէ՛ Զէմփ, լսէ՛...

Տաւր-տասներկու տարեկան, կապտաչուրի մանչ մը կենդանին սաստելով՝ կը մտեանայ ինծի ու ակնյայտ վրդուփումով կ'ըսէ.

— Մի՛ վախար, չի խածներ, անծանօթներու վրայ այդպէս կը հաղէ-հաճոյք կը զգայ ստիկէ:

Յորենի արտերը յիշեցնող մազերուն վրայ ոսկի շողեր կը խաղան: Ճառագայթող խոլոր աչքերը ինծի ուղղած՝ բոպէ մը ետք հարտօրէն կ'աւելցնէ.

— Ես ձկնորսութեան կ'երթամ...

Առաջին անգամն է, որ կը տեսնեմ

զինք, բայց ան հին ծանօթի մը մտերմութեամբ ու խօսելու մարմաջով կը քալէ քովէս:

Այդպէս են շրջակայքի ազարակապաններուն ազաքը. ջերմ ու մարդածօտ:

— Կը սիրե՞ս ձուկ որսալ, — կը հարցնեմ բան մը ըսած ըլլալու համար:

— Օ՛, այո՛: Ես կարթածողով կ'որսամ:

— Իրա՞ւ, ս՛ւր է կարթածողը...

— Ես չունիմ, ընկերս ունի ու կը ձգէ, որ ես ալ զործածեմ: Ընկերս, ըմբի՛վընը քաղաքէն է, խելացի մանչ մըն է: Հոն, վերը, բլուրին վրայի հիւրանոցը կը մնան. ամէն օր հօրը հետ կու գայ լիճը ձուկ բռնելու, բայց շարաթ մը ետք քաղաք կը վերադառնան, — կ'աւելցնէ արտօրէն, — հայ են, դուն լսա՞ծ ես հայերու մասին... Ես լսած չէի, — կը շարունակէ ողբերգութեամբ, — ընկերս շատ բաներ պատմեց ինծի: Հայերը առաջին քրիստոնեայ պետութիւնը եղած են, դուն զիտէ՛ր ատիկա... եւ Արարատ լեռը, որուն վրայ Նոյն տապանը իջած է՝ հայերունն է եղած, բայց բարբարոս Թուրքերը ջարդած են հայերը ու գրաւած անոնց հողերը: Այս մեր լեռներուն պէս կանանչ չէ Արարատը, կ'ըսէ ընկերս, կապոյտ կ'երևայ ու գագաթը՝ միշտ ձիւնապատ:

Արեւէն շողեր կը թափին հողիս մէջ ու հեռաւոր բարձունքներուն վրայ շրջող ոգիներէ երգի մըմունջներ կը հասնին ականջիս:

— Հա՛յ կրնն փա, — կը դռչէ փոքրիկ ուղեկիցս Ծառի մը կոնդին նստած ալեւոր Ծերունիի մը, որ Ժխամորճը բերնին ու մէջը բարձրացող արեւին՝ հաւանարար իր կանանչ օրերը ոգեկոչող երազանքի մէջ է :

Մերուկը ձեռքը Ծանրօրէն կը բարձրացնէ, առանց շրթները շարժելու, ու ինծի կը յիշեցնէ մեր իջեւանած հիւրանոցին ալեւոր հիւրերէն մէկը, որ օր մը առաջ, Հեռաւոր լեռները դիտելով կ'ըսէր. «Երանի՛ր սա ազատ ու անհող լեռներուն... Մեր գերուած սարերուն հըպարտ կուրծքերուն տակ ի՞նչ վէրքեր, ի՞նչ վիշտեր կան...» :

— Մեծ հայրի՛կդ է, — կը հարցընեմ, քաջ դիտնալով, թէ բոլոր Ծերունիները այդ սողոց համար մեծ հայրիկ, կամ մեծ մայրիկ են :

— Ո՛չ, ձիմիին մեծ հայրիկն է եւ ձիմին զինուոր է, բայց պիտի գայ շուտով : Ես նաւազ պիտի ըլլամ, երբ մեծնամ... Հայրիկս կը ստիպէ, որ ազարակէ դորձը շարունակենք, իրեն օգնենք, բայց ես կ'ուզեմ նաւազ ըլլալ, աշխարհը տեսնել, Արարատը ու Արարատին պէս ուրիշ լեռներ, ուրիշ երկրներ ու Ժողովուրդներ տեսնել...

Բուպէ մը լսելէ հաջ, հրճուանքով կ'աւելցնէ.

— Երբ ես դրամ շահել սկսիմ՝ կարթաճող մը պիտի գնեմ. Սթիվընը կ'ըսէ, որ տասը-տասներկու տարի կարելի է հատ մը գնել : Եթէ հետս գալու ըլլաս՝ կը տեսնես, թէ ինչպէս կը գործածեմ գայն ու կը հանդիպիս բարեկամներու. they are very nice...

— Եստ պիտի ուզէի, բայց Ծանօթներու խօսք տուած եմ, Հոն պէտք է երթամ :

Փողոցի մը անկիւնէն խումբ մը աըղաք կը ձայնեն.

— Հէ՛յ, Մայքըլ, եկուր խաղայ մեզի հետ :

— Ես ձկնորսութեան կ'երթամ, — կը պատասխանէ Հպարտօրէն ու ինծի դառնալով, կ'աւելցնէ, — ես ինձի մեծերուն հետ կը սիրեմ խօսիլ ու խաղալ :

Սթիվընը տասնըհինգ տարեկան է ու ինծի հետ լուրջ բաներու մասին կը խօսի, կը պատմէ :

Շապիկին գրպանէն փոքր լուսանկար մը կը հանէ ու կ'երկարէ ինծի.

— Այս ձուկը Սթիվընին հետ միասին բռնեցինք ու հայրը լուսանկարեց մեզ :

— Քեզի պէս լուրջ ու սիրուն մանչ մըն է, — կ'ըսեմ, — անհաստականութիւն ունեցող աղուոր մանչ մը :

Կը կրկնէ խօսքերս, օրպէսզի չճոռնայ ու իր սիրելի հայ բարեկամին կրկնէ զանոնք :

— Դուն ո՛ւր Ծանօթացար իրենց, — կը հարցնեմ Մայքըլին :

— Լիճին եզերքը : Բռնուած ձուկերը ես, ջուրը կը նետէին նորէն : Երբեմն մեծ ու աղուոր ձուկեր կը բռնէին. երբ ինծի տեսան, հարցուցին, թէ կ'ուզէի՞ զանոնք : Ուրախացայ : Ես ալ որդ կը սանիմ իրենց... Ձուկերը շատ կը սիրեն որդը :

Ձեռքը կը կոխէ ասորատին ուտած զրպանը ու դուրս կը հանէ թիթեղէ տուփ մը :

— Ո՛չ, ո՛չ, — կը դռչեմ, երբ կը փորձէ բռնալ գայն, — չեմ սիրեր անոնց տեսքը :

— Իրա՛ւ. Հայրիկս կ'ըսէ, որ շատ մեծ է անոնց կատարած գերը աշխարհի վրայ, շատ օգտակար են անոնք հողին տակ. դուն գիտէիր ատիկա. շատեր չեն գիտեր, կ'ըսէ հայրիկս :

— Հայ բարեկամիդ պէս դուն եւս շատ ուշիմ մանչ մըն ես, — կ'ըսեմ ժպտելով :

Ակնարկս երբեմն կը թափառի երկընքի կապոյտին հետ ներդաշնակուած, ներքին փոթորիկները խաղաղեցնող համատարած կանանչութեան վրայ ու կը հետեւի ատուի վազըին, քարերուն զէմ՝ անոր փրփրոտ ջուրերուն :

— Այս աղուոր ատուն բաներ մը կը պատմէ՞ քեզի, — կը հարցնեմ զառնալով Մայքըլին, — երբեմն ականջ կուտա՞ս իր երգերուն...

Խելացի աչքերը քիչ մը գարմանքով

կը յարին զէմբիս, եւ իսկոյն, զիւս մը ըրածի նման՝ հրճուանքով կը գոչէ.

— Երաժշտութիւն կը սիրե՞ս դուն... Սթիվընը երգեհոն կը նուագէ. մեր քարոզիչը շատ հաւանեցաւ ու թոյլատրեց նուագարանը գործածել ե՛րբ որ ուզէ: Ես սարի զինքը. երբ նուագել սկսաւ՝ բոլորը հաւաքուեցան հոն ու ծափահարեցին: Աղուոր կտոր մըն էր, մոռցայ անունը, Գը... Գա...

— Գախ, — ըտի, — հաւանաբար, Գախի Եփրեմը:

— Այո՛, — գուցէ լսողացող աչքերով, — այդպէս ըսաւ, ինչպէ՞ս գիտցար դուն...



Օրերը կ'անցնէին շատ արագ: Առւին երգը հնազնեակ կորսնցուց իր խուժութիւնը, զուարթութիւնը, ակաբարցաւ, ծարեցաւ, մրճունջի վերածուեցաւ: Ազարակապանները մասհոգ երկինքը կը քննէին, բայց պանդոկներու հերերը նման հոգեր չունէին, ընդհակառակն, գոհ էին ու երջանիկ՝ ամէն օր արեւին պայծառ զէմքը տեսնելով:

Մերինները պիտի մեկնէին այդ երեկոյ, բայց ես քանի մը օր եւս կ'ուզէի մնալ: Կը քայլէի դէպի լիճը ասնող ճամբէն, ատուին կողքէն: Այլեւս չէի հանդիպած իր հայ բարեկամներով խանդավառ Մայքըլին ու կը մտածէի իր մասին, այդ ճամբուն վրայ կրկին զինքը տեսնելու հաւանականութիւնը մտովի փայտայելով:

Հետուէն շուն մը սկսաւ հաջել: «Չէմփը, խորհեցայ, հաւանաբար Չէմփը»: Յանկարծ շուն մը կաղկանձեց, շարաշուք կասկած մը արթնցնելով:

Յիշեցի, թէ այդ օրը, Չէմփի մասին խօսելով, իր դիտարար մտահոգութիւնն էր յայտնած Մայքըլ:

— Չէմփը թէ՛ խելացի է եւ թէ քիչ մը խնթով է, — ըսեր էր զայն գուրդուրանքով շոյելով, — կը տեսնե՞ս, ինչպէ՞ս անցնող կառքերուն վրայ կը հաջէ ու անոնց առջեւ կը վազէ. կը վախ-

նամ, որ օր մը փորձանքի հանդիպի:

Քայլերս արագացուցի: Ընամբու վրայ անբնական ուշին կը տեսնէի, բայց քոփտի փողոցի մը մէջ՝ բազմութիւն, ետուցեա, ամէն կողմէ հոն խուժողներ, մասհոգ զէմքեր, քանի մը ինքնաշարժներ:

Չէմփը հզոնած թաթով դացեր պտուկեր էր իր սիրով մօս ու կը կազկանձէր... Կը լզէր կողքին ինկած ձեռքը անոր ու իր արիւնտ թաթին ցաւը մոռցած՝ կարծես կը պազտուէր, որ խօսի իրեն, շարժում մը ընէ, իր անունը սայ, կեանքի դայ:

Շուարած ու շփոթած, յուզումէն կարծես միաքա բթացած՝ կը գիտէի շուրջ, երբ նշմարեցի Մայքըլին թիթեղէ աուփը, որդերուն աուփը զոր, հաւանաբար, վերջին անգամ ըլլալով կը առնէր իր հայ բարեկամներուն:

Արիւնի բարակ գիծ մը կը վազէր Մայքըլի քունքէն ու կուրծքը թիթեղէն կ'ելուէլէր:

— Ողջ է, մեռած չէ, — ըսաւ կին մը քովէս:

Այո, կասկած չկար, ողջ էր, բայց...

Այդ բայը ուղղակի սարսափ կը պատճառէր:

Բոպէ մը ետք, արդէն հասած էր հիւանդանոցի կառքը: Սպիտակազգեստ բըժիշկն ու օգնականը ելան դուրս: Ոստիկան մը հետացուց բազմութիւնը ու երբ Մայքըլը պատգարակով դրին կառքին մէջ՝ ճարդ մը մօտեցաւ լացող Չէմփին, զրկեց ու տարաւ զայն:

Բազմութիւնը ցրուեր էր. քանի մը կիներ անկիւն մը կը խօսէին. գետինը տեղ մը արիւն էր լճացեր ու քիչ մը անդին՝ թիթեղէ աուփը ոչ ոքի ուշադրութիւնը կը գրաւէր...

Մօտեցայ, վերցուցի զայն ու դրի պայուսակիս մէջ:



Սպասուած անձրեւը եկաւ յորդ: Սկսաւ գիշերուան ընթացքին ու անընդհատ տեղաց յաջորդող երկու օրերուն:

Ազարակապաններու նայուածքէն շքացաւ մտայնը ու ինկաւ պանդոկի հիւրերու դէմքին:

Երրորդ օրը արեւը դարձեալ չողացաւ չուստըն թափնց իր ճառագայթները. հողը բուրեց, լուացուած թուփերն ու մարպեքը բուրեցին, ժպիտը կրկին ծաղկեցաւ հիւրերու դէմքին: Առուն կեանքի եկաւ, իր մրմունջը մեղդիի երանգներ առաւ, ջուրերը խայտացին, զուարթացան:

Արկածէն ի վեր մտածումիս առանցքը Մայքընն էր եղած: Իր մասին տեղեկութիւն ստանալու համար օգտագործած էի հեռաձայնը: Առաջին երկու օրերուն որոշ բան մը չէին կրցած ըսել, բայց երրորդ օրը՝ արեւին հետ եկաւ նաեւ ուրախ լուրը: Այլեւս մասհողիչ չէր իր վիճակը եւ թէ կրնայի զինքը տեսնել երբ որ ուզէի: Հրճուեցայ, որովհետեւ պէտք էր քաղաք վերադառնալ յաջորդ օրը:

Կը յիշեմ, թէ քիչ մը վարանքով մօտեցայ իր սենեակի դրան: Քանի մը պարապ մահազաններ կ'երեւային ներսը: Խոր շունչ մը առի, երբ տեսայ, թէ այցելուներ չկային:

Գլուխը վերակապերու մէջ՝ պառկած էր անշարժ, աչքերը սենեակի յատակին ինկած լոյսի շերտին յառած:

— Մայքըլ, — շնչացի:

Թեթեւ մը ցնցուեցաւ կարծես ու ճանչցաւ իսկոյն: Ժպիտը տարածուեցաւ դէմքին:

Հարցում չբերի իրեն: Հարկ չկար ստոր. ինք պատմեց հանդարտօրէն: Ճիշդ էր ինչ որ գուշակներ էի. իր շունն էր եղած պատճառը:

— Չէմփիին թաթը կը լաւանայ եզեր, — ըսաւ հրճուանքով, — ես ալ լաւ եմ, կարելի է քանի մը օրէն տունը գրկեն զիս: Բայց գիտե՞ս, արկածը պա-

տահեցաւ, երբ լինը, բարեկամներու քով կ'երթայի, պատճած էի քեզի առնոց մասին, կը յիշե՞ս... Սթիվընը լուր չունեցաւ, թէ ինչու չկրցայ... վերջին օրն էր... քաղաք պիտի վերադառնային անոնք ու ես չկրցայ... պիտի չկրնամ այլեւս գիրենք տեսնել ու ըսել...

Աչքերուն մէջ անսովոր տրտմութիւն մըն էր ինկեր:

Բացարկի զգայնութեամբ տղայ մը, խորհեցայ: Բացի պայուսակս ու իրեն երկարեցի որդերուն տուփը:

Ապշած, զարմացած դիտեց զիս:

— Լուր ունեցան, — ըսի, — նշմարեր էին բացմութիւնը լինին եզերքէն ու եկեր: Երբ ձեռքս տեսան այն տուփը, որ հաւանարար արկածի պահուն զըրպանէ՞ք ինկեր էր՝ մօտեցան, խօսեցան, — կը ստէի անշուշտ, — իսկոյն զգացի, թէ հայ բարեկամներդ են. այնքան ըզրացուած էին. ու տես թէ ինչ զրկեց քեզի Սթիվընը, — ըսի ցոյց տալով կարթածողը, զոր պահեր էի դրան ետեւ:

Հրճուանքի ճիշ մը թուաւ շրթերէն: Չեմ կարծեր ուրիշ առթիւ տեսած ըլլամ ա՛յդքան երջանկութիւն ցայտող աչքեր: Ինքզինքէն չէր կրնար խօսել. կարծես անկողնէն թռչիլ կ'ուզէր: Կարթածողը ձեռքին մէջ կը դարձնէր, կը շոյէր, կը փայփայէր:

— Չըսի՞ քեզի, որ շատ լաւ մարդիկ են... պիտի չմոռնամ գիրենք, պիտի չմոռնամ... երբե՛ք... երբե՛ք... Ի՞նչ ըսաւ Սթիվընը... Ի՞նչ ըսաւ, երբ կարթածողը տուաւ...

— Ուզեց, որ միշտ յիշես իր պատճածները... Արարատը, — ըսի ես ձեռքը սեղմելով եւ ելայ դուրս:

Ու ան երբեք չգիտցաւ, թէ իր սիրելի հայ բարեկամը, Սթիվընը, եղբօրըս զաւակն էր...

Ա. ԱՐՓԻՆԷ

Հայաստանի ժամույնի մեկ Ժանեթ անգամ-
 ներսն Վերական քերքը գտնի մը ասրիների թ
 վեր սովորութիւն չքած է մրցանակով մը վար-
 ևարել ասարաց մէկ ասրան իր թիւերուն
 մէջ հրատարակած բանաստեղծական, վիպա-
 կան, վերջումկան, հրապարակագրական, նը-
 կարական եւ ակնարկի կալուածներուն բաւա-
 րոյի նմանները:

Իր անցեալ ասրան ներքող եւ երբոր
 թիւերուն մէջ՝ ճնարկն ներկայացուց Վերական
 քերքի 1972ի մրցանակաւորներն ներկող՝
 Մարտ Մարտրեան (բանաստեղծ) եւ Ազատի Ար-
 վազեան (գրաժողովուրդի):

Բանաստեղծութեան եւ սքանչի մէջ Վեր-
 կան քերքի 1973ի մրցանակակիրները հանգիստ-
 ցած են Գեղամ Մարեան եւ Թաֆաշի Արամեան:
 Առաջինը՝ շարժաթերթին թիւ մին մէջ հրա-
 տարական բանաստեղծութիւններուն շարքին, եւ
 ներկողը՝ թիւ ճին մէջ ասարագրած Վազան
 օրս գրաժողովին համար:

Ներքող ասրիներուն պէս՝ 1973ին եւս Վեր-
 կան քերքը հիւրընկալեց հին սերունդի (Մար-
 եան, Մարկէն), ասոր յաջորդներուն (Սաւ-
 եան, Նիրոզ) իրենց հանապարհին կէտերուն
 չանտուղներուն (Վահագն Կարենց, Միքա-
 յէ Յարութիւնեան) եւ նորագոյններուն (Թադ-
 միկ Գաւայեան, Մուրի Սահակեան) բանաստեղ-
 ծական շարքերը, որոնց շահագրգռութեամբ հե-
 տուող ընթերցողը սնչուլու կը լինէ ՎՄՎՂը,
 Վերանսմ եւ հաս (Համա Սահակեան), ՎՄՄՄՅՅ
 սի ճնարկները (Վահագն Կարենց), ՎՄՄՄՅՅ (Մի-
 քայի Յարութիւնեան), ՎՄՄՄՅՅ եր աստաղաճն
 իմ համը ու բանուն, ՎՄՄՄՅՅ, ՎՄՄՄ թակցը
 (Թադմիկ Գաւայեան), ՎՄՄՄ յիշողութեան դարչոն-
 քի վրայ (Մուրի Սահակեան) եւ սքիչ բանաս-
 տեղծութիւններ նոյն հեղինակներին եւ սքիչներ-
 քէ՝ ՄՄՄՄ Քարոսեան, Արշալուս Սարգիսեան,
 Լուսինիկ Գուրեան, Արեւշա Աստուան, Թաֆաշի
 Բուրջեան, եւայլն:

Նոյն հետաքրքրութեամբ եւ ընթերցողին
 շահագրգռութեան եւ խորհրդանշանեան սակի մը
 ընծայելու համար՝ կը ներկայացնենք նաեւ պը-
 սակուած այս գործերը, ներկայ թիւով՝ Գեղամ
 Մարեանի բանաստեղծութիւններուն շարքը, Թա-
 ֆաշի Արամեանի գրաժողովին յաջորդ թիւով:



«Գրական քերք»ի խմբագրական կո-
 լեգիան թերթի 1973 թուականի մրցանակ
 շնորհեց:

Գեղամ Սարեանին՝ բանաստեղծու-
 թիւնների շարքի համար (թիւ 9):

Ի Ղ Ձ

Որքան լիճի աստուածային
 կատարումը իմ իզմերի,
 Իս լու գիտեմ, վերջին պահին
 Պիտի մնայ մի բան թերի:

Թէ սխալուել, ա՛վ իմամայ,
 Վատն եմ ուզել մի արդարի,
 Թող ա՛յդ իզնս թերի մնայ,
 Թող ա՛յդ իզնս չըկատարուի:

Տ Ա Ր Ե Վ Ե Ր Զ Ի Խ Ո Ն

Հայաստանի թաշուկներ,
 Մեզ թողի՛ք ո՞ւր գնացի՛ք,
 Ծիծեռնակներ, կռուկներ,
 Եւ ծաղիկներ գեղեցիկ,
 Եւ կանաչներ արեւոտ,
 Եւ աղբիւրներ երգեցիկ,
 Բուրումնաւէտ համդ, արօտ,
 Մեզ թողի՛ք ո՞ւր գնացի՛ք:
 Հայաստանի հիւսիսներ,
 Մեզ թողի՛ք ո՞ւր գնացի՛ք,
 Անցած մարդիկ այեհներ,
 Եւ զանազան սլացիկ,
 Մեր սրտերի մէջ են դեռ
 Դէմքերը ձեր գեղեցիկ,
 Գործերը ձեր անվեհեր,
 Մեզ թողի՛ք ո՞ւր գնացի՛ք:

Մ Ե Խ Ա Կ Ն Ե Ր

Իմ տարեդարձին նուէր բերեցին
 Ճերմակ ու կարմիր սիրուն մեխակներ,
 — Դեհ, շնորհաւոր սօճիկ — ասացին —
 Եւ ծաղիկները սուրին ինձ նուէր:

Այցելուներն ինձ թողին, գնացին,
 Երգիկների հետ մնացի մնակ,
 Նրանք էլ կարծես ինձ հետ խորհեցին
 Տասնամեակներս ծանր բերան տակ...

Ճերմակ մեխակներն ինձ հետ ծերացան,
 Կարմիրների հետ ես դարձայ ջահել:
 Մտքիս մէջ կեանքիս օրերն արթնացան՝
 Մանուկ օրից մինչ այս օրը անել:

Եւ քանի՞-քանի՞ ծաղիկ բուրեցին,
 Ճերմակ ու կարմիր մեխակների հետ,
 Ի՞նչ մանուշակներ ինձ համբուրեցին,
 Ի՞նչ վարդ ու շուշան թարմ,
 Բուրումնաւէտ:

Եւ բուր-բուր գոյներն արթնացան
 Ու մեխակներին փարուած միասին,
 Հագուս մէջ շքեղ մի պարտէզ դարձան՝
 Անցած իմ կեանքի ու վերջալուսին:

Հ Ի Ն Ս Է Ր

Անունը քա իմ հոգու մէջ
 Զանգի նման է դողանջում,
 Եւ խնդրաբիւր չունի վերջ,
 Երբ քո մտքին եմ անրջում:
 Վազուց եմք մենք դարձել անել-
 Այդ լաւ գիտեմք թէ՛ ես, թէ դու-
 Բայց հին պատկերն են մեր պսակ
 Պագսմարտները մեր հոգու:
 Դրա համար իրար անվերջ
 Զանգի դէմքով եմք ճանաչում
 Եւ քո անունն իմ հոգու մէջ
 Զանգի նման է դողանջում:

Ե Ր Գ Ը

Երգն աշխարհում սրտի բարբառ
 Ու ձայն է հոգու,
 Նա սրտերից մտերմաբար
 Հասաչ է պսկում:

Թռչում է նա երգչի կրծքից
 Որպէս խինդ կամ սուգ,
 Բաժնում է նա սրտի կակիծ,
 Բիւրեղ արտասուք:

Երբում է նա աշխարհն արար,
 Սրտից սիրտ մտնում,
 Երբեմն ուրախ, երբեմն դառ
 Հալիս է մթնում:

Երգն աշխարհում հոգու ընկեր
 Ամենքի համար,
 Արեւաբեր, անձրեւաբեր
 Երկնքի կամար:

Ի Մ Ե Ր Ա Ջ Ն Ե Ր Ո Ւ Մ

Իմ երագներում կայ մի անցած օր,
 Կայ մի խփուած լոր իմ երագներում,
 Կայ անդեղախոր ու կանաչ մի ձոր,
 Եւ հոգու անդորր իմ երագներում:

Իմ երագներում սրտից վերաւոր
 Կայ մի այեւոր իմ երագներում,
 Կայ մի երգանիկ, կայ մի բախտաւոր,
 Յուշ դարձած մի օր իմ երագներում:

«Բագին»-ի այս տարուան Յունուարի եւ Փետրուարի յարգաւան քիւերուան մէջ հրատարակեցինք Բ. Փափագեանի կողմէ քատերգութեան վերածուած Համաստեղի պատմուածքներէն «Համարոր» տալով նոյն անուն քատերակամագման այդ աշխատանքներուն կազուած հեղինակին տպաւորութիւնները ամփոփող մէկ մամակը:

Համաստեղի այդ մամակին տպագրութեան առիթով խմբագրութիւնս տաքատ մօր մամակ մը, գոր կը ներկայացնենք ստորեւ, յարգելով մամակագրին փափաքը:

Ընթերցողը «Աղանձներ»-ու քատերակամագման առիթով գրած Համաստեղի մամակը պիտի կարդայ 39-40 էջերուան վրայ:

Պէյրուք, 4 Մարտ 1974

«ԲԱԳԻՆ» գրական ամսագրի խմբագրութեան Պէյրուք

Յարգելի խմբագիր «Բագին» գրական ամսագրի

Ձեր խնդրանքին ընդառնելով՝ «Բագին»-ի մէջ Հրատարակուելու Համար ձեզի կը տրամադրեմ 1962ին իմ կողմէ թատերակի վերածուած Համաստեղի «Աղանձներ» կտորը:

Ինչպէս միւս գործերը, նաեւ «Աղանձներ»-ը իր ատենին զրկած եմ Համաստեղին, որպէսզի իր մասնանշումները ընէ, եթէ ունի: «Աղանձներ»-ը ետ վերադարձուած են՝ առանց որեւէ սրբագրութեան իր կողմէ: Այդ առթիւ ինծի ուղղած իր նամակին մէջ սակայն, Համաստեղ իրաւացիօրէն գիտել կու տար, թէ թատերակի վերածած ատեն նկատի ունեցած եմ իր պատմուածքին բարոյախօսական կողմը միայն եւ այդ իսկ պատճառով բեմէն դուրս մնացած է ասն մը աւերուածը, որ հաւանաբար աւելի թատերական է:

«Աղանձներ»-ու Հրատարակութեան հետ պիտի ուղչի Համաստեղի այս տեսակէտին տեղեակ ըլլային ձեր ընթերցողները:

Այս առթիւ, թոյլ տուէք զիտողութիւն մը ընել ձեր 1974 Փետրուարի թիւին մէջ, իմ կողմէ ձեզի տրամադրուած Համաստեղի նամակին Հրատարակութեան ձեռին մասին: Խմբագրութիւնդ Համաստեղի նամակին յատկացուած էջը սկսած էր վերնագրի նման տառերով «Արիւնի Փափագեան» մը տեղադրելով վերը, վերնագրի նման: Նման բան ներելի չեմ համարեր: Իսկանը այդտեղ Համաստեղն է միայն, եւ վերնագիրը պէտք է ըլլար պարզապէս «Նամակ մը Համաստեղէն», կամ՝ նման այլ ձեւ մը, սակայն միշտ ու միայն Համաստեղի անուն հետ կապուած: Նամակը ստացուին անձը եւ անունը չին, որ արժէք կը ներկայացնեն այս պարագային, այլ դայն գրող մեծատաղանդ գրագէտին անկորնչելի անունը:

Կը խնդրեմ, որ բարի ըլլաք տեղ տալու այս նամակիս: Ենորհակալուութեամբ ու յարգանքով՝

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

Հ Ա Մ Ա Ս Տ Ե Ղ

Ա Ղ Ա Ի Ն Ի Ն Ե Բ Ը

Թատերգութեան վերածնոց՝ Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Վարագոյրի բացուելում՝ տեսարանը կը ներկայացնէ տմալ մը, կէս մը քայքայուած պատերով, փոքրուած տամիւքով, որում վրայ կտարած ազանետուն մը կայ, ազանեծիրտերով ծածկուած ձողեր կան ասդիմ-անդիմ երկարած. փեթակներ՝ տամիւքին մէկ կողմը:

Տնակին առջեւ, գիւղական փոքոց մը կամ բաց տարածութիւն մը:

Հետում՝ գիւղական տեսարան մը հերկուած դաշտերու, բլուրներ՝ անկի հետում:

Տան առջեւ, 7 տարեկան տղեկ մը, նիւցած մուրճով մը ու կէս մը ժամգտած սրտցով տախտակի կտորներ կը կտրէ, կամ կը գամէ իրարու:

Բեմին մէկ կողմէն կը մտնեն իր կու կիներ, իրարու հետ խօսակցելով:

Մէկը.— Է՞ս է տունը:
 Միւրը.— Հա, էս է: Աւերակ է դարձեր:

Մէկը.— Որք՞ տունն է, Մանան պահի:
 ՄԱՆԱՆ.— Հա, նոր հարս էս, չգիտես: Էսի թորիկ Օվաննից շէն տունն էր: Իր աղաներէն կաշիկին բաժին ինկաւ: Էդ տղան, կաշիկին տարտէն ժեռան թորիկ Օվանն ալ, էր կի՞նն ալ, նունի՞կ պահի:
 Միւրը.— Էդ աղան ո՞վ է, Մանան պահի:
 ՄԱՆԱՆ.— Թորիկ Օվանի թոռն է, կաշիկի տղան: Մայրը ուրիշներուն դուները հաց կ'իփէ, լուացք կ'ընէ, քաղհանքի կ'երթայ, որ իր դաւակը ժեծցնէ: Մարտիկ (տղան գլուխը կը դարձնէ կիներուն), մայրիկդ տո՛ւնն է:
 ՄԱՐՏԻԿ.— Ձէ. Մարտուկեցն է դացեր, լուացքի:
 ՄԱՆԱՆ.— Հա, որ դայ, ըսէ Մանան պահին եկաւ, նոր հարսինց տունը լուացք կայ, վաղը թող հանդիպի: (Վերջին խօսքերուն եւ յաջորդող բաներուն հետ յոյսը կը նուազի ու բարավիմ կը մթնայ) Հէ՛յ, էսորուայ պէս կը յիշե՞մ, էս ու Մնուշը էկեր էինք նունիկ պահիին քով, քանի տարի առաջ էր, ե՞ծթը, ո՞ւթը...

(Մուրիմ մէջ փոխուելիքը տնային պատահան է միայն, որ պիտի փոխարինուի նոյն տնային ներկայացնող, սակայն անիին նոր պատերով, առանց ամբողջացած ազանետուծի: Երկուսու վրայ եղող, ու դեռ չլրացած ազանետուծ մը միայն կայ, կան նաեւ փերփակներ: Երբ լոյսը կը վառի, տան առջեւ թտած են Նաւիկի եւ իր դրացուիներէն Մանան ու Մանուշ):

ՄԱՆԱՆ (խօսքը Նաւիկին ուղղելով) — Նաւիկի պաճի, մեծ տղա՞՛ Սարգիսը, Աստուած պահէ, Հօր տեղն է տեղեր, դաշտի բուրբ դարձերը ինքն է կ'ընէ. Հա, խէրով աղայ է:

ՆՈՒՆԻԿ — Հա, Մանան պաճի, Հա. Հօրը ծերացած սակարմերուն հանգիստ առէ կ'ուզէ, ամա ժարգո հանգստացող տեսակէն չէ, որն ի բուն կը բանի:

ՄԱՆԱՆ — Թորիկ Օվան աշխատանքը սիրող, քրտինքով շահուած հացին հաւատացող ժարգ է, մեծ տղա՞՛ Սարգիսն ալ տեսնէ է, Հօրն է կիւր: Պարտադիր՝ Խաչիկն ի՞նչ կ'ընէ, Նաւիկի պաճի:

ՆՈՒՆԻԿ — Ան ալ կ'աշխատի, Հօրը կ'օգնէ, կաւառները շտկել կ'երթայ պարտի:

ՄԱՆԱՆ — Հա՞, Խաչիկն ալ կ'աշխատի:

ՆՈՒՆԻԿ — Ինչո՞ւ կը հարցնես, Մանան պաճի, եկլպէք կ'աշխատի, պէտք է աշխատի: Նոր հարս ունի, աշխատի պիտի, որ տունը չէն պահէ:

ՄԱՆԱՆ — Հա, Հա, աշխատի պիտի, Իւղարեր հարսդ՝ անուշ, խելօք հարս է:

ՆՈՒՆԻԿ — Մեծ հարսս՝ Եղսան ալ խելօք ու անուշ հարս է, Մանան:

ՄԱՆԱՆ — Հա, թէ՛ մը լեզուն երկար է, սերք է սերք:

ՄՆՈՒՇ — Խորիկ Գէւորդի աղջիկն է, Հէրը շարունակ կը խմէ ու դիմով է, աղջիկն ալ սերթացեր է, տունը տեսան

սանն ի՞նչ էր որ, էդ Խորիկ Գէւորդի գինովութիւնն ու կոխաները:

ՆՈՒՆԻԿ — միշտ էս, դրացի Մանուշ, թէ՛ մը սերթ է մեծ հարսս, բայց էրկան, տան ու երկխաներուն շատ լաւ Հող կը տանի, ինծի ալ լաւ կ'օգնէ: Մանան պաճի, Խաչիկին խօսքն որ եղաւ. թէ՛ մը դարձացար, երբ ըսի որ Հօրը կ'օգնէ. ի՞նչ կայ:

ՄԱՆԱՆ — Հէ՛չ, Նաւիկի պաճի, բան չըկայ:

ՆՈՒՆԻԿ — Ա՛յ, լեզուիդ տակ բան մը կայ, չես ըսեր: Թորիկ Օվանի տունը թէ՛ որ կը սիրես, պէտք է ըսես, Մանան:

ՄՆՈՒՇ — Էդ Մանուշ ու Խաչիկի մասին է, Նաւիկի պաճի:

ՆՈՒՆԻԿ — Ի՞նչ Մանու, ո՞ր Մանուն:

ՄՆՈՒՇ — Աղանի խաղցնող Մանուն:

ՆՈՒՆԻԿ — Հողիմ գլուխը աղուրնիկ խաղցնողին, մեր Խաչիկին հետ ի՞նչ գործ ունի:

ՄԱՆԱՆ — Նաւիկի, շքեմ ըսի, բայց չի ըլլար. Խաչիկն ու Մանունը առաւելէ մինչեւ իրիկուն իրարու հետ են. դաշտ որ կ'երթան՝ կ'ըսէ, լիտակ Մանուշին քովն է. Նաւիկի պաճի, պարտադիր՝ Խաչիկը աղանիներու սկստայն բռնուեր է, լաւ չէ:

ՆՈՒՆԻԿ — Իրա՞ւ կ'ըսես, քո՞յրս:

ՄԱՆԱՆ — Հա, Նաւիկի, Հա. որտէս տրիւն կ'երթայ. ամա իրաւ է:

ՆՈՒՆԻԿ — Խաչիկն ու Մանուն... անթի Մանուն, շորցած Մանուն, որ մէկ հազայ՝ գօտին եօթը տեղէ կը փրթի:

ՄՆՈՒՇ — Հա, էդ Մանուն է, էդ անտուն Մանուն, աղուրնիկ խաղցնողին ո՞վ աղջիկ կու տայ: Ամա տղա՞՛ Խաչիկը կարդուած է. Իւղարերին մեղք է, Նաւիկի պաճի:

ՄԱՆԱՆ — Աղուրնիկ խաղցնողին խէր չ'իլլիք, Նաւիկի. էդ Մանունի գօտին դանակն անպակաս է, կոխ կը փնտռէ, փորձանք է, փորձանք, Նաւիկի, Ինչ կ'ընես՝ ըրէ՛, տղադ ազատէ էնոր ճանկերէն:

ՆՈՒՆԻԿ — Հա, Մանան, ճիշդ կ'ըսես, թէ՛ որ իրաւ է. ես դեռ չիմ հաւատ

տար, թէ մեր Խաչիկը հօր անունը
ցեխը կը անէ, ու աղուբնիկ խաղցը-
նողի հետ բարեկամութիւն կը կա-
պէ:

ՄԱՆԱՆ — Հաւատաւը գտնար է, Նու-
նի՛կ, հարկաւ, տղադ է, պզտի տը-
ղադ. բայց մեղք է, պզտի հարսն ալ
մեղք է, աս տունն ալ: Աղուբնիկ
խաղցնողին տունէն խեր-պերէ՛կը
կը փախի: (Ոտքի ելլելով) Երթանք,
Մնո՛ւշ:

ՄՆՈՒՇ (նայնպէս քսփի ելլելով) — Հա,
երթանք. չիտակը սրտիս վրայ բռն
էր եղած, կ'ուզէի որ ըսեմ. ըսինք,
հիմա ալ քու գիտեալիք բանդ է,
Նունի՛կ:

(Կ'ելլեն դուրս բնի մտնելով:
Նունիկ պահ մը կը մնայ շուտ-
րած, աչքերը գացողներուն ե-
տեւէն. ապա ներս կը դառնայ
ու կը կամչէ)

ՆՈՒՆԻԿ — Աղջի Իւզարբր, Իւզարբ'բ:
Ի՛ՒՂԱԲԵՐ (դուրս կու գայ) — Ի՞նչ է,
մայրի՛կ:

ՆՈՒՆԻԿ — Մարդդ, Խաչիկը մ'որ դը-
նայ:

ԻՒՂԱԲԵՐ — Չեմ գիտեր, մարէ՛. ըսաւ
դործ ունի:

ՆՈՒՆԻԿ — Բա՛հ կա՞ր ունին:
ԻՒՂԱԲԵՐ — Չէ, մարէ՛, չկար (կը
զանոնայ նստ, որ ներս մտնէ): Էդ
անկողինները պիտի վար տայի՞ր, որ
քակէի, մարէ՛:

ՆՈՒՆԻԿ — Հա, կու գամ հիմա:

(Իւզարբր ներս կ'անցնի: Նու-
նիկ կ'ելլէ տեղէն, կը մայի չորս
կողմը, կը մայի տանիքիմ-
կ'անցնի բեմին աջ կողմը, առա-
ջամաս, այսինքն՝ իրենց տան
պատին նսին կը գտնուի խորքէն
եկողներու համար: Խորքէն կու-
գան Մանօ ու Խաչիկ):
(Մանօ նիսար երիտասարդ մըն

է, հագած է կարամէն էնթարի
մը, ստեխում մաշած կօշիկներ:
Փրփրոտած գօտի մը կապած է,
արուն մէջ դաշոյն մը կայ խըր-
ւած: Խաչիկ երիտասարդ գիւ-
ղացի է, աւելի լաւ ու մաքուր
հագումով, քան Մանօ: Խորքէն
մտնելէ ետք՝ Մանօ կանգ կ'առ-
նէ, գլուխը վեր կ'ընէ, ձեռքը
նկատահար գրած՝ կը դիտէ եր-
կիցքը: Խաչիկ քայլ մը առնելէ
ետք՝ կանգ կ'առնէ, կը մայի ըն-
կերթ, ու՛)

ԽԱՉԻԿ — Էդ ի՞նչ է կը գիտես, Մանօ՛:

ՄԱՆՕ — Էդ գլխիկար դարձող աղանձին
կը տեսնե՞ս, նա, նա, է՛ն, որ հիմա
դէպի արեւը կը բարձրանայ. էն իմ
աննման կապուտիկն է, հիմա կ'եր-
թայ Աղանձնի աղանձներուն կը
խոսուի, ու աղուբ էդ մը հետը
տուած՝ իմ աղանձտունը կու գայ:

ՆՈՒՆԻԿ (լսած է Մանօյի ու Խաչիկի
ձայնը. պատին սակ կծկուած, տա-
ռապաղին դէմքով, մտիկ կ'ընէ ա-
նոց խօսակցութիւնը):

ՄԱՆՕ (կը շարունակէ դիտել ու կը խօսի
նայն ատեն) — Հա, տե՛ս, տե՛ս, մը-
տաւ Աղանձնի աղանձներուն մէջ,
կը դառնան, կը դառնան միտսին,
... նայէ՛, նայէ՛, կապուտիկը դատ-
ւեցաւ խումբէն, տե՛ս, մինակը չէ,
հետը հաս մը տուած կը դառնայ:

ԽԱՉԻԿ — Աղանձնը չի՞ նեղուի՞ր, որ ի՞ր
աղանձները քու աղանձտունդ կու-
ղան:

ՄԱՆՕ — Պա՛հ, որո՞ւ հող: Քանի անգամ
ուզեց հրացանով կապուտիկը վար
տանէ... (ձեռքը դաշոյնին դնելով),
էտը վախը որ չըլլար, Աղանձն շա-
տունց կապուտիկը զարկած կ'ըլլար:
ԽԱՉԻԿ (որ նայնպէս աղանձները կը դի-
տէ) — Հա, աղուբ աղանձ է էդ
կապուտիկը:

ՄԱՆՕ — Աղուբնիկներուն էն խաւը, որ
ըսես, Երբանն է, Խաչի՛կ. էդ մեր
Հողդարի թարլին հետ չեմ փոխի:
Երէկ տեսա՞ր, թէ ինտոր թեւ կ'առ-

Նէր: Էնպէս քայլայ կու գայ, որ կ'ըսես երկինքէն կախուած քարման կը դառնայ:

ԽԱՉԻՎ.— Եկ էգ Միբանն ինձ աուբ, Մանն: Քանի չերեկ ցորեն որ ըսես՝ կու սամ քեզի: Խոս ազուրեիկ է, աչքս վրան է:

ՄԱՆՈ լյառաքանայով դէպի բեմի կեդրոնը, դէպի Քորիկ Օվանի տունը. հայիկն ալ քովէն քայլովով.— Խն՛նթ ես, Խաչի՛կ, ես ցորենն ինչ աընեմ: Էգ ջուխա ազուրեիկները, Միբանն ու Կապուսիկը, իմ հոգին են: Քարգանով լեցուն խուճիկ ու խուճուճ թէ որ ինձի առա, ես էգ ազուրեիկները չեմ սար: Հա, ան՛ա, ես քեզի կու սամ Չըաչըս, Տորոնը: Երէկ, էգ Չըաչըսը Աղանահի ազուրեիկներէն մէկը ազուրենցս բերած էր: Իրիկունը, Ձէթ քարին քով, Աղանահը տեսաւ դիտ: Էն գիտէ, որ իրեն ազուրեիկը իմ քովն է. Էնպէս նայեցաւ... Կ'ըսես ճիկնքս դուքս պիտի քաշէ: Որ բերանը բանար... Էն վախով Մանն գիտէր իր բնիկըր: Էն միտակ Կապուսիկէն կը վախնայ. փախազ, էս անպամ, բերորը Չըաչըսն էր: Ես ի՛նչ մեղաւոր եմ, Խաչի՛կ. իրեն ազուրեիկը իմ Չըաչըսին սեւայ է ձգեր, իմ տունն է նկեր:

ԽԱՉԻՎ.— Անանկ է նը, էգ Չըաչըսը ու վեց ջուխա բլ որձ ու էգ ազուրեիկ որ ինձի առա, ես քեզի կալին՝ երեք չերեկ ցորեն կու սամ:

ՄԱՆՈ.— Է՛հ, էդպէս վնաս չունի, Խաչի՛կ. կ'ըլլայ: (Նայելով տանիքին վրայ դեռ չաւարտած ազուրեցիմ) Հա. էգ կողմը լաւ է, Խաչի՛կ — մեղուներին մօտ որ ըլլին, լաւ չէ: Կուքան տեղը ազուրենցի համար հերիք է, Խաչի՛կ: Էն կողմը կը չինես գուռը, էն միւս ճակատին վրայ հինգ վեց պատուհան կը բանաս. ցուխէն դէպի էգ ծառը կ'երկնցնես երկու սըրըս:

ԽԱՉԻՎ.— Ինձ էնպէս կու գայ, թէ էսքան տեղը պզտիկ է, Մանն՛:

ՄԱՆՈ.— Ինչ պզտիկ, Խաչի՛կ, էդպէս

կ'երեւայ: Ծախաթ չի՛նէ, որ տեսնաս: Հըմը, հըմը, իմ ազուրենցիս չափ տեղ է. էգ տեղ, պալ-պալ հարիւր խամառ ազուրեիկ կ'առնէ:

ԽԱՉԻՎ.— Անանկ է նը, էսոր առիտակները կը թափեմ հոս, միտին կը չինենք:

(Նայուածքնին կը դարձնեն կըրկիմ երկինք, ու ազուրեիկները կը դիտեն, ամենց շարժումներուն հետեւելով՝ կռուակովն կը դարձնեն տանը, շեղակի, կը դիտեն այս անգամ բեմի ձախ ամկիւնի վերեւը)

ՆՈՒՆԻՎ (իր կծկուած, ճգնուած վիճակէն դուրս գալով՝ քայլ մը առաջ առնելով դէպի տան պատի ամկիւնը).— Խաչի՛կ, Խաչի՛կ:

ԽԱՉԻՎ (եւս դառնալով).— Կիմէ ի՛նչ կայ:

ՆՈՒՆԻՎ.— Ինչ աըլի, ես վրա՛ս. ազուրեիկները փոր չեն կշտացներ. գունկարգուած մեծ աղայ ես. եղբայրդ՝ Մարգիսը ազոթկողմը ծայր չտունած՝ դործի է սկսեր: Գեղը մեծով-պզտիկով դործի վրայ է, ետարա՛ս: Հըլէ տես, քեզ պէս մըն ալ կա՛յ: Իշտէ Մանն, իշտէ գունկ:

(Մտնոն աչքերը երկինք անկած՝ շատ քարձրէն անցնող ազուրեի մը կը դիտէ. հայիկ հիացումով կը հետեւի Մանայիմ, ասանց մօրը ուշադրութիւն դարձնելու)

ՆՈՒՆԻՎ.— Խաչի՛կ, Խաչի՛կ, քեզի կ'ըսեմ. բերանս բանայ մի տար, որ չանհիծեմ: (հայիկ աչքերը վար չ'առնելու երկմեքէն):

ՆՈՒՆԻՎ.— Խաչի՛կ, Խաչի՛կ, քեզի ի՛նչ եղաւ. մայրդ է խօսողը, Խաչի՛կ: Էկուր, էգ բահը առ, թարխան դնա՛: Պապը բաց, որ երթաս Մարխունի թարխան կաւառները շտկես. վաղը ջրուղի օրն է:

ԽԱՉԻՎ (ըսուէ մը դառնալով մօրը).—

Հիմա պատուհն ըլ պիտի ըսիմ, քեզի՛ ըլ, Ի՞նչ է հաւի պէս՝ կըռ-կըռ-կըռ (կրկին կը դիտէ երկինքը)։
 ՄԱՆԹ (ձեռքը վար առնելով) — Նստան, նստան, աղուընոցիս պատին նստան, հասարակին ու Աղաճանի աղաւնիներէն մէկը (կը վազէ դուրս)։
 ԽԱՉԻԿ — Կեցի՛ր, Մանօ՛, կեցի՛ր, ես ըլ կու գամ։ (Կ'ելլէ դուրս ետեւէն)։

(Նունիկ կը մնայ բարացած, կը ծայր տղուն ետեւէն, կը ծայր տանիք գամուած ժամի մը ցիցերուն մէջ լայսը քիչ-քիչ կը պակասի, օրը իրիկուն կ'ըլլայ, ոչ գիշեր սակայն, ոչ բարավրին մուշ- իրիկնադէմ միայն։ Նունիկ մտած է տան շինիմ։ Բան մը ուսիմ՝ կու գայ Սարգիս, մեծ սպան- արեւէն այրած դէմքով, քրտնաքար ծակատով)։

ՍԱՐԳԻՍ — Մարէ՛, մեր Եղսային ըսէ, որ եկայ, կերակուրը թող պատրաստէ՛. ես եղներուն կերը տամ, գամ։
 ՆՈՒՆԻԿ — Պապը՞ ո՞ւր մնաց, Սարգի՛ս։

ՍԱՐԳԻՍ — Արթոյննոց պաշտին թովէն զատուեցաւ։ Ըսաւ՝ երթամ Մարտինի թարիւն կաւանները նայիմ։ (Սարգիս տան ետեւէն կ'անցնի։ Նունիկ կը կանչէ)՝

ՆՈՒՆԻԿ — Աղջի Եղսա՞, Սարգիսը եկաւ, կերակուրը կ'ուզէ. եղներուն թովն է, կերը տայ գոյ։

(Թորիկ Օվան, վաթսուանոց, պողպատեայ դէմքով, ետստ պիտերով, այնտան մագերով մարդ մը, ուսիմ՝ քան։ Բանը կը դնէ պատին, գրակը կը հանէ, կը սրբէ քրտինքը)

ՆՈՒՆԻԿ (Կ'ելլէ մտած տեղէն, կը մտածայ Թորիկ Օվանին, ու ժպտով մը, արուն մէջ ցաւ ալ կայ) — Բարեւ, մարդո՛ւկս։ (Ուսէն խտի շիւղ մը վերցնելով) Ի՞նչ է, արեւը աը-

ւի՛ր՝ լուսնկա՞ն առիւր։ Անօթութի՞ւնը ըլ մոռցար։

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ (ճեղքաբաճ) — Նունի՛կ, էդ աղուն ըսի՛ր, որ երթայ էդ կաւանները շակէ։

ՆՈՒՆԻԿ — Հըլէ՛ կերակուրդ բերեմ, կեր. ե՛ս ըլ տահա բան չեմ գրեթ բերանս։

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ — Կերակուրն ի՞նչ ընիմ, կնի՛կ, կը թողո՞ւն որ նստիս հարալ կերակուր ուտես։ Վազը լուրին օրն է։ Էս օր նայեցայ, էդ կաւանները շակուած չէին... Էս ի՞նչ պիտի ըլլի էս աղուն վիճակը. մէկ օր չէ, երկու օր չէ...

(Թորիկ Օվան կը նստի, արեւուն ետը կը հանէ, կը թօթուէ. հետագայ խօսակցութեան ժամանակ, Նունիկ կանգնած է երկան կողքին, ձեռքերը դիմացը կապած)։

ՆՈՒՆԻԿ — Քանի չըսիմ՝ ինձի տէրա պիտի ըլլի, արի՛մա՛րդ. էս օր էդ աղան կերակուրի ըլ չեկաւ։

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ — Ո՞ւր է գացեր։

ՆՈՒՆԻԿ — Ո՞ւր պիտի երթայ, առաւելն է իրիկուն թըլկանց Մանոյի հետ է։

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ — Մանոյի՞ հետ։

ՆՈՒՆԻԿ — Հա, Մանոյի հետ։ Գրացիները ըսին՝ չհաւատարի. հաքը աչքերովս տեսայ. ականջովս ալ լսեցի։

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ — Ի՞նչ կ'ըսէին, Նունի՛կ։

ՆՈՒՆԻԿ — Մեղուներու ձայնէն շատ բան չիմացայ։ Խաչիկը կ'ըսէր, որ էկեր Չըտըտը ու վեց ըլ որձ ու էդ աղաւնի տաս, կալին քեղի երեք չեքէկ ցորեն կու տամ։

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ (դէմքը աւելի լրջացած) — Ի՞նչ, աղուընի՞ն։

ՆՈՒՆԻԿ — Հա, աղուընի՛կ, աղուընի՛կ, արի՛մա՛րդ. Խաչիկը աղուընիկ խաղցընող կ'ըլլի։

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ — Թորիկ Օվանի՞ն աըզան... ի՞մ աղաս։

ՆՈՒՆԻԿ — Ըսի իրեն, որ երթայ կա-
ւառները շահէ. ինձ ակամօջ շտուաւ.
երեսս պիլէ շնայեցաւ:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ — Մանոյի ճեա ընկեր
ըլլողին խէրը շիայ, Նունի է. Հէլ-
պէթ երեսոյ ըլ չի նայիր, մայր ալ
չի ճանչնար:

ՆՈՒՆԻԿ — Մեր ազան էք աստիքի կի-
սապատին քով ազուրնկատուն պիտի
չինէ:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ — Ի՞նչ կ'ըսես, Նունի՛կ:

ՆՈՒՆԻԿ — Ականջովս լսեցի, արիմա՛րդ,
ականջովս: Հեղ ժըլ տեսայ զթերին
երկինք վերցուցին ու ալ վար շա-
րին: Օ իսէ, ազուրնիկ տեսեր են:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ (կոնակը պատին տալով,
բարձ մը տեղաւորելով կոնակին
տակ) — Էս ազան անէծք պիտի բե-
րէ մեր զլիտան: Ես կը վախեամ,
Նունի՛կ. ազուրնկայ թեւը ասն վը-
րայ անէծք է, անէ՛ծք: Ալ ի՞նչ բա-
նի համար է էս մեր շարչապայան:
Մեր ըխքիար հարով, գուլ ու դա-
գար շունինք: Որո՞ւ համար, Նու-
նի՛կ. հետերնես չպիտի ասնէինք ու:
Իրենց համար է շորն ի՞մ ընկեր,
ծառ կը անկեմ, թարլա կ'առնեմ,
սուար կ'աւելցնեմ: Իրենց համար
է, Նունի՛կ. իրենց համար: Մարդի-
սը որ չըլլի, էս տունը կը փլի, Նու-
նի՛կ. Էնոր փէշերուն վրայ խունկի
հոտ կայ: Էսի ջրտուք է՝ կը վազէ.
Էսի ջրացք է՝ կը հասնի. Էսի լուծք
է, Էսի հունձ է, Էսի կալ ու կուտ
է. բոլորին հասնողը էք Մարդին է:
Էն ազան, Խաչիկն ըլ, մեռքը մոխի-
րը չի թաթխեր: Կարգըուն մեծ աը-
զայ է, հիմա ըլ ելեր ազուրնիկ կը
խաղցնէ: Գեղացիք, դուռ ու դրացի
ի՞նչ պիտի ըսեն, Նունի՛կ: Պիտի ը-
սեն, որ Թորիկ Օվանի ազան ազուր-
նիկ կը խաղցնէ: Էք ինձ համար մեռ-
նիլ է, մեռնի՛լ:

(Վերջին խօսքերուն հետ ստի-
կած է, ու բաւը ուսիմ կը գոր-
նէ, դուրս ելլելու համար):

ՆՈՒՆԻԿ — Ո՛ւր կ'երթաս, արիմա՛րդ,
նոսիր բրգոն մը հաց ծածէ:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ — Երթամ էք կաւառները
շահեմ դամ. վաղը ջրտուքի օր է:
(Դուրս):

(Նունիկ մերս կը մտնէ, խոնքան
դուրս կը բերէ, մաշի սեղանը կը
պատրաստէ սետիրին մոյջել:
Խաչիկ մերս կու գայ, ռուսիմ՝
տախտակներ, կ'աճցնի բեմին աբ
տեղիւնէմ, տամը Խուր, բեմէմ
դուրս. Բիչ վերջ այն կողմէմ
պիտի լուսի սզոցի մայն: Լոյսը
կը պակսի, գրեթէ մթնած է ար-
դէմ: Թորիկ Օվան ետ կը դառ-
նայ. բաւը կը գնէ պատին, կը
մտի սեղանին առջև — ցած,
կլար սեղան — խաչը կը համէ,
բրգոն մը հաց կը մետ բերանը.
Կը լուսի սզոցի մայնը տան Խու-
նէմ. Թորիկ Օվանի երկրորդ
պատուը օդիմ մէջ կը մնայ, ա-
կամք կու տայ մայնիմ կողմը,
պահ մը մտիկ կ'ընէ սզոցի մայ-
նիմ, ապա՝ օգտուելով սզոցի
մայնիմ մէկ դադարէմ):

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ — Խաչի՛կ:

ԽԱՉԻԿ (տան Խունէմ թեմ գալով ու հո-
րը մտնեմալով) — Ի՞նչ կայ, ա-
բա՛ր:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ — Ինչ աըլլի, օգն՛ւլ. Ե՛ք՝
հացի կու գաս, նէ ըլ տան աղայ կ'ըլ-
լիս: Լսեցի թըլկանց Մանոյի ճեա
ընկեր ես եղեր, ազուրնիկ կը խաղ-
ցընես: Սանկ մօտ էկօ, երեսոյ տես-
նեմ. աչքերս շատ չեն գտներ: Ի՛հ,
էս ըխքիար տարիքիս մէջ, է՞դ ըլ
պիտի տեսնայի: (Խաչիկ լուս է):
Եդ ի՞նչ է կը շինես, Խաչի՛կ:

ԽԱՉԻԿ — Ազուրնկատուն:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ — Ափերի՛մ օգն՛ւլ, ափե-
րի՛մ. չես ըլ ամչնար, տահա կ'ըսես
ըլ: Մենք էնդին դատինք, բանինք.
ազան էսդին քունը ծախեր, ազուրն-

կատուն կը շինէ: Էս տարիքիս մէջ կը տեսնես, որ բա՛ւը փեճէս շեմ ձը- դեր: Տուն որ կու գամ՝ մէջքս շեմ կրնար շտկել: Էն աղան՝ Սարգիսն էլ, գիշեր-ցերեկ, շըլիմ ծուր կ'աշ- խատի: Դուն էստեղ աղուրնկատուն կը շինես: Ա՛լ դուն պզտիկ աղայ չես, կարգուուն մեծ աղայ ես, Խա- շի՛կ: Պարսպ տեղ էլիմ աղկան սկ- պապ եղանք, քեզի կին բերինք: Ար- գար Ակոն՝ Քորիկ Օվանի աղան տե- յի քեզի աղկի տուաւ: Չես բեր, որ Խաշիկ աղուրնիկ խողցնող կ'ըլ- լի, կնիկն ի՞նչ ընէ: Մի՛ շիներ, Խա- շի՛կ, եււրուս, ձգէ ուրազը, կոտրէ տախտակներդ: Էդ աղուրնկատունը մի՛ շիներ: Քորիկ Օվանի տան վրայ աղուրնկայ թեւ մի՛ բանար: Քորիկ Օվանի տունը որբատան պէս աւերակ մի՛ դարձներ: Աղուրնկայ թեւը տան վրայ անէծք է, եււրու՛ս, անէ՛ծք: (Պահ մը լռութիւն): Ըսէ տեսնեմ, Մանոնին ի՞նչ բանին հաւատեցար: Մանօ ըսածդ, գեղին երեսէն ինկած անօթիին մէկը, տուն-տեղ չունի, արինն երեսը ջանք կ'օլորի: Անցեալ տարի, էն մեր պազլիմ շքիւը կոտ- րող Մանոն էր:

ԽԱՍԻՆ.— Մանոն էդ բանէն չուր չունի, արա՛ր:

ՔՈՐԻԿ ՕՎԱՆ.— Մանոն ի՞նչ բանի լուր չունի, որ էդ բանին ըլ չունենայ, Խաշի՛կ: Էջուկնեց Հարսին խոտի ծը- րարք խղտո՞ղն ալ Մանոն չէր: Ա- դաճանին տունը կրակ ձգո՞ղն ալ Մա- նոն չէր: Ա՛լ ո՞րը ըսեմ. բուրք գե- ղացիներուն բերնին ծածոց է դար- ձներ:

(Լռութիւն)

ՔՈՐԻԿ ՕՎԱՆ (հաշիւով իր չիպուխը).— Էնդին Աղաճանը կայ, Խաշի՛կ: Կնի- կը ասդին կ'իյնայ, անդին կ'իյնայ, հաց բանալ կ'երթայ, քաղահանք կ'ը- նէ, որ տուն ապրեցնէ: Ինքն ալ ը- սես, շ'ամշնար, տահա աղուրնիկնե- րէն վաղ չի գար: Կիմէ անօթի, կիմէ անօթի. տան մէջ խէր-պէրէքէթ շը- կայ: Աղուրնիկ պահողին տունը ի՞նչ

պէրէքէթ. Ըլլի: Աղուրնիկ ըսածդ վանքերու մէջ կ'ապրի, սրբանոցի քարերուն վրայ կը թառի: Լաւ խաշ է, նաշխուն խաշ է. Ճախաթ տան մէջ պահելը անէծք է, եււրո՛ւս, անէ՛ծք:

(Քորիկ Օվան կը փոխէ իր չի- պուխի բուրբուրը, կը վառէ կրկիմ):

ՔՈՐԻԿ ՕՎԱՆ.— Էդ աղբուրի քով ծակ քարը գիտե՛ս, Խաշի՛կ: Ատենօք էդ տեղ կ'ըլկըլ Չաքարին աղուրնկա- տունն էր: Աղբուրը առաջ, էս եկե- դեցիին քով կը վազէր: Էստե՛ք իմ պա- պուս եւ իմ օրով եղած բաներ են: Աղորձած հողի պապս կը պատմէր, որ տարի մը էդ աղուրնիկները կը շտանան, ես բո՛ւմ հազար, դուն ըսէ երկու հազար խոնտա աղուրնիկ. որ երկինք թռէին, արեւը կը խափա- նէին. դէրը անոնց շուքով կը լինար: Էն տարին, գաշտին վրայ պուս մ'անձրեւ չի կաթիր: Այլալի չափ ամպ մը որ տեսնային, գիւղացիները իրենց աչքերը երկինք կը անկէին: Էդ պղտիկ ամպը կու գար գեղին վը- րայէն ու Հազար Պապայի լեռան կողմը կ'անցնէր: Հսկում, մատաղ լմնաց որ չընէին: Էն տարին, Էգի- մնրը շորցան, թարլանները ճեղքը- ւեցան: Ես երազի պէս կը յիշեմ. կ'ընէին, որ կ'ըլկըլ Չաքարի աղուր- նիկներուն առատութիւնն էր, որ գե- ղին մէջ սով ձգեց: Ո՞վ գիտէ: (Պահ մը լռութիւն): Ես տեսայ կ'ըլկըլ Չա- քարը: Էն պիշիմ մարդ կեանքիս մէջ տեսած չեմ: Անոր գլխին մազերը ուղտի մազերու պէս էին. պոյը բար- ձրը. աչքեր մ'ունէր, էս բերը սոխ- Ուսի մէջ խոնտիլի պէս կախ էր: Գեղին մէջ կապոյտ աչք չկար. մի- նակ կ'ըլկըլ Չաքարի աչքերն էին կա- պոյտ: Կ'ընէին, որ մօթին մէջ կ'ըր- նար տեսնել. ո՞վ գիտէ: Ճախաթ Մուրք Սարգսի լեռնէն աղուրնիկ մ'որ անցնէր, մէկ անգամ նայելով

կրնոր բռնել, թէ ի՞նչ պիտի ազուր-
նիկ է՝ ս՞րձ է, թէ էդ, նախա՞ն է,
թէ մրէզ (Լաուփիւն), Կրլիլը Զա-
բարի ազուրնիկներուն մէջ ան տնը
ինկաւ չոտ: Էդ խուշերը, խառնա
խառնաի վրայ թափեցան: Առաւ
ժըն ալ ելանք, որ Կրլիլը Զաբարբ
ազուրնեան ասնիքէն, իր գոտիով
ինքզինքը կտնի է: Լա, Խաչի՛կ,
ազուրնիկ խաղցնողին վախճանը էդ-
պէս է: Ես բաները կը պատմեմ քեզի,
որ լաւ հասկնաս, վաղ գաս սնու-
տայէն: Մանոյին ույմիշ մըրլիլը-
ն Ե՛կ՛ մէր-պապ ունի, Ե՛կ՛ կնիկ:
Ճախաթ դուն չէ՛մ ծնազ ունիս,
չէ՛մ կնիկ: Էս որս Թորիկ Օվանին
աունը խանէպէն, արտով ու մեծկա-
տնով ասուն է: Ի՛նչ, որ չաշխատինք
ս՞րանդէն էս քառասն փեթակ մե-
ղունները, էս ամբարներով ու փե-
թակներով ցորենը, ս՞րանդէն էս
նախոր մի ասուարը: (Լաուփիւն): Ես
իլէն մէրդ ընթացքեր ենք: Էսոր
կանք, վաղը չկանք: Էս աունը գար-
ձընողը գուք պիտի ըլլիք. Էս վաղը

ափ մը հող կ'ըլլիմ, Փախաթ կ'ու-
զեմ, որ Թորիկ Օվանին աունը ալ
աւելի չէննայ, երկու աղբարներդ
ուէր սիրով ապրիք. մեր պապերուն
պէս, գաւաթ աշխատանքի նուիր-
ւիք: Ի՛նչ, էս պիտիմ որ բունս, աղ-
ւրնիկ որ պահես, Մանոյի հետ որ
ըլլես, եղբորդ՝ Սարգիսին հետ խելք
խելքի, կոնակ կոնակի որ լասս, էս
աունը էսպէս շէն չի մտար, Խաչի՛կ:
Օր մը էս ասն ճրագը կը մարի, ա-
ղային հողը կ'երթայ մեռքերնու.
Այն ասն վա՛յ իմ գլխին, վա՛յ իմ
գերեզմանին

(Պահ մը լաուփիւն: Լաուս կըը-
կըտոց, շամ Խաչոց, Խեռաւոր ա-
ֆագաղի մը ձայնը):

Թորիկ Օվան.— Խաչի՛կ, Խաչուս, կը
ձգես էդ ուրագդ ու խզողդ: Վաղը
բա՛ւը կ'առնես ու կ'երթաս էդ Կար-
մունի թարլին մուկերը կը հանես:
Էսոր տեսայ, ամբողջ թաւան փոր-
փոր են ըրեր: Դէ՛, հիմա ել պառ-
կէ, կէպիւնին տեցաւ:

(ՎԱՐԱԳՈՅՐ)

ԵՐԿՐՈՐԿ ԱՐԱՐ

Արար երկրորդը ունի երեք տն-
ատան, առաջինն ու վերջինը
տեղի կ'ունենան Թորիկ Օվա-
նեց գիւղական տան ներսը.

երկրորդը՝ ցորենի շնի մը ճով,
նմուտած արտի մը մէջ, գիւղէն
դուրս:

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Թորիկ Օվանի տան ներսը, գիւ-
ղական սննեակ մը, իր դարաը-
ւած անկողիններով, ռէտիքնե-

րով, կլոր սեղանով, կուժ ու
կուլայով, ծրագկայով ու ծրա-
գով:

Թորիկ Օվան կոնակը տուած
սիւնի մը, ճատած միմտէրին,
մտահագ՝ կը ծխէ իր չիպուխը:
Նաւնիկ տամ գործի վրայ է, ան-
կողմնորդ կը հաւաքէ, կամ կը
դարսէ: Կը մայի Թորիկ Օվանի
մտածկոտ երեսընթիւն, կը շա-
րունակէ գործը:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ.— Ի՞նչ, տնայէ՛ն, մինչեւ
հիմա դատանք-բանտնք, ի՞նչ շահե-
ցանք: Մէջքդ գետինն է կպեր, կինէ
կ'աշխատիր:

ՆՈՒՆԻԿ.— Ի՞նչ է, արիմա՛րդ, երեսիդ
գոյնն ինչո՞ւ է փոխուեր. հիւանդ
ես:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ.— Ափ մը հող, նու՛նի՛կ,
ափ մը հո՛ղ... էս օրերո՞ւն պիտի
մնայինք: Աստուած էդ ափ մի հողը
ինչո՞ւ կ'ուշացնէ: Էլիմ Կիլիմ մէջ
մեզ պէս մէկ մըլ կա՞յ: Հէ՛յ կիտի
Թորիկ Օվան, տէրա, աշխատանք,
զաւակ մեծցուր, սո՞նք...

ՆՈՒՆԻԿ.— Ի՞նչ կայ, արիմա՛րդ, ի՞նչ
է եղեր:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ.— Անցած օր, Կարուկնց
էդուն թուփերը քաշեր են. գեղացիք
կը խօսան, թէ Մանոն է ընողը. Մա-
նոյի հետ մեր ազու տնունն ըլ կու-
տան, թէ Խաչիկն ըլ հետն է եղեր:
Վերջացաւ, նունի՛կ, վերջացաւ, էս
տունը կը փլի. Խաչիկը Մանոյի ու
Աղաճանի նման ազուրնիկ խաղցնոց
է գարձեր. վերջացա՛ւ: Գեղացիները
երես կը դարձնեն ինձմէ, նունի՛կ,
երես կը դարձնեն: Երէկ, Ձեթ քա-
րին քով, խնամի Ակորին Հանգիպե-
ցայ: Ուրիշ անգամ որ ըլլար, ճը-
ղարայ կը հրամայէր, հաւ-քէ՛ք կը
հարցնէր, գինի խմել կը հրաւի-
րէր... երէկ չոր բարեւ մը տուաւ
մինակ, կը դժուարանար խօսել, լեզ-
ւին տակ բան մը կար, բսելիք մը
ունէր, ու չըսաւ: (Պան մը լռու-
քիւմ) Ի՛նչ, իրաւունք ունի խնամի
Ակոն, իրաւունք ունի... մեր ազան
գնաց սեպկալ եղաւ էնոր ազլկան,

տուն հարս բերաւ, կինէ մարդ չե-
ղաւ, խելքն ու միտքը ազուրնիկնե-
րուն ու Մանոյին է. տունն ալ մեծ
հարսին հետ խօսք-կու... հէլպէ՛թ
ափ նեղուի խնամի Ակոն:

ՆՈՒՆԻԿ.— Ինչ մեղքս պահեմ, արի-
մա՛րդ, էդ միւս, մեծ հարսին շը-
խընն ալ չըլտըլ չէ: Խօսք շարաթ մըն
է, մատը մատին վրայ չի դնիր: Փոշ-
ման եղայ, Թոնիկիս ըսի, թէ հոր-
թերը էգին տար: Էդ բսելս դիտցայ-
հեղ մըլ տեսայ, պի՛նէկի պէս վրաս
թառաւ: Ի՞նչ ըսէ աղէկ. «Ես չեմ
ուզեր, որ պակիս բան ըսես: Էրիկս
կ'աշխատի՝ հերիք չէ, զաւա՛կս ըլ
աշխատի: Աղա տղադ՝ Խաչիկը տէ-
ներն է, կանչէ, որ տանէ: Ա՛լ հերիք
եղաւ, ես էն էրկան ինչ ըսեմ,
որ գլխը ծակը՝ կ'աշխատի. էնդի
Խաչիկն ըլ Մանոյին հետ գիշեր-ցե-
րեկ ազուրնիկ խաղցնէ»:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ.— Ի՛նչ, ի՞նչ ըսեմ, նու-
նի՛կ. մարդու երես չեմ կրնար նա-
յիլ: Մեծ հարսին լեղուն հէլպէ՛թ եր-
կար կ'ըլլի: Աստուած էդ տղուն:
Սարգիսին Համբերանքը չհատցնէ:
Ի՛նչ, որ Սարգիսը երես դարձնէ, Թո-
րիկ Օվանի տունը կը փլի, նունի՛կ:
Ես ա՛լ հին Օվանը չեմ. էս օր ըր-
տուքը գորով զլխեցի: Ես ինտո՞ր ը-
նիմ, նունի՛կ. բսելն, խրատելն
բերանս մազ բուսաւ: Օղուս չ'ընէր.
մարդը ասրուեր է Մանոյին: Աստ-
ուած Սարգիսին Համբերանքին պա-
կասութիւն չտայ... Բայց Սարգիսին
ալ հալը հալ չէ. փոխուեր է, փոխ-
ւե՛ր...

ՆՈՒՆԻԿ.— Ի՞նչ չիփոխուի, արիմա՛րդ.
էդ մեծ հարսը որ կայ... կ'ըսես օձը
գլխէն է խածեր: Ամէն հեղ, որ Սար-
գիսը թարլէն կու պայ, կը սկսի քը-
փըսը: Խօսք ըլ, պուպուկ-պուպուկ
կիրականաւոր լսթերը հագեր նստեր
էր: Խո՛րիկ Գէւորի տո՛ւնն էր տեսեր...
Հիմա ըլ վերա-վերա մէրանցը կը
վազէ. տան եղած բարին, գինին
պապուն, Խո՛րիկ Գէւորի փորը կը լե-
ցընէ: Փառք Աստծու, երեք շարաթ

է, որ Խորիկ Գէւորթի սոգը ժեր գունէն է կարեր:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ.— Էդ լուսնան չէ, Նուսնիկ: Խորիկ Գէւորթի սոգը ժեր գունէն ու զինիէն վաղ անցնող չէր: Կ'երեւայ մէջերին խոտ է դարձեր: Ես բաժինքէ կը վախեամ, կ'իկ, բաժինքէ:

ՆՈՐԻԿ.— Էդ հարսը, անցեալ օր շտակէ շտակ արածինք կ'ուզեմ կը պառար: Ես չեղի ըրի, արիմարդ, որ էն սարխոյ Խորիկ Գէւորթի աղջիկը Սարգիսին համար կ'ին չէ: Էս օր դայ, վաղը բաժինք կը մտէ:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ.— Հարսն ի՞նչ ընէ, Նուսնիկ. օտարի աղջիկ է, հարս չէ սունն ի՞նչ կ'ըլլի: Բաժինք օր ըլլի, սէպէ՛պը էդ աղան է, աղուընիկներն են, Նուսնիկ, աղուընիկները:

(Կ'ելլէ սափ):

ՆՈՐԻԿ.— Ո՛ր, արիմարդ:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ.— Երթամ կալը, տեսնեմ ի՞նչ ըրին: Սարգիսը ջրասօր էր գոցեր զիւրը, կալը պառկողն ըլ ճաշիկն էր. երթամ տեսնեմ ի՞նչ ըրին, էդ ցորենը ե՛րբ պիտի տուն նետուի:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԿ

(Վարագոյր. կամ մութ: Տեսարանը արագօրէն պտտէ քոյսի, ու մերկայացնէ դաշտերուն մէջ կայադաշտ մը, ցորենի չէն մը մէկ կողմը, որուն աջին պակաս է հաշիկ, խոտի շիւղ մը բերնին մէջ, աչխար՝ գոց: Բեմին յօրքը, ձախ կողմը, եռաժանիմ մեքը՝ կ'աշխատի Մարտայ: Բեմի ձախն կը մտնէ Սարգիս, բառը՝ աւին):

ՍԱՐԳԻՍ.— Բարի լոյս, Մարտայ: ՄԱՐՍՈՒՊ.— Աստու բարին, Սարգիս: ՍԱՐԳԻՍ (կը մտնան ցորենի դէզին, կը

մկատէ, որ մէկ կողմը չտած է, ու փայտէ բիւրով, որոնք դէզին մտնան են, աշխատած են հաւասարեցնել դէզը: Յայտնի է, որ զազըւած է դէզն: Սարգիսի մտանոց նայուածքին ու կատարած քննութեան մէջ կը գզացուի գոզուքիւնը: Մարտայ քիչ մը կը մտնան Սարգիսի):

ՍԱՐԳԻՍ (բարկացած).— Ես Խաչիկ: ԽԱՉԻԿ (հուճէն մօր արթննալ մտացնելով ու տեղէն ցատկելով).— Ի՞նչ է, արա՛ր:

ՍԱՐԳԻՍ.— Էս ցորենին մեքը դարձուած է:

ԽԱՉԻԿ (մտնանալով երթօր).— Հը՛,

ՍԱՐԳԻՍ.— Էս չէճին մեքը դարձուած է, կ'ըսեմ, գողցեր են, ցորեն են գողցեր:

ԽԱՉԻԿ.— Ես հոս էի, զիչ տաւ աչքս խփեցի: Ո՛վ պիտի գողանայ:

ՍԱՐԳԻՍ.— Զգիտեմ՝ չէճը արուած է:

ԽԱՉԻԿ.— Հո՛վ...

ՍԱՐԳԻՍ.— Հո՛վ բան չէ, Խաչիկ:

ՄԱՐՍՈՒՊ (այս խօսակցութեան ատեն Մարտայ շարունակ կաշիկիմ երեսը կը նայի).— Որչա՛փ են տարեր, Սարգի՛ս: (Խաչիկ կամաց-կամաց, դէզին չորս կողմը դառնալու պէս քայլելով, դէզին առջեւէն անցնելով, բեմէն դուրս կը ազատի):

ՍԱՐԳԻՍ.— Ես ինչ գիտեմ, Մարտայ... չա՛րս... Հի՛նգ չէրէկ. պէլիլ էւել:

ՄԱՐՍՈՒՊ.— Ի՛նչ, հոգ մի ընե՛ր, Սարգի՛ս. եղածը եղած է:

ՍԱՐԳԻՍ.— Ինչ հոգ ընեմ, Մարտայ: մէկ զիւր մի եկաւ կալ պառկաւ՝ եկան ցորենը գողցան: Ամա ինք չէ աշխատեր, որ յարգը գիտեայ, եղածը պահել գիտեայ: Ալ սմէն բանի չափ ու սահման կայ: Հի՛մա ըլ ելաւ դնաց, ով գիտէ՛ մ'եր: Զ'ըսեր, թէ կալ պիտի խառնուի, խուրձ պիտի թափուի, լոսա պիտի նետուի: Էնի կ'ինէ՛ Մանոյին ու աղուընիկներուն դնաց: Գուն չես գիտեր էս տղան ըրածը, Մարտայ. ալ հոգիս

եկաւ, թէ՛ն՝ բերանս հասաւ: Հէլպէթ, սան պէրէզէթը որ փախի, գո՛ղն ըլ կը տանէ, հո՛վն ըլ կը տանէ: Խէրով բարով սա կալը սունն ձգէինք...

ՄԱՐՍՈՒԳ (Չիչ մը դանգազօրէն, վարածով) — Ես քնդի բան մը ըսի՞մ, Սարգի՛ս... էդ ցորենը զոզցողը Խաչիկն ու Մանոն էին:

ՍԱՐԳԻՍ (զուգարիտաւած, ցնցուած) — Ինչպէ՞ս:

ՄԱՐՍՈՒԳ — Հա, Համբերէ որ պատմիմ: Դուն որ հասեղէն գաջիբ (ծըխախտախտ տապրակը մէջքէն քաշելով ու շիպուխը լեցնելով), գուն որ էսանդէն գաջիբ, ես արթուն էի (ծըխախտախտ տապրակը անքէն ցտիիմ մէջ տեղաւարելով, սնուքը քանի մը անգամ գտիիմ տանելով, ապահով ըլլալու համար, որ տապրակը տեղն է), գուն որ հասեղէն գաջիբ...

ՍԱՐԳԻՍ (անհամբեր) — Դե՛հ, Մարսո՛ւպ, հոգի մի հաներ, պատմէ տեսնենք:

ՄԱՐՍՈՒԳ — Համբերէ, Համբերէ որ պատմեմ: Դուն որ հասեղէն գաջիբ, ես արթուն էի: Դուն չէր գար: Ինքնիբնիս կը մտածէի, թէ ինչքան հասա կազով են կախուներ էս սասուղիբը, որ հաս մըն ու վար չիջար: Հնդ մըլ տեսայ, էդ մեր կազէն ըրտիբ մը փրթաւ: Ըսի, որ էս Խաչիկին հետ ո՞վ է գիշերով: Մտակցայ: Տեսայ, որ Մանոն ու Խաչիկը, հը, ճի՛շդ հասեղ, չէ՛նին քով, ազուէսի պիւնի պղպեղ-նասեր էին: Մանոն կը հարցնէր. «Տ՛րր կու գայ», «էն մինչեւ սուտու չի գար» կը խօսէր Խաչիկ ու ցորենը չուարներուն մէջ կը լեցնէին: Մեն չուարներ էին: Էս Մանոն, երեք անգամ շալակը նստեց, զնդը զնայ ու եկաւ: Հը՛մը հը՛մը չէինք չէրէկ կար: Պուզէի մէն սալ: Ի՛հ, որ կալին տէրը, Խաչիկը հոն է, ես ի՛նչ մէն սայի:

ՍԱՐԳԻՍ — Մարսո՛ւպ, գուն տեսմ՞ր էս բուրբը:

ՄԱՐՍՈՒԳ — Տեսայ, Սարգի՛ս, էս աչքովս տեսայ: Լուարնիկային լայնի

տակ շատ աղէկ տեսայ: Մանոն ու Խաչիկն էին:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ (որ անը կասած էր դաշու) — Ի՛նչ է եղեր, Սարգի՛ս, ի՛նչ կայ:

ՄԱՐՍՈՒԳ — Ձէլէն ցորեն են զոզցեր: **ՍԱՐԳԻՍ** — Հէլպէթ կը զոզան, ինչո՞ւ չգողան: Ազուէսը հարունէն ներս որ ընես...

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ (չէնին չորս կազը, դառնալէ ետք) — Հա, զոզցուած է: Ի՛նչ ազուէս, ի՛նչ հարուն, Սարգի՛ս:

ՍԱՐԳԻՍ — Այ ո՞վ պիտ ըլլի, Մանոն ու Խաչիկը:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ — Խաչիկը, իր կալին մէջ...

ՍԱՐԳԻՍ — Իր կալին մէջ, իր սան մէջ. Բամպակ Մարսուպն է տեսեր: Էդ էր պակաս: Այ ի՛նչ մնաց որ չընէր: Մանոնին հետ ընկեր ըլլողին, աղւարնիկ խաղանդին հալը էդ է, է՛դ, **ԹՈՐԻԿ ՕՎԱՆ** — Փնտաս գուն, այ փո՛ւճ գաւակ:

ՍԱՐԳԻՍ (պահ մը լռութեան ետք) — Արա՛ր, հսպէս սուն չ'ըլլիբ, արա՛ր, էս ազուն սէպէպէն՝ նէ՛ ուսածնիս ուսած է, նէ ըլ խմածնիս խմած: Դուն ըլ գիտես, որ սան մէջ կուրը անպակաս է: Թորիկ Օվանին սունը չէն սուն էր, սան մէջ սիրութիւն կար, մեծի ու պղտիկի խօսք կար, կարգ ու աշխատանք կար: Էն սան անցին, որ ցորեն կը զոզեայ, էն սան մէջ խէր-պէրէզէթ չի մնար, արա՛ր, չի՛ մնար:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ — Ես ինտոր ընիմ, Խաչիկը: Ինչքան խօսեցայ, կի՛նէ՛՛ ազուս չըբաւ: Էդ Մանոնն ու աղուընիկներէն վաղ չիբցանք բերել:

ՍԱՐԳԻՍ — Բամբի՛նք կ'ուզեմ, արա՛ր, բամբի՛նք. ես ըլ երթամ իմ գաւակներով, հալը աշխատանքովս հալը հայ ուսեմ: Կը տեսնես արդէն, Երտան մէրանցը սունէն հարին ի՛ գար: Էս սուն չէ, զտիբ է, գո՛րիք:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԻ

(Վարագոյր. արագօրէն վերադառնալու համար առաջին տեսարանի տեղադրումներուն, Քարիկ Օվաննեց տան մերսի կողմը): Բնմի՞ն աջ ու ձախ կողմերը հաստատած են տան կան կարասիներ, բարձր, անկողնիներ, երկրագործական գործիքներ, մանգաղ, խոփ, պտուկ, կարաս, սալմասաց գիրք: Բնմի՞ն սեղանը կը մնան դեռ քանի մը շիշ, պտուկ ու կարաս: Քարիկ Օվաննեցն է սեղանը՝ մըն կողմը՝ Բամպակ Մարտուպ, գեղացիներ, Զատուրը, Երէցփոխը, վարժապետը, Սարգիսը, Խաչիկը: Կիներն ալ բաժնուած են երկուքի, մէկ կողմը Սարգիսի կիներ՝ Եղանն եւ Մնուշ, միւս կողմը Խաչիկը, Կուրիկ, Սոնան: Խաչիկ Գեւորն ուսի վրայ է, ուսի վրայ է եւ վարժապետը, որ սեղանի իրերէն կը վերցնէ հետըզհետէ մաս-մաս եւ կը տեղադրէ աջ ու ձախ կողմը: Խաչիկ Գեւորն խմած է:

Քարիկ Օվանն (լուս, աչքերը տեսնած գետին, կը ծխէ):

ՔԱՀԱՆԱՆ — Հոգ մի ընե՛ր, Օվանն. Աստուած մե՛ծ է: Ի՛նչ, ալ ասորիքդ առե՛ր եւ ինձի պէս: Աստուած զեղի ու Նունիկին բարի մահ մը տար...

Քարիկ Օվանն — Էդ լաւ ըսիր, տէր պա՛պ. բարի մահ մը, որ էս բաները չտեսնայի. էս տունին քանդուիլը չտեսնայի, Տէր Քաթիկ, չտեսնայի:

ՔԱՀԱՆԱՆ — Ի՛նչ, ի՛նչ ընես, օրհնա՛ծ. Աստուած զեղ ըլ ի՞նչ պէ՛տ խղափք է ըրեր: Աստուծոյ ըսածը կ'ըլլի: Աստուծոյ Նունիկին հրամանին տերեւը ոչ չարժիցեն: Ի՞նչ ըսիր, վարժապետ:

ՎԱՐՃԱՊԵՏ — Ճիշդ է, տէր հայր:

ՋԱՏՈՒՐ — Լսեցի՞նք ձեր ազային հողը Մարթո Ղուկասը կ'առնէ, ճի՛շդ է: **Քարիկ Օվանն** — Ի՛նչ, ո՞վ պիտի աշխատի, Աստու՛ւր. Քարիկ Օվանն չկայ, Քարիկ Օվաննի տունը աղուընկատուն է եղեր, աղուընկատուն:

ՔԱՀԱՆԱՆ — Ես ձեզի բան մը ըսե՛մ. աղուընկի ըսածդ տան մէջ պակնը լաւ բան չէ: Մե՛նք՝ մահկանացուներս, էստե՛ղ ձեռք զպցնելու տեսարան ենք: Երկնքի սուրբ թաշտաններն են, օրհնածներ. Հոգին սուրբ աղուընկերպ իջեալ է վերայ կուսոյ. Ի՞նչ ըսիր, վարժապետ:

ՎԱՐՃԱՊԵՏ — Ճիշդ է, տէր պապ:

ՋԱՏՈՒՐ — Քարիկ Օվանն, դուք ու Նունիկ պանին որո՞ւ տուն պիտի մտաք:

Քարիկ Օվանն — Ձե՛ն տեսներ, Զատու՛ւր, որ բաժինք է, բաժինք. Քարիկ Օվաննի տունն է կը բաժնեն, կը բաժնեն... Սարգիսը կ'ուզէ, որ ես ու մայրը իրենցը մտնեք. բայց Նունիկ պիտի մտայ Խաչիկին, ես պիտի երթամ Սարգիսին մտնալ: (Երկինք մայնալ) Ա՛խ, զուրպանդ ըլլի՛մ, Աստուած, ախ մը հոգ, ախ մը հոգ...

ՎԱՐՃԱՊԵՏ (իր բաժանման աշխատանքին սեղ հասած է օդի մեծ շիշին. շիշը ձեռք բռնած) — Տէր պապ, էս շիշը Խաչիկինց բաժնին մէջ պիտի դնեմ:

ՔԱՀԱՆԱՆ — Հա, օրհնած, հա. արդար է:

ԽՈՒՆԻ ԳԵՒՕ (իր կեցած տեղէն, սիւնի մը տակէն) — Ձէ, չեղաւ. արդարու թիւն չէ: Էդ շիշը լեցուն օդի է, իմ աղջկանս բաժնին մէջ պէտք է զըրբի: (Ներկայները կը խնայան) Ձէ, չեղաւ, չեղաւ:

ՔԱՀԱՆԱՆ (ստիկ կ'իլլէ) — Ի՛նչ, էս ըլ վերջացաւ. տաւար, արտեր, հիմա ըլ տան առարկաներ, արդարու թեամբ բաժնեցինք. խէրով ըլլայ, Տէր ընդ ձեզ:

(ՎԱՐՃԱՊԵՏ)

ԵՐՐՈՐԿ ԱՐԱՐ

Տեսարանը կը ներկայացնէ թարիկ Օվաննոց տունը, առաջին արարի տեսարանն է. միայն թէ, տանիքին վրայ շինուած ազաննետուն մը կայ, տանիքին կընթացուած է կարան մը, ուրկէ կարելի է վեր ելլել, ու տանիքին վրայ կանգնել, քայլի: Տեսարանէն մտա մը տանիքին վրայ տեղի պիտի ունենայ: Տան առջեւը, տանը ետեւի պատին կըքնած կայ ման տախտակէ բախտ, լը: Լոյսերը յամախտակի պիտի մարին ու վառին, դէպքերուն քաւալուսը կարծեալ տալու համար արագորէն: Իրաքանջիւր լոյսի մարումէն ետք, դերակատարները իրենց տեղը պիտի փոխեն քիչ մը, յայտն տեսարանին համար, երբայով քիչ մը աջ, կամ ձախ, կամ գալով դէպի տունը, կամ հեռանալով տունէն, մայած բուած խօսքերուն, կամ քննակամ ու լոյսի յարմարութեանց:

ՆՈՒՆԻԿ (նստած է տան առջեւ: Խորէն կու գայ թորիկ Օվան. ծերացած է, գաւազանով է. կը մտնայ կնոջ, որ մայնպէս ծերացած է: Կանիկ ուսքի կ'ըլլէ, կը բերէ ամուսինը քայտին, կը նստեցնէ, ինքն ալ ինչ կը նստի, ու կարտով կը մայի մարդուն ներկայած մագերուն):

ՆՈՒՆԻԿ. — Երէկ ժամ եկած չէիր, արիւմտը. աչքս ճամբան մնաց. նայեցայ, նայեցայ չեկար:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ. — Երէկ զիջ մը դուրս կը ցաւէր: Ձեռ ըսեր մէջ մը երթամ քովը. էդ ժարդը մտա՞նք է մնաց:

ՆՈՒՆԻԿ. — Ի՞նչ մեղքս պահեմ, ես էդ ճակի Գէւորջի աղջկան նրաք չեմ ուզեր տեսնել:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ. — Ինչո՞ր են շարքը, ինչո՞ր չեմ:

ՆՈՒՆԻԿ. — Շարքը գուակ բերելու ժամ է: Պաշտին ըլ կ'ընէ կնոջն: Հիմա տունը վրան ինկաւ, կ'ընէ զիջ մը կ'աշխատի: Գիտես ես, ըսէ՛ր հարկութիւն կ'ընէ, որ տունէն չհեռանայ. աչքը ազուրնիկներուն ըլլայ:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ. — Ա՛խ, էդ Մանոն, Մանոն:

ՆՈՒՆԻԿ. — Լուրջո՞ւ չիմա Մանոյին հետ ալ չեն խօսիր, գտուեր են:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ. — Իրա՞ւ կ'ըրես, նուրի՛կ:

ՆՈՒՆԻԿ. — Մեր բաժինքն ասդին Մանոն մեր տունը ուղջ դրած չունի:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ. — Ի՛նչ, փա՛ռք Աստուծոյ: Անանկ է նը Պաշտին խելքը դուրսը ժողկեր է: Ախր, Թորիկ Օվանին ազան է, նուրի՛կ:

(Կը մթննայ: Լոյսը վառելուն՝ իտիկ տանիքին վրայ է, մայրը տան առջեւ, ամբի մէջ ցարեն կը մտքը):

ՆՈՒՆԻԿ (ձեռքը նակարն դրած՝ երկնքը կը դիտէ). — Կի՛նէ Ծիրանը թոյնուց, կը տեսնա՞ս, Մարէ՛:

ՆՈՒՆԻԿ (վարէն). — Ի՞նչ է, Պաշտին, ի՞նչ կայ:

ՆՈՒՆԻԿ. — Ա՛խն անգամ, որ ես կապուտիկը թոյնեմ, Մանոն ըլ էն կողմէն Ծիրանը կը թոյնէ, որ գայ, խառնելի իմ ազանիկներուս, պէլիլի Կապուտիկը հո իր ազուրնոցը տանի:

ՆՈՒՆԻԿ. — Հա, Պաշտին, հա. ի՛նչիր, ետուրուս, ի՛նչիր տանիքէն. եկուր գործիդ նայէ. եկուր առէ՛ր նրդ:

(Կը մթննայ: Մութին մէջ նուրիկ բնէն դուրս կ'ըլլէ. Պաշտին կ'ընէ տանիքէն ու կ'անցնի քննին ձախ անկիւնը, խորքը, ուր իր դէմ կու գայ կանգնելու Մանոն: Լոյսը բացուելուն՝ դէմ

դէմի կանգնած են Մանն ու
Խաչնն) :

ԽԱՉԻԿ.— Մանն՝ :

ՄԱՆՆ.— Ի՞նչ է, Խաչիկ :

ԽԱՉԻԿ.— Հերիք է էս քու ընկերքը,
Մանն՝. ես քեզի ըսեմ եմ, որ էդ Մի-
րանը Կապուտիկին ետին մի թոցը-
հեր :

ՄԱՆՆ.— Ի՞նչ ըսել կ'ուզես, Խաչիկ
(ձայնը չոր ու խիտ) : Աշխարհ որ
դէմ կայի, կրնէ՛ս ես էդ Միրանը կը
թոցենեմ, Կապուտիկին ըլ իմն է, Խա-
չիկ, ի՞մը :

ԽԱՉԻԿ.— Ի՞նչ կը գրուցես, Մանն՝. ես
էդ Կապուտիկին համար զտալէն եր-
կու չէրէ՛կ ցորեն եմ տուեր :

ՄԱՆՆ.— Յորինձորն չեմ գիտեր, Խա-
չիկ. Կապուտիկը ի՞մն է, ի՞մ ազու-
նիկներէս վաղ չի գար : Թէ որ կ'ու-
զես, ես քեզի Կապուտիկին տեղ ու-
րիչ ազուրեիկ կու տամ :

ԽԱՉԻԿ.— Հէ՛յ, Մանն՝, ես Ազանանը
չեմ, գիտե՛ս, ինձի Խաչիկ կ'ըսեն.
Կապուտիկը ա՛ի տա՛ս թէ չէ...

ՄԱՆՆ.— Ինձ ըլ Մանն կ'ըսեն, Թըլկոնց
Մանն. Կապուտիկը ի՞մն է, ուր կ'ու-
զես հոն գնա՛լ :

(Կը մքմայ : Մուքիմ մէջ բե-
մեմ դուրս կ'ելլէ Մանն. Խաչիկ
կ'անցնի բնին գրեթէ մէջտեղը.
Նունիկ քախտին մտած է, գու-
նաւոր քիչերու կապ մը քիւն-
բում անցուցած. Խաչիկի ձեռքն
ալ գունաւոր քիչերու կապ մը
կայ. լոյսը կը վառի. երկուքն
ալ աշխատելու վրայ են) :

ԽԱՉԻԿ (գլուխը վեր կ'առնէ, երկիմք կը
նայի, գունաւոր քիչերը մօրը կու-
տայ ու կը վազէ դէպի տանիքի ելա-
րանը, դէպի տանիք) :

ՆՈՒՆԻԿ.— Ո՛ւր, Խաչիկ, ո՛ւր կ'եր-
թաս :

ԽԱՉԻԿ.— Մանն ազուրեիկները թոցու-
ցեր է, Կապուտիկն ու Միրանն ալ
մէջերն են : Ի՞մ ազանիներս ա՛ի

թոցենեմ, պէ՛տի Կապուտիկը ես կու-
գայ : (Ազուրեմցի դուռը բանալու
շարժում, դուռը ազուրեմցի ետեւի
կողմը կը համարուի, ժողովուրդէն
անտեսանելի. Խաչիկ քայլանքը
էշելու շարժում մը կ'ընէ. կը լսուի
քայլանքի քիւնրու քափափարու-
մի ձայն. Խաչիկ նայուածքով կը հե-
տեւի անոց վեր բարձրացումի շար-
ժումին, իր նայուածքովը այդ
բարձրացումի սպաւորութիւնը տա-
լով. ապա կը խօսի, ընդհատ ընդ-
հատ) : Հա, հա՛ն. խառնուցան ի-
րարու. Կապուտիկն ու Միրանը ի՞մ
ազուրեիկներու հետ կը գտանան հա
կը գտանան. մէկ տեղ են, մէկ տեղ.
տակա չբանուցան : Մարէ՛, մա-
րէ՛, յաջողեցայ, յաջողեցայ :

ՆՈՒՆԻԿ.— Ի՞նչ կայ, Խաչիկ, Ի՞նչ
յաջողեցար :

ԽԱՉԻԿ.— Կու գո՛յ, Կապուտիկը ես
կու գայ. հէ՛մ ըլ Մաննի էն ազուրե
ազուրեիկը, Միրանը հետը կը բերէ :

(Մուք. Նունիկ բնեմ դուրս
կ'ելլէ. Խաչիկ վար կ'իջնէ. կը
նստի քախտին. լոյսը վառն-
ում՝ Խաչիկ նստած է, կը մտնէ
Մանն, զգայմացած, կու գայ
ուղիկ Խաչիկին դիմացը կը կե-
նայ) :

ՄԱՆՆ.— Հէ՛յ, Խաչիկ. ինձի հետ խաղ
չես կրնար խաղա՛ր. էդ ազուրեիկնե-
րը տուր տանի՛մ :

ԽԱՉԻԿ.— Ի՞նչ ազուրեիկ :

ՄԱՆՆ.— Կապուտիկն ու Միրանը :

ԽԱՉԻԿ.— Կապուտիկն ի՞մն է, Մանն՝,
ի՞մն : Միրանէն լուր չունիմ : Էսոր Ա-
զանանին ազուրեիկներն ըլ դուրսն
էին : Կրնայ ըլլի՛ր, որ էնոր ազուրե-
նիկներուն հետ է գացեր : Գնա՛, է-
նոր հարցուր :

ՄԱՆՆ.— Ես գիտեմ ինչ կը խօսիմ, Խա-
չիկ : Միրանն ու Կապուտիկը ազա-
նիներու մէջ են : Ինձի հետ կ'առաւ
ընել չ'ըլլի՛ր. տունը կը վառիմ,
տունը, դիմացած ըլլես :

ԽԱՉԻԿ (ստի՛ր ցատկելով) — Դիմացինդ
Պաշիկն է, Մանօ՛, Պաշիկը. ի՞մ տու-
նըս վառողին խէրը կ'անհիծեմ:

(Մուտքին մէջ հաշիկ արագօրէն
կը փռէ անկողինը թախտին վը-
րայ ու կը պառկի: Լոյսը կը վա-
ռի այնչափ, որ պէտք է զիշեր-
ւան տպաւորութիւնը տալու հա-
մար: Տանիքին վրայ կը նշար-
ւի ստուերի մը շարժումը. հաշիկ
ընդոստ կ'արթննայ, կը մտի-
Մանօ կը ցատկէ տանիքի ետեւի
կողմէն, ու մուտքին մէջէն, հա-
գիւ նշարուելով՝ կը փախչի բե-
մի ձախ կողմէն. հաշիկ կ'իլլէ
տեղէն, կը մայի Մամայի ետե-
ւէն. յետոյ՝ արագ կը բարձրա-
նայ տանիք):

(Կը մթննայ: Անկողինը ձգուած
է տան առջեւը, թախտին. հա-
շիկ նստած է թախտի եզերքին):

ԽԱՉԻԿ — Մարէ՛:
ՆՈՒՆԻԿ (դրան առջեւ երևալով) —
Ի՞նչ է, Պաշիկ:

ԽԱՉԻԿ — Էդ ուստի ճիւղերով շինուած
կթոցը դուրս բեր, անկողինս քով
բեր:

ՆՈՒՆԻԿ — Կթոցն ինչի՞ք է գիշերանց,
Պաշիկ:

ԽԱՉԻԿ — Էս շարքի մըն է աչքս ջուռ
չէ մտեր. էն գիշերէն պէլի, որ Մա-
նոն եկաւ գիշերանց տանիք ելաւ:
Վախեամ ինչի՞ք գայ, Կապուտիկն ու
Միրանը զողնայ, տանի: Կ'ուզեմ
կթոցին տակ պահեմ, քովս, որ
չգտնէ:

ՆՈՒՆԻԿ (մերսէն կը բերէ կթոցը, կը
զնէ թախտին տակ):

ԽԱՉԻԿ (տանիք կ'իլլէ, երկու ազաւոր
առած՝ կ'իջնէ վար, կթոցին տակ կը
պտե՛է, ու կը մտնէ անկողին):

(Մուտք. երբ կը լուսաւորուի,

(ՎԱՐԱՅՈՅՐ)

զիշերուան լոյս է, սակայն ա-
ւելի տառուած դէմ, քիչ մը ա-
ւելի տեսանելի է թեմը: հաշիկ
պառկած է թախտին. կթոցը
թախտին տակ է: Մանոն տանիք
ելլելու վրայ է, կ'իլլէ, կ'անցնի
ազաւորուածին ետեւը. ձեռքին
մէջ է մերկացած դաշոյնը: Քսի
մը լուսքեմէ ետէ՛ կը լսուի ա-
զաւորներու ձայն, թպլտոցի
ձայն: հաշիկ ընդոստ կ'արթնն-
նայ. կը ցատկէ տեղէն, կ'իլլէ
տանիք: Իր ձախ կողմը ժողո-
վարդին տուած, ձեռքերով աչ-
քերուն եզերքները կ'ու մը ծած-
կած, ազաւորուածն մերս կը
մայի, կը ցնցուի, ու կը սկսի
խօսիլ ինքն իրեն, շտկուելով ու
դէպի ազաւորուածին դուռը եր-
թալով):

ԽԱՉԻԿ — Վայ անիծուիս դուն, Մանօ՛,
էս ի՞նչ ես ըրեր, էս անձեղ կենդա-
նինքը ինչո՞ւ ես մորթեր. էդ ի՞նչ
սիրտ է, որ կենդանիներու դուռը
կը փրցնէ:

ՄԱՆՕ (ազաւորուածին ետեւէն դուրս
կու գայ, թեւը կախ, դաշոյնը բռ-
նած վարէն վեր՝ սպառնակա՛ն կը
յառաջանայ դէպի հաշիկը):

ԽԱՉԻԿ (սարսափածաբար, խայլ մը կ'ըն-
կրկնի ու՛) — Կեցիք, Մանօ: (Մա-
նոյի թեւը կը բարձրանայ, այս աճ-
զամ դաշոյնը վերէն վար բռնած.
հաշիկ կը պլլուի Մանոյի թեւին):
Կեցիք, Մանօ՛, կեցիք: (Մանօ իր
թեւը ազատած՝ կ'իջեցնէ մտահոյ
հարուած մը հաշիկի կուրծքին. հա-
շիկ կը կթոսի, կուրծքը բռնած քիչ-
քիչ կ'իյնայ տանիքին վրայ, մինչ
Մանօ արագօրէն կ'իջնէ ելարանէն ու
կը փախչի):

(հաշիկի վերջին խօսքերը կը լսուին)
**Կեցիք, Մանօ՛, Կա...պու...տիկը...
Մի...րա...նը...**

ԲԵՄԸ՝ ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆԻ

ԲԵՄԻՆ ՊԷՍ

Խաչիկի տղան, որ 7 տարու է,
կը շարունակէ իր խաղը, մուր-
նով տախտակներ իրարու գամե-
լով:
Կը մտնէ Խղաքեր, կապոց մը
ձեռքին: Կը մօտեցայ տղուն-
կապոցը կը սնէ գետին, կը ճըս-
տի բովը, մագերը կը խտտէ քիչ
մը, աչքերուն մէջ միակ կարե-
լի, կեանքին կողմէ տրամագրը-
ւած միակ երջանկութեան ժայի-
տը:

*ԻՒՂԱՔԵՐ.— Ի՞նչ կը շինես, զաւակս:
Փոփոփիկը.— Աղանձետուն:*

*ԻՒՂԱՔԵՐ (յանկարծ քաշելով տղան
կարծքին, ու ճշարով).— Ձէ՛,
չէ՛, դուն ազուրեկատուն չպիտի շի-
նես: (Կը հեկեկայ ու կը ծամբուրէ
զաւակը քանի մը անգամ ու կը կըրկ-
նէ) Ձպիտի շինես, չպիտի շինես,
Հա՞...*

(ՎԱՐԱԳՈՅՐԸ Կ'ԻՋՆԷ)

Վ Ե Ր Զ

ՀԱՄԱՍՏԵՂԻ ՆԱՄԱԿԸ

Մարտ 10 1962

Սիրելի Բարգէն,

Ստացայ ձեր Փետրուար 17ի նամակը: Կը տեսնեմ, որ շատ ժամանակ եւ աշխատանք տուած էք լաւ բան մը ընելու համար: Բեժով տալ դաւաճոն ու գիւղը ձեր տոհմիկ, որ այնքան արագ կորսուեցաւ ու հնութեան մէջ ինկաւ: Այս անգամ միայն «Աղաւնիները» աւելցուցած էիք՝ միայն վիպակի բարոյականը նկատի ունենալով ու ծօտեցած չէիք իսկապէս Թատերական մասին, — չէն տուն մը կը քանդուի — բաժինը: Խաչիկի սպանութիւնը: Վիպակը ինքն իր մէջ արդէն արամ է, իոկ դուք ամփոփած էք բարոյական մասը միայն, որ քիչ մը բացատրական ձեւ ունի: Ու ձեւը փոխուած: Տրամայի նկարագիրը աւելի շատ գործողութիւնով է, որ մէջտեղ պիտի գայ: Անտարակոյտ որ հետաքրքրական է աշխատանքդ, բայց ես անկեղծօրէն պիտի թիւադրէի, որ առայժմ չմտածէք հրատարակութեան տալ «Բազմ»ի մէջ: Նոր սկսած գրական ամսագիր՝ նոր յոյսերով, սեւէ ընթերցող չպիտի ուզէր իմ պատմուածքներու կրկնութիւնները կարդալ: Այլ է, էթէ բեմի վրայ տեսնէ կենդանի նկարագիրներով եւ պաշտօն բեմով: Նախ՝ աշխատեցէք ձեր այդ հետաքրքրական աշխատանքը գործածել բեմի համար, այն կտորները, որ չափով մը իրենք իրենց մէջ ամբողջական են: Բեմի վրայ տեսնել յետոյ, դուք ալ պիտի տեսնէք, որ տակաւին հասունցած չէ հրատարակութեան տալու համար: Եթէ այստեղ եղածդ ատեն միասին ընէինք, գուցէ աւելի լաւը ըլլար: Կը տեսնեմ, որ Թատերականը լաւ է ձեր մէջ:

Երբ «Այծնտամար»ին մասին խօսեցայ, տեսայ, որ ընտրած էք ձեւ մը, որ իսկապէս հետաքրքրական է եւ շատ աւելի հարազատ բնագրին: Եւ յետոյ ինչու խուսափել, որ «փիլիսոփայականը» կայ այդ կտորին մէջ եւ հետեւաբար անյարժար ժողովուրդին: Երեւակայել, որ Թ. Ս. Իլերթի գործերը կը ներկայացնեն այստեղ ու ընդունելութիւն կը գտնեն, ըսել կ'ուզեմ Ամերիկայի մէջ, իսկ «Այծնտամար»ը սաթիրական է եւ կայ երգիծանք իր ողբերգութեան մէջ:

Իմ պատմուածքներու մէջ գործածած եմ «Մայր» բառը, փոխանակ «Մարէ»ի: «Մարէ»ն խորթ է ինծի համար: «Փէճ»ը ունի է: Իսկ «խութն» միշտ ալ կը գործածուի «Նումա»ին: Հազուստի համար է՛ն սուղ սպրանքն է, դուցէ Թաւիչ:

Երիտասարդ տղամարդը կը հազնի Էմքարի, Կօշիկը՝ Եւմէնի, եւ գլխին՝ Փէւ, իսկ երբ տարիքը առնէ՝ կը հազնի շալվար, ֆէսին շուրջ՝ բարակ փաթթոց, ու փաթթոցը աւելի հաստ, մինչեւ ականջներուն կէտը հետը առնուած: Իսկ էթէ գրոց-բրոց է եւ կամ ուսուցիչ՝ արդէն փակքալոս: Աղջիկները կը հազնին ֆիւքսան՝ կոճակներով ու պասմայով ծաղկա-

ւուն : Եթէ ազնիւ է, գլխին լաշակ, երբ ամուսնանայ լաշակը կապելու ձեւը կը փոխուի : Լաշակին մէջ կ'առնէ ականջները, ճակատին կէսը եւ ծնօտը : Կիներու կօշիկները կրունկով են, կթէ ունեւոր է, ունի ոսկեղրամաներով վզնոց — ճակատին՝ քէֆնիքի — ձեռագործ, ժապաւէնի լայնութեամբ, իր ճակատը կը կապէ նոյնպէս ոսկեղրամաներով : Այս՝ Կիրակի օրուայ Հագնեկիքներն են, իսկ սոփորական օրերը կը Հագնի շալվար տեղական կտուէ եւ կամ պաւսմայով շինուած :


Այլ է բենճերին — Հողագործին — եւ Նիւվէլէին — անոնք որ Հողին Հետ գործ շունին — ասուները : Բենճբօր գուռը լայն է եզներու, կովերու եւ էշերուն Համար : Գաւթիքը կրնայ ծածկ ըլլալ եւ կամ բաց : Այնտեղ են երկրագործական գործիքները — արօր, լուծք, խոփ, տափան : Կայ չարխը ստալաբարը, ուր կը լողնան ճիշդ քովի թոնիրին վրայ խոշոր պղինձով ջուր տաքցնելով : գլխաւոր թոնրատունը երկրորդ յարկի վրայ է — կրակատունը, ուր կան առանին առարկաներ : Զմեռը այդ ընդարձակ կրակատան մէջ կը զնն, իսկ ամառը կ'ելլեն չարտախը : Իմ օրով կար նաեւ սննական ու կար սնտիր կապերտներով ու բարձերով, նաեւ վառարան, քիւրսի ու մանգալ : Ամառ ատեն զրացիները զուրը գոններու վրայ կը Հաւաքուին, ուր երբեմն կայ նոյնպէս սնճու, իսկ տղամարդիկ իրիկունները գիւղի ժօտակայ Հրապարակը : Հողէ շինուած ու թրծուած ամաններ կան՝ ժառնաւոր արհեստաւորներու կողմէ շինուած ու թրծուած, ինչպէս ջուրի կուժ, բարդ, կարաս, քարթն, եւ կերակուրի ամանները պղինձէ էին եւ փայտէ դալ եւ երբեմն փայտէ պատառաբաղ : Սեղանի խոնջան, որուն շուրջ կը նստէին, փայտէ շինուած կ'ըլլար եւ կլոր : Կայ նաեւ պղինձէ ծեծուած սէյնի : Ի Հարկէ, այս առարկաները կը փոխուին, նայած թէ ինչ կարողութիւն եւ ճաշակ ունեցող մէկն է : Ըսած եմ, որ Գանձակ Մարտուպի տունը կէս քաղաքնի էր :

Ինչպէս ըսի, կ'ենթադրեմ Հետաքրքրական պիտի ըլլայ եւ պիտի ծանայ իր նպատակին, եթէ փորձուած խաղացողներ — երեք ժամուայ ընթացքին — երեք պատմուածքներ ներկայացնեն :

«Աղաւթիներ»-էն երկու օրինակ դրկած էք : Այս ծրարով մէկ օրինակը ձեզի կը դրկեմ :

Սիրով

ՀԱՄԱՍՏԵՂ



Լ. Մ Կ Ր Տ Չ Ե Ա Ն

Մ Տ Ա Ծ Ո Ւ Մ Ն Ե Ր
Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ե Ա Ն Մ Ա Ս Ի Ն

Տարիներ առաջ, 1969 թ. երկրորդ կեսին եւ, մանաւանդ, 1970ին եւ յաջորդ տարուայ սկզբներին, Հայաստանեան գրական մամուլի էջերում բուսական աշխոյժ բանավէճեր ծաւալուեցին նորահաս ու երիտասարդ բանաստեղծների ստեղծագործական փորձերի վերաբերեալ: Այդ բանավէճերին մասնակցեցին թէ՛ երիտասարդներն իրենք եւ թէ՛ տարեց գրողներն ու գրականագէտները: Յիշեալ քննարկումներից յետոյ, ինչպէս յայտնի է, բանաստեղծութիւնը այլեւս նոյնպիսի լայն խօսակցութիւնների նիւթ չէ, քանի որ յաջորդաբար քննական ուշադրութեան կենտրոն ժողուեցին երիտասարդական արձակն ու այլեւայլ յարակից գրական խնդիրներ:

Բայց 70 թուականի հրապարակային խօսակցութիւնները, ըստ իս, ուշադրաւ էին մի շարք կողմերով: Նախ՝ մամուլի էջերում կուտակուեց նշանակալի նիւթ, որի օգնութեամբ կարելի է կազմել ժամանակի գրական տրամադրութիւնների բուսական որոշակի պատկերը: Նրանք, ովքեր մամանակին հետեւել են մամուլին, երևի նոյն կգրակցութեան են յանգել: Իսկ նրանք, ովքեր հետազայում, անձնական հետաքրքրութեան բերումով կամ հետազոտական նպատակով, կը թերթատեն երբեմնի բանավիճային նիւթերը պարունակող էջերը՝ չեն կարող անտեսել այդ էջերի հանգուցային կարեւորութիւնը: Բանավէճերի ուշադրաւ կողմերից

մէկն էլ այն էր, որ նրանք հիմնականում մնացին գրական ոլորտում եւ զարտուզի նկատումներ գրեթէ երեւան չեկան։ Այն տպարութիւնն ստացուեց, թէ զըրանք տեղական ինքնուրոյն նախաձեռնութեան արդիւնք են, այլ ոչ թէ վերին որեւէ հրահանգի։ Ամենաբուռն ընդդիմախօսութիւններն անգամ մնացին իրենց բնական հունի մէջ եւ դուրս չեկան ասիերից։ Ուստի եւ ինքնարեւարտ զըրսեւորուեց կարծիքների առաւելագոյն գրական բնոյթն ու բազմազանութիւնը, ինչ որ հնարաւորութիւն է սալիս կազմելու արամադրութիւնների առաւել հաստի քարտէսը։

Ինքնին հասկանալի է, որ հայաստանեան գրական մամուլում բանաստեղծութեան մասին գրուել է թէ՛ 70 թուականից առաջ եւ թէ նրանից յետոյ։ Բայց այդ գրուածքները ո՛չ իրենց ծաւալով ու խոսքով եւ ոչ էլ, մո՛նաւանդ, իմաստային պարունակութեամբ ու ձեւակերպուած գրոյթներով չեն կարող հաւասարուել մօտ մէկ տարուայ ընթացքում մշակութային շրջանառութեան մէջ գրուած գրաւոր նիւթերին։ Սա աւարկայական իրողութիւն է։

Հարց կարող է ծագել, թէ ինչ ո՞ւ յատկապէս 70 թուականին եւ նախորդած ու յաջորդած ամիսների ընթացքում հարկ համարուեց այնքան լայնօրէն գրադուել բանաստեղծութեամբ։ Պատասխանը գտնելու համար բաւական է յիշել, որ ճիշդ այդ տարիներին հրատարակ եկած նորահաս բանաստեղծներն էր, ձեւեր ու տրամադրութիւններ երեւացին։ Այդ ձեւերն ու տրամադրութիւնները այնքան շեշտուած էին, որ թուում էր, թէ արդէն իւրայատուկ ջրբաժան գիծ են հանդիսանում անցեալի ու ապագայի միջեւ, բանաստեղծական մտածողութեան ու վերաբերմունքի նոր շափանիչներ առաջարկելով։

Թիրախ, հայաստանեան մինչայժմեան բանաստեղծական արուեստը, իր ձեւերի, միջոցների ու տրամադրութիւնների ներքին տարբերակումներով հանդերձ, մնում էր ըստ էութեան դասական

ու աւանդական մտածողութեան ոլորտում։ Գային աւելի կամ պակաս հանրաճանաչ շափանիչներ, որոնք եւ հիմք էին ծառայում փոխըմբռնման, խօսակցութեան, գոհունակութեան կամ զըրտագոհութեան համար։ Տարբեր էին անհատականութիւնները, բայց գրեթէ նոյն էր մշակուող արուեստի լեզուն։ Եւ ան նորերից շատերի բերնից հնչեց ուրիշ լեզու, ինչ որ իր հերթին յարուցեց մտածողութեան այլեւայլ փոփոխութիւններ կամ փոփոխութիւնների հոսանքի հաւանականութիւն։

Այս պարագան վաւերական համարելու դէպքում՝ մի այլ հարց է ծագում — արդեօք նորայայտ երեւոյթը գրական է թէ բացասական։ Այս հարցին կարուկ այս կամ ոչ պատասխանելը դժուարանում է այն պարզ պատճառով, որ առհասարակ անկարելի է այս կամ այն գրական սերնդի ստեղծագործութիւնը բնութագրել զուտ դրականի կամ բացասականի շրջանակում։ Նախ՝ հայաստանեան նորահաս բանաստեղծների սերունդը, որքան էլ որ նոյն միջուկում գործելու լինի, միադէմ չէ՝ բոլորն էլ նոյն նախասիրութիւնները չունեն եւ անպայման արտաստիկոր նորութիւն չեն հետապնդում։ Նոր խօսք ասելու նախանձանդիւրները եւս միատեսակ չեն։ Բացի այդ, ինչ որ մէկի համար գրական է համարուում, մէկ ուրիշը խորում է նրանից։ Եւ ընդհակառակն։

Այս պայմաններում, կարելուք ոչ թէ նորահաս բանաստեղծներին յարմար ու մատչելի բնութագրումներով պիտակարելն է, այլ նրանց հաւաքական տեղը գրական ընդհանուր շրջանի մէջ որոշելն ու երեւան գալու հանգամանքները ճշդելը։ Անկախ այս ամէնից, հարկաւոր է ընդգծել, որ մինչեւ օրս էլ հայաստանեան բանաստեղծութեան ընդհանուր դիմագիծը որոշում է այն սերունդը, որի գրական իսկական զարթոնքը համընկնում է Ծովան թուականին։ Հետագայում՝ Ծովան թուականներին ձեւաւորուած կամ երեւան եւ կամ բանաստեղծական ուժերը չեն կա-

բող առայժմ առաջատար համարուել, մինչդեռ նրանց սերնդակից արձակագիրները, ընդհակառակն, անպայման առաջատար են եւ նոր ու կենսունակ գրական տրամադրութիւնների արտայայտիչներ:

Բանաստեղծութեան ասպարէզի հանրայայտ, անուանի դէմքերն են առայժմ դոյն տալիս գրականութեանը: Նրանց յաջորդող կրտսերները, եթէ մի կողմ դենն թաղմիկ Դաւոյանի ցայտուն եւ ինքնատիպ անհատականութիւնը, զըտնելում են հաւասարակշռութեան մի՞նակում եւ ուշագրտւ շարժում չի նկատուում: Իսկ ամէնից կրտսերները, որոնք արդէն օրէցօր դադարում են կրտսեր լինելուց եւ չափահասութեան ճանապարհն են բռնում, դեռեւս չեն ասել իրենց մերձական խօսքը եւ առայժմ յայտնի են սոսկ իրենց նախափորձերով ու հանգանակի բնոյթ կրող ելույթներով:

Եթէ երիտասարդ բանաստեղծների սերունդը մերձականապէս չի մեւտւորուել եւ իր խօսքը չի ասել ու ընդամին առաջատար ուժ չի հանդիսանում, այդ հանգամանքը չի նուազեցնում 70 թըւակների նշանակութիւնը, ոչ էլ հերքում նորայայտ տրամադրութիւնների իրողութիւնը: Ամէն օր բանաստեղծական մեքենա արձանագրելն անկարելի է: Իայց պարբերաբար բանաստեղծութեան մասին խօսելն ու այն մշտապէս աչքի առնել պահելը միանգամայն հնարաւոր է ու գրական կեանքի մաս է կազմում: Այդ իմաստով պէտք է հասկանալ եւ երբեմնի բանավէճերի այժմեան յիշատակումը:

Բնականաբար, բանավէճերի ընթացքում որոշ աւագ գրողների ու գրականադէտների կողմից նորահասների հասցէին եղան նաեւ քննադատութիւններ: Սխալ կը լինէր այդ քննադատութիւնները անպայման անարդար համարել, քանի որ շատ գէպքերում դրանք բխում էին որոշակի ստուգուած ղեզազիտական դիրքերից եւ ելնում հայ գրականութեան մնայուն շահերից: Իսկ այդ ղեզազիտական դիրքերն ու գրական շահերը երբեք չեն կարող երկրորդական

համարուել: Գրականութեան մէջ նորարարութիւնը ինքնին հասկանալի եւ ողջունելի է, բայց իրականում նորարարութեան անունով պատահում են եւ զանազան կարգի թիւրիմացութիւններ, որոնց պատշաճ լուսարանումը մանաւանդ չափահաս ու մեռնհաս ուժերի առաջնահերթ պարտականութիւնն է:

Իայց ընդհանուր սոժամբ արժէ նըշել, որ նորահասների հանդէպ բարեացակամութիւնը շատ ասելի չեղաւած ու նշանակալից էր, քան քննադատութիւնն ու մեղադրանքը: Իրա պատճառներից կարելի է յիշատակել հետեւեալը: Նախ՝ ինչպէս արդէն ասուեց, բանավէճերը ըստ էութեան գրական բընոյթ էին կրում եւ ուստի բացաւում էր կողմնակի ամբոխավարութիւնը:

Երկրորդ՝ բանաստեղծական նոր տրամադրութիւնները յատուկ էին եթէ ոչ բոլոր նորահասներին, այսպէս չէին բանց գերակշիռ ու հիմնական, ուժակն մասին, ա՛յն աստիճան, որ կարող էին բնորոշ համարուել ամբողջ սերնդի համար: Այդ դէպքում բացաւում է Վրտարուողը քչերի օձիքից բռնելու եւ յարձակումների թիրախ դարձնելու գործնական հնարաւորութիւնը:

Երրորդ՝ մի ամբողջ հերթափոխ գրական սերնդի հանդէպ չի կտրելի վերաբերմունք ճշգէլ համատարած ժխտողական դիրքերից, այլ հարկաւոր է որոշակի աշաղիբ ու ինամբոտ մօտեցում: Եւ ուստի՝ թէ՛ պաշտօնական բեմերից եւ թէ՛ լրագրային ու հրատարակային բանավէճերի ընթացքում դրսեւորուեց այդ անհրաժեշտ շրջահայտացութիւնը:

Ի հարկէ, նորահասների հասցէին արուող քննադատութիւնների շրջանակում, յաճախ կարելի էր ակնարկումների հանդիպել, թէ՛ նրանք ինքնահաւան եւ կամակոր են, կամ գրում են անմիտ ու անհեթեթ բառակոյտեր: Իայց սա երկրորդական է եւ բուն ինդրին չի վերաբերում: Հայաստանում եւս, ինչպէս ամէնուրեք, երիտասարդ մարդկանց ու բանաստեղծների շարքում բացառուած

չէ ինքնաշահանքի եւ ուժերից վեր յաւանութիւններ ունեցողներ զոյնութիւնը, ինչպէս եւ ունա ու անժիտ շարադրանքների հնարաւորութիւնը: Բայց եթէ նկատի առնենք ժխան ժամուրում կամ այլ կերպ հրատարակուած բանաստեղծութիւնները, կարելի է ազատորէն խօսել թոյլի, անյաջողի, անգոյնի, սակայն ոչ երբեք տրամաբանորէն անհեթեթի մասին: Ժիշդ է, խմբագրական զործի հետ կապուած մարդիկ շատ աւելի տեղեակ են իրերի վիճակին, քան կողմնակի՝ մօտիկ ու հեռուոր ընթերցողները, քանի որ միշտ էլ որոշակի ընտրութիւն է կատարուում եւ աճին ձեռնադիր չի տպւում: Դրանով հանդերձ, հաւաստի պատկեր կողմնու համար հաշուի պէտք է առնել տպուածը, այլ ոչ թէ ձեռնադիրը:

Յիշատակուած ընդհանուր տոմար բարեւոյցակամ վերաբերմունքը, նոյնիսկ մտնախիստ քննադատութիւնների ճանապարհով, միանգամայն հասկանալի է: Բանաստեղծութեան մէջ հաւաքեր սերունդների սեփական ներդրումը բնական ու անխուսափելի է: Եթէ կանոնների հարկ կայ, այդ կանոնները իրենք՝ բանաստեղծները պէտք է սահմանեն, այլ ոչ թէ ուրիշները: Եթէ որեւէ գրական սերունդ դժուարանում է իր ճանապարհը գտնել, ուրիշ ոչ չկայ, քան սպասել, որ նա ինքը գտնի այդ ճանապարհը, հասարակական ուժերի նպաստաւոր ներգործութեան ներքոյ: Ի՞նչ իմաստ ունի քարկոծելը կամ ճաշակ հրամցնելը, երբ գրական կենսի ճանապարհը այլ խորհուրդներ եւ թելադրանքներ են պարունակում:

Ըստ իս, հայաստանեան բանաստեղծութեան մէջ երեւան եկած նոր տրամադրութիւնները զոնէ այսօրուայ համար վերջնական ու ձեւաւորուած իրողութիւններ չեն, այլ անցման փուլերին յատուկ երեւոյթներ: Հետեւապէս՝ ո՛չ կարելի է անտեսել այդ տրամադրութիւնների առողջ կողմերը, ոչ էլ իսկապատուել կամ զարմանալ այլեւայլ

տարօրինակութիւններով: Իւրաքանչիւր երկունք, եթէ այժմեան խմորումը պայմանականորէն ինչ-որ անյայտ երկունքի նախածան համարելու լինենք, ունի նաեւ իր ազնի կողմերն ու գրեւորումները: Դրականութեան հետագայ ընթացքը ցոյց կը տայ, թէ ինչը ինչով է բացատրուում: Իսկ մինչ այդ՝ բանաստեղծների աճնորեայ կոչումն է ստեղծագործել ու յամառ որոնումներով ուղի հարթել:

Նոր տրամադրութիւնների կապակցութեամբ կարելի է խորապէս գրական համարել ա՛յն, որ բանաստեղծները վերադառնում են իրենց, ստեղծագործութեան ահունքներին, ելակէտ են դարձնում ա՛յն, ինչ որ իսկապէս ելակէտ է: Նորահասների նոյն միտքը կարելի է ձեւակերպել այն իմաստով, որ նրանք ըսկըսում են իրենցից, առանց աւելորդ խարխալումների: Ուստի՝ ազատորէն կողմնորոշուելու ներքին տրամադրութիւնը արթուն է նրանց մէջ, նրանք վիճի նիւթ չեն դարձնում այն, ինչ որ անվիճելի է, բուսական անդիմում են բանաստեղծութեան անկախութեան հարցերում եւ հակամէտ չեն իւրացնելու աճին մի թելադրանք, մա՛նաւանդ՝ երբ այն խախտում է իրենց գրական պատկերացումների համակարգը:

Դրականի դիմաց, սակայն, բացասական պէտք է համարել ա՛յն, որ շատերը իրենցից չեն հեռանում կամ դեգերում են սոսկ առօրեայ երթեւեկութեան սահմաններում: Թերեւս դա պայմանաւորուած է առկայ կենսի ընդհանուր վիճակով: Յամենայնդէպս, նորահասների բանաստեղծութիւնների մէջ բուսական զգալի են սակաւարիւնութիւնը, աւելի պակասը, թափի ու լայն հեռաքրքրութիւնների բացակայութիւնը, պատկերային ու մտային ստուերախաղերով հրապուրուելու միտումը, եւ այլն: Հընարաւոր է, որ նոյն ժամանակ նաեւ ներքին ուժեր են կուտակուում բանաստեղծական աշխարհներում: Առայժմ անկարելի է պնդել, թէ ինչպիսին է այդ ուժերի վիճակը:

Այսպէս թիթեակիրօրէն նշելով հաստատանան նորահաս բանաստեղծների երկերում նկատուող որոշ իրողութիւններ, հարկաւոր է ընդգծել, որ նոր արձամարտութիւնները զուտ հայաստանեան երևույթներ չեն: Բուական է նայել իրարհակալին Միութեան միւս հանրապետութիւնների նորահաս բանաստեղծների երկերին եւ անմիջապէս կը պարզուի, որ ընդհանրութիւններն աւելի շատ են, քան տարբերութիւնները, եթէ վերցնենք միայն բանաստեղծական լեզուն: Ուրեմն, գոյութիւն ունի մի ինչ որ գրական օրինակափութիւն, որով եւ պայմանաւորուած է միջոցառումը:

Սակայն ուշագրաւը միայն այն չէ, որ մէկ՝ աշխարհից փաստօրէն կտրուած ընդարձակ կայսրութեան այլեւայլ անկիւններում նոր ծնունդ ու ստեղծագործական ստպարիզ ընարող պատանիները, թէեւ իւրաքանչիւրն իր հաշուին ու միւսներից անկախ, ցուցաբերում են գերական ընդհանուր միտումներ, որոնք ընդամին գէթ ձեւական առումով նորարարական բնույթ են կրում: Առաւել ուշագրաւը կարելի է համարել այն իրողութիւնը, որ այդ իրական թէ պայմանական նորարարութիւնը շիման կէտեր ունի նաեւ աշխարհի մնացեալ մասերում մշակուող երէկուայ ու այսօրուայ բանաստեղծական արուեստի հետ: Նոյն ժամանակ կարելի է նշել եւ անհաշիւ տարբերութիւններ, անշուշտ, բայց նրմանութեան իրողութիւնը մտածելու աւելի շատ հիմքեր է տալիս:

Այդ տարբերութիւններն ու նմանութիւնները ցոյց տալը ուրիշ նիւթ է եւ չի մտնում այս յօդուածի նպատակի մէջ: Բայց եւ այնպէս՝ արժէ մի ընդհանուր հայեացք նետել նաեւ արտախորհրդային երկրների բանաստեղծական զանտեսութեան՝ կացութեան վրայ:

Բ.

Որքան ժամանակը առաջ է գնում, այնքան դժուարանում է հեղինակների

եւ ընթերցողների գործը, խճճոււմ են հեղինակներին, այդ թւում եւ բանաստեղծներին ու ընթերցողներին կապող ճանապարհները: Առաջին հայեացքից այս պնդումը կարող է հակասել աշխարհի այլեւայլ երկրներ ու ժողովուրդներ միացնող կապի արդիական միջոցների կատարելագործման իրողութեանը: Բայց եթէ հաշուի առնենք, որ ամէնուրեք անընդատ նորանոր հեղինակներ են երեւան գալիս եւ նոր ստեղծուող երկերը գումարում են աշխարհում մինչ այդ գոյութիւն ունեցող հեղինակներին, իսկ ոչ մի ընթերցողի կեանքն ու արձամարտիչի ժամանակը երբեք անսահման չեն, դժուար չէ համոզուել, որ իսկապէս ընթերցանութեան շատախիղք գնալով նորանոր փոփոխութիւնների է ենթարկւում: Վստահութեամբ կարող է հրամայական կանոն, իսկ հանրագիտայնութիւնը՝ անհնարին բացառութիւն:

Այս հանդամանքը արձանագրում է իրրեւ պարզ իրողութիւն, առանց ողբերգական որեւէ շեշտի: Քանզի մարդու լիցուն կեանքն ու զարգացումը իրականում պայմանաւորուած է ոչ թէ իրերի բերմամբ հաւաքած զանազան տեղեկութիւնների քանակով, նրանց այսպէս ասած համախառն ծաւալով, այլ առողջ եւ ճիշդ մտածելու, հաւանական բոլոր պարագաներում կողմորոշուելու եւ ընդգրմին արժէքների վաւերական ընտրութիւն կատարելու կարողութեամբ: Ընթերցանութեան շատախիղքներն էլ յարժարում են ժամանակին եւ նոր ձեւեր են մշակում նաեւ հոգեւոր հարգողակցութեան միջոցները առաւելագոյնս սպահնուկու ուղղութեամբ:

Աշխարհում ընթերցանութեան նիւթ շատ կայ, ներսուռեալ եւ բանաստեղծութիւնը: Եւ քանի որ այդ ամէնի թէկուզ նուազագոյնը նոյնութեամբ աշխարհափիւս ընթերցողներին հասցնելու հրնարաւորութիւնը բացառուած է, աստիճանաբար լայն տարածում են գտնում համառոտ շարադրանքները եւ համարական տեսութիւնները, իսկ գեղարուեստ

տական երկերի համար էլ՝ ծաղկաբազմերը: Գրանով իսկ մասնագէտ կամ շարքային գրասէրները կարողանում են թէ՛ տեղեակ լինել մշակութային ամէնէնց էական իրողութիւններին եւ թէ կարճ ճանապարհով ընտրել ա՛յն, որի մէջ կ'ուզենային, ըստ նախասիրութեան, աւելի խորանալ: Ուրեմն, զընտրելով աւելանում է ծաղկաբազմերի նըշանակութիւնը, որոնց շնորհիւ մարդ կարող է շնչել թէ՛ պատմութեան եւ թէ ներկայի մէջ, առանց ծանրաբեռնուելու եւ միտմանակ առանց նեղացնելու իր մտահորիզոնը:

Ի հարկէ, ծաղկաբազմերն էլ տմենարոյժ միջոց չեն, բայց ամէնից նպատակալարմարն են ստեղծուած երկերի միջազային տարածման եւ լայն հետաքրքրութիւններ ունեցողներին բաւարարելու համար: Իսկ ազգային հասարակութիւնների շրջանակում սեփական ազգային գրականութիւնը մնում է եւ կը մնայ իրբեւ հիմնական ու անմիջական ընթերցանութ, որին ոչ մի այլ բան չի կարող փոխարինել թէ՛ գրական եւ թէ կենսական առումով:

Բայց ծաղկաբազմերի ծաղկաբազմերը կան միշտ էլ տատանուած է ընթերցանութեան շուտաւոր: Այսպէս, այս յօդուածը գրուելու կազակցութեամբ հաւաքուած գրական նիւթերի շարքումն է եւ «Արեւմուտֆի ծագելը» քննարկումը ստուար ու ներկայանալի ծաղկաբազմը, որը ընդգրկում է հազիւ մէկ քաղաքակրթական աշխարհամասի գրեթէ 2 հազար տարուայ առաւել ներկայացուցչական նմուշները: Իսկ չէ՞ որ այդպիսի հազարաւոր ծաղկաբազմեր կարելի է կազմել այլեւայլ թեմաներով, այլեւայլ ազգերի վերաբերեալ, առանց երբեւէ սպառելու բուն գրական նիւթը: Այս բացատրութիւնների նպատակն է ցոյց տալ, որ թէև զնալով աւելի է դժուարանում մանաւանդ տարբեր երկրների գրականութեանը անմիջապէս ծանօթանալու գործը, միշտ էլ կարելի է հաստի պատկերացում կազմել այդ

գրականութիւնների ընդհանուր կացութեան մասին: Գրաւ համար բաւականաչափ միջոցներ կան: Այդպէս է եւ բանաստեղծութեան տարբերումը:

Գաղտնիք չէ, որ այսօր եթէ ամփոփուենք միայն եւրոպական ու եւրոպատիպ երկրներում, բանաստեղծութիւնը այն հնչողութիւնը չունի, ինչ որ ունէր, ասենք, 19րդ դարում կամ թէկուզ մեզնից 30-40 տարի առաջ: Չկան նաեւ հանրաճանաչ համրաւար բանաստեղծներ: Այս պարագան կարող է կարծել տալ, թէ ո՛չ բանաստեղծներ կան, ոչ էլ բանաստեղծութիւն: Մինչդեռ այդպէս չէ: Բոլորն էլ կան՝ իրենց ազդեցութեան համապատասխան ոլորտներով: Բայց ժամանակակից աշխարհում հոգեւոր ստեղծագործութեան ու հաղորդակցման զուգահէտ միջոցները այնքան տիրական են, որ բուն բանաստեղծութեան կալուածը համեմատաբար փոքր է թուում:

Տարբեր երկրներում, անշուշտ, բանաստեղծութեան տեսակարար կշիռը տարբեր արտայայտութիւն ունի: Մասնագէտները գտնում են, օրինակ, որ բանաստեղծութեան վարկը Լատինական Ամերիկայի երկրներում աւելի բարձր է, քան որեւէ այլ տեղ: Հնարաւոր են եւ այլ տարբերակումներ: Սակայն անվիճելի է, որ ոչ մի տեղ բանաստեղծութիւնը կեանքում բացակայ չէ: Վերջերս, երբ մի առիթով գրախօսական էի կարդում «Էւարիւր տարուայ Ֆիճնական Բնարեգութիւնից» վերնագրով ժողովածուի մասին, մտքիս մէջ ընդգծեցի մի կէտ: Գրախօսը հարցրել է մի երիտասարդ Ֆինն լրագրողի, թէ արդեօք նա՞ եւս բանաստեղծութիւն է գրում. «Բանաստեղծութիւն՝ մենք բոլորս ենք գրում», — պատասխանել է լրագրողը, նկատի առնելով ամբողջ գրականութիւնը: Նոյնիսկ եթէ կատակ համարենք այդ պնդումը, դարձեալ վկայում է ինչ որ հիմնաւոր մտայնութեան մասին:

Թերեւս աւելորդ չէ մի կարեւոր յա-

բակից բացատրութիւն: Տակաւին դասական Յունաստանում բանաստեղծութիւն էր համարուում գեղարուեստական ամբողջ գրականութիւնը եւ դա սխալ չէր այն ժամանակ: Այդ պատկերացումը պատշաճ կարգով ձեւակերպուեց Արիստոտելի «Պոետիկա» երկում, ըստ որի բանաստեղծութիւնը բաժանուում է երեք սեռի՝ էպոս (գիւցազներգութիւն), լիրիկա (քնարերգութիւն) եւ դրամա (թատերգութիւն): Եւ այդ պատկերացումը գրականագիտական հիմք էր ծառայում դարեր շարունակ՝ գրականութեան միջոցով պատմելու, արտայայտելու եւ ցուցադրելու տարրերը բնութագրելու համար: Այսօր արեւմտեան երկրներում բանաստեղծութեան փոխարէն՝ իբրեւ կանոն, գործ է ածուում միայն «քնարերգութիւնը», իսկ բանաստեղծի փոխարէն՝ միայն «քնարերգուն», ինչ որ ըստ էութեան տրամաբանական է: Սակայն հայերէն բանաստեղծութիւնը քառու արդէն իսկ ճշգրիտ եւ գիտյուն է, ուստի՝ անպայման քնարերգութիւն) դարձնելու հարկ չկայ, քանի որ բուն բանաստեղծութիւնը ի սկզբանէ հենց բուն քնարերգութիւնն է, իբրեւ երակէս: Բանաստեղծական միւս բոլոր խառը շարդանքները յաւելեալ կատոյցներ եւ իրողութիւններ են:

Ժամանակակից բանաստեղծութեան ինդիկները լուսարանում եւ քննութեան են առնուում ո՛չ միայն զուտ գրական հանդէսներում, այլեւ նոյնիսկ գրեթէ բոլոր կարեւոր թերթերի շաբաթական գրական յանդիւանդներում: Դա նշանակուում է, որ բանաստեղծութիւնը ինքնին չի վրիպում մամուլի ու գրասէր հասարակութեան առօրեայ ուշադրութիւնից: Դրանով հանդերձ, արեւմտեան բոլոր երկրներում բանաստեղծները միշտ գժգոճ են, որ բաւարար տարածում չունեն իրենց երկերը: Դժգոճ են, որ գրական հանդէսները քիչ են: Դժգոճ են, որ հասարակութիւնը անտարբեր է: Եւայլն, եւայլն:

Ուսումնասիրութիւնները ցոյց են

տուել, որ բանաստեղծութիւն ամէնից շատ կարգում են մինչեւ 25-30 տարեկան երիտասարդները, յատկապէս ուսանողները: Ճիշդ է, կան նաեւ մնայուն գրասէրներ, առանց տարիքի խտրութեան: Իսկ նրանք բաւական չեն բանաստեղծական գրականութիւնը լիովին ըսպատելու համար: Բանաստեղծները հիմնականում քաջատեղեակ են այդ անէնին, բայց շարունակում են հաւատարմօրէն գրել, իրենց պաշտօնը նոյնիսկ հրապարակօրէն երբեմն հեղինակով ու միտմանակ այն սիրելով: Քանիք բանաստեղծութիւնը, ինչպէս միշտ, ինքնին ոչ թէ հացի ու դիրքի հարց է, այլ հոգեկան գործունէութեան, հոգեւոր շնչատութեան ու հաղորդակցման: Ահա թէ ինչու մէկ կողմից անընդհատ գրագրութիւններ են լուծում, իսկ միւս կողմից պատկառելի թիւ են կողմում բանաստեղծութեամբ զբաղուողները:

Հասարակութեան կեանքում բանաստեղծութեան տեսակարար կշիռն չըլազումը հազիւ թէ բացատրելի լինի հրատարակչական ոլորտի սահմանափակութեամբ: Անցեալում եւս հրատարակչական ոլորտը շատ լայն չի եղել: Պատմական վկայութիւնները այդ կապակցութեամբ բաւական պերճաբոս են: Քիչ չէ այն բանաստեղծների թիւը, որոնք նոյնիսկ չեն տեսել իրենց երկերի տպագրութիւնը, բայց սնխոնջ կերպով գրել են եւ միայն յիտմանու հոշակուել: Բայց եղել են ինչ-որ ժամանակաշրջաններ, երբ բանաստեղծութիւնը իսկապէս որոշակի ներգործութիւն է ունեցել այս կամ այն հասարակութեան որոշակի խաւերի տրամադրութիւնների վրայ: Եղել են եւ այնպիսի ժամանակաշրջաններ, երբ բանաստեղծութիւնը ամփոփուել է իր պատեանում, ինքն իրմով սպրել, ինչպէս որ հիմա է:

Արդիւնաբերական հասարակութեան պայմանները այնպիսին են, որ փոխուում են հոգեւոր հաղորդակցութեան միջոցները, բայց չի վերանում բուն հոգեւոր

Հազարակիցութեան կարիքն ու ձգտումը: Այսօր շի կարելի ստել, թէ զանգուածները իսկապէս զուրկ են աշխարհի ու մարդկութեան հետ կապուելու մշակութային միջոցներից: Իւրաքանչիւրը բաւարարւած է իր պահանջները համեմատ: Եւ զա էլ ինքնին փոխարինում է բանաստեղծների բանաստեղծութեանը, քանի որ ամէն ինչէ մէջ լուծուած միմակում հրամայում է ստերային ու անտեսանելի միեւնոյն բանաստեղծութիւնը՝ երգով, պատկերով ու պատմութիւններով, իրական ու երազային ճանապարհորդութիւններով: Գրուած-սպուածը կարգալով հասկանալը, զազտելը չէ, աւելի շատ ժամանակ է պահանջում եւ մտաւելի չէ ամէն մարդու: Ահա եւ բանաստեղծութիւնը տեղ ու գոյն է փոխում եւ այն տպաւորութիւնն է ստացում, թէ անհետանում է, քանի որ լքում է դրի ճանապարհը:

Այս պայմաններում է խղում առաջնում լայն հասարակութեան եւ զբաղմունքով բանաստեղծների միջև: Հասարակութիւնից հեռու եւ արձագանգից զուրկ բանաստեղծութիւնը զրկուած է նաև կենսական խթաններից, աճում ինքնազուրիս, անխուսափելիօրէն դառնում խրթին ու խճճուած, ինչ որ սմանք երբեմն, չգիտես ինչու, համարում են «զարգացում» եւ աւելի զբորձը մակարակա: Մինչդեռ դա բանաստեղծութեան գրեթէ կատարեալ ինքնաժխտումն է, քանի որ մարդկային Հազարակիցութիւն հրահրելու փոխարէն կտրում է բոլոր կապերը եւ օրինականացնում մեկուսացումն ու խորթացումը: Բանաստեղծութեան վարկի ու տեսակարար կշռի նըւազումը հետեւանք է նաև այս ճակատագրական իրողութեան, որը բաւական յաւանդական է ժամանակակից բանաստեղծութեանը, ինչ որ իր հերթին երեւի պայմանաւորուած է ուրիշ գործօններով: Բանաստեղծները մեծ մասամբ վարժուել են զուտ նեղ ակումբային ու կոստայական սովորութիւններին եւ դա տարօրինակ չեն համարում: Նրանց կապը Հա-

սարակութեան հետ ամենալատը միայն քաղաքացիական է, բայց ոչ զազափարական ու Հոգեկան:

Այս է տասնեակ տարիներից ի վեր ստեղծուած կացութիւնը: Բանաստեղծութիւնը անպայման կայ իր տարբեր մակարդակներով: Բանաստեղծները շարունակում են տոտօօրէն գրել, բայց սերտ կամ նկատելի կապ չկայ նրանց եւ Հասարակութեան միջև, ոչ թէ որեւէ արտաքին Հարկադրանքի ճնշման տակ, այլ կենքի պայմանների առարկայական դասաւորման բերումով: Այս մթնոլորտում է ձեւաւորում եւ նորահաս բանաստեղծների սերունդը, գոյութիւն ունեցող շափանիչների հիման վրայ փորձելով սահմանելու եւ իր շափանիչները:

Իր տեղում արդէն ստուեց, որ Հասարակութեան նորահաս բանաստեղծների երկերի մէջ նկատուող նորարոյթը տրամադրութիւնները զուտ տեղական բխում չեն, այլ այս կամ այն շափով օտակայ են նաև: Խորհրդային Միութեան միւս աղբիւրի զրականութիւններում: Աւելին. գրանք շատ հեռու չեն եւ արտասիրահրդային երողական երկրներում տարածուած գրական արամադրութիւններից: Կարելի է վկայակոչել մի կողմնակի օրինակ: Յայտնի է, որ արեւելա-եւրոպական երկրներում իշխանութեան զբոսական քաղաքականութիւնը հիմնական գծերով մշակուած է մոսկովիան օրինակով, այդ թւում եւ Արեւելեան Գերմանիայում: Ուստի՝ թւում է՝ թէ Գերմանիայի արեւելեան եւ արեւմտեան մասերում աճող երիտասարդ բանաստեղծները պէտք է խիստ տարբերուեն իրարից ամէն ինչով: Բայց, եթէ հաշուի չառնենք որոշ՝ քաղաքական մթնոլորտով պայմանաւորուած անխուսափելի տարբերութիւնները, շատ զէպքերում ռճական առումով տարբերութիւն ուղղակի չի նկատուած:

Իմ արամադրութեան տակ է, օրինակ, տարիներ օտաջ կազմուած մի ծաղկաբաշտ՝ «Գիքմաճախ» երկրների երի-

տասարդ քնարերգուներն ժողովածուն, որի մէջ ընդգրկուած են 1930 թ. մինչև 1946թ. ծնուած 80 երիտասարդ բանաստեղծներ, առանց աշխարհագրական ու զազափարական խարտիստան (Արևելեան և Արևմտեան Գերմանիայից, Առաքիտից և Շւէյցարիայից)։ Եւ ի՞նչ. եթէ կենսագրական տուեալները չլինեն, շատ յաճախ ուղղակի անկարելի է տարբերել, թէ ո՛վ որտեղ է ապրում ևս գրում։ Բովանդակութեան մէջ կան որոշ տարբերութիւններ ու երանդներ, բայց ձեռի առումով՝ ոչ մի նշանակում է՝ այժմ ամէնուրեք ստիճանաբար ընդհանրանում է բանաստեղծական արտայայտութեան որոշակի ձևերի համակարգ։ Այդ համակարգի գծահատումը զուրո է իմ նպատակից։ Կարելոք իրարութեան հաստատումն է։

Գերմանախոս երկրներէ այս օրինակը միայն մէկն է։ Կարելի է այդ նոյնը համեմատել անգլիացիներ, ֆրանսուզներ, իտալուզներ, իսպանուզներ և այլ բանաստեղծներէ առատօրէն յայտնի նմուշներէ հետ և արդիւնքը նոյնը կը ստացուի։ Թէև երեսոյթը մի գիշ գործանալի, բայց այդպէս է։ Անկախ պետական, զազափակն ու այլևայլ սահմաններից, բանաստեղծական ձևերը ընդօրինակուած ևս տարածուած են ձեռագրերի նման, գրտակցօրէն թէ անգլոսակցօրէն՝ միևնոյն է։ Առայժմ նոյնիսկ գժուար է կըտահել այդ երեսոյթի հետեանքներն ու հետանկարները, կամ գրական ու բացասական լինելու հանգամանքը, բայց ինչ որ կայ՝ անկարելի է շտեմել ու շարժանագրել, այսօր կամ երբեւէ։

Բանաստեղծութիւններ կերտուել են հազարամեակներից ի վեր զանազան երկրներում ևս այլևայլ պայմաններում։ Դրանք կերտուած են ևս այսօր։ Հիմք չըկայ կործնելու, որ կը դադարեն երբեւէ։ Եւ հարց է ծագում, թէ վերջ ի վերջոյ ի՞նչ է բանաստեղծութիւնը, ինչի՞ մէջ է կայանում նրա ինքնութիւնը։

(Մնացեալը յազարգով)

Լ. ՄԻՐՏՉԵԱՆ

Գ. Պ Ը Լ Տ Ե Ա Ն

Անդրատառը, Ինտրա

Եւ Տ. Չրաֆեան

1-2.— Աստուծոյ անունը հետու է աստուած ըլլալէ։ Ինտրա իբրև անուն յղում մըն է վիտայական կրօնա-գրականութեան։ Ինտրա մեծագոյնն է աստուածներուն, տէրը փայլակին ու լոյսին, կուսի աստուածը նաև, որուն կ'ուղղուի կուսողներու ազօթքը կուսէն առաջ, որուն արկածախնդրութիւնները կը կազմեն Ռիկ-Վետան։ Անունը ինքնին արդէն կը նշանակէ լուսավառ, բուռն, եռանդոտ, մեծափափաք, եւ այլն։ Ան է, որ կը պայքարի խաւարի ոգիներուն դէմ ու կ'ազատագրէ բանասրկեալ երկնային կովերը — ամպերը — ու կը կթէ անոնց կաթը՝ կը դառնայ բերրութեան, կենսաւէտութեան խորհրդանիշը։ Իր յաղթանակներէն ետք տւերեալ քաղաքներուն տեղ կառուցել կու տայ արքայանիստ նոր քաղաք մը, որուն ճարտարագետին կը պարտագրէ անհատնում ու յարանոր շինութիւններ, բռնուած՝ յարասեւ դործունէութեան տենդէն, մինչև որ Վիշնուն, մեծ երրորդութեան մէկ անդամը, սորվեցնէ անոր ամէն կատուցումի ու արարքի ժամանակաւոր բնութիւնը, ժամանակին ու պատմութեան ընթացքին շրջանակաւոր, կրկնուող ու դոյ թուալը։ Սանսքրիտ դիւցազներգութեանց յատուկ երեսոյթ է սա յայնանախօսութիւնը, որ դիւցազներգութեան ընդմէջէն կը թելադրէ ժամանակի տեսութիւն մը։

Ռիկ-Վետայի մէջ կը գտնուին Ինտրայի վերագրուած ձօներ, որոնցմէ մէկը կ'ըսէ.

«Յզացայ քերթուած մը, ինչպէս հիւսնը իր գործը կը յղանայ ինչպէս արշաւի լաւ մարզուած ձին ոստումի պահուն.
 ներշնչեալ, կ'ուզեմ որ քերթողները ինձի հայեցողաբար նային վասնզի կը փափաքիմ հասնիլ հեռաւոր ու սիրուած բաներուն...»

Եւ անոնք, ձգելով հոս իրենց նշանները գազտնի
 ճուրադարձեցին երկինքն ու երկիրը գերիշխանութեան մը համար
 եւ իրենց չափերով չափեցին այս երկու ընդարձակութիւնները,
 զանոնք սանձեցին
 բաժնեցին իրարմէ այս երկու մեծութիւնները միացեալ,
 որպէսզի անոնք կենան կայուն» (19)
 Հաստուածին մէջ կը խօսուի քերթողներու մասին, որոնց գործերը մը-

(19).— Չօմիս համար տեսնել L. Renouf քարգմանութիւնը՝ Hymnes Spéciales du Veda, Gallimard, 1956 էջ 29-31: Նոյն տեղեւորութիւն կայ նաև Anthologie Sanskritte, Payot:

առնուած են իբրև նշաններ, որոնց խօսքը կը կոչէ, կ'անուանէ նախագոյն էութիւնը՝ զայն ասեղծելով՝ իբրև երկինք ու երկիր: Քերթողները կը բաժնան, Զափելը անշուշտ հոս շունի իր սովորական իմաստը: Հոս յայդը խօսքըն է: Բառերը եւ անունները ձևեր են, նի: թեղէն մասնիկներ եւ կը ձևաւորեն էութիւնը, երբ կը կոչեն: Նման զկոչը կը բաժնէ, կը հիմնէ, կը ստեղծէ: Զօնը կը բացայայտէ զքերթողութեան խորհուրդը, կը սահմանէ բանաստեղծութիւնը իբրև նախագոյն մի ու ամբողջ էութեան ձևաւորումը, մասնաւորումն ու ստեղծումը:

Կարելի է ընդհանուր եղբեր գտնել Վերաշխարհի կարգ մը թեմաներուն ու Ռիկ-Վետայի միջև (20): Կարելի է նոյնիսկ մասնաւորել նման ընդհանրութիւններ. Ինտրա-աստուծոյ արկածախնդրութիւնները, պայքաբը խաւարին դէմ կը նմանին Վերաշխարհի Ինտրայի ճամբորդութիւններուն, մութի ու լոյսի հակադրութեան: Տեղին է դիտել տալ, որ գրութեան շրջափակումը զլուսին մէջ Ինտրա կը յղուի Պուտային, զպուտայական հրատարակման (Ն. 118), բաղձանքներէ ու պատկերէ խուսափումին: Եղումը այդ հատումին մէջ պատճառական չէ անշուշտ: Հոն է, որ կը յայտնուի լեզուի հարցը ընդհանուրի ու մասնաւորի թեմային մէջ: Անելին՝ մօտիկ ընթերցում մը Վերաշխարհի վերջին էջերուն կրնայ ստորագծել սա յատկանշումները. «Եկա՛ր. իմա ես. այնպէս չէ՞. կը սիրես դիս...», Անուցին կարիւրը, ասկայորդին, որ կը կանչէր քեզի՛. կը լսե՛ս որտե՛ս թուումը. ես քեզի՛ կը ճանչնայի շատոնց. զարե՛ր է վեր...» (21): Ընդգծուած բառերը եւ թերեւս նոյնիսկ զարե՛ր է վերքը կարելի է նկատել ուղղակի յղում Ինտրա-աստուծոյ: Թէ յղումը տեղի կ'ունենայ գրութեան վերջին էջերուն՝ ահաւասիկ նշան մը՝ ընթեռնելի ինքնին: Բայց ընթերցումը՝ քէլ անդին: Էականը՝ իբրև կանխում, այն է, որ անունը կը ծնի գրութեան, կարծէք ամբողջ գրութիւնը ըլլա՞ր անդրաստուծի մեքենայ մը, ուրիշ կը ծնի աստուծոյն անուն մը՝ իր կարգին բացող յղումներու ամբողջ կայսրութիւն մը:

Ինչո՞ւ սակայն շխտելի ճերմակ մասին, վերածել Ինտրան Զրաքեանի հերոսին, այնպէս՝ ինչպէս Երեւանի քննադատութիւնը կը խօսի, բանաստեղծութեան հատորի մը առջեւ, անոր զնաբական հերոսէն: Վարկածը զուրկ չէ որոշ քաշողութենէ, բայց կը մնայ անբաւարար: Ի՞նչ հերոս, որ իր անունը կը դնէ գրքին վրայ իբրև անոր ճշգրիտակցը — հասկնալի՞, որ հերոսը անխուսափելիորէն կը տանի մեզ Հեղինակին. յղացքները իբրեւարեք են — եւ գրութեան հրատարակումէն երկու տարի յետոյ կը կրկնէ իր ճերմակութիւնը Վանաստանի գլխուն: Մնաց որ, Ինտրա-աստուծոյ չի խաղար հե-

(20).— Ո՛չ միայն Վերաշխարհը կարելի է որոշ չափով քրտարել, այլև վարումսի ճշտութեւ, ճշմարտութեւ Երկրային մէջ, քերթուածը կը կրէ բնաբան մը Թիկ-Վետային: Թիկ-Վետայի եւ սամսքիս գրականութեան մուտքը Արեւմուտ կը սկսի Եփեսոսացի, անուանող իբրև Արգարծոն ազգեցութիւն: Անցեալ դարու 80ական թուականներուն լոյս կը տեսնեն բազմաթիւ թարգմանութիւններ, որոնք ծանօթ էին ո՛չ միայն վարումսին ու Զրաքեանին, այլև, Ախաթոնին. «Գրեցութեան» ունի Թիկ-Վետային վերջուած բնաբան մը. ա՛յն՝ գոր նիցէ տեղադրած է իր Վերաշխարհը հետարին մուտքին (Morgenrothe, 1881): Անուանիկ աստուծաբանութեան արժանի անպակ գետին մը: Վերաշխարհը կարելի է յայն ատեւ չնկելիս — մասնաւորի եւ ընդհանուրի ծարր խորհրդանշանի կազմում —, J. Böhm M. Eckart. Անտարաններուն, ամբողջ արեւմտեան ու արեւելեան մշակութեան թանկ:

(21).— Վերաշխարհ 1906, էջ 250: Ընդգծումները՝ մեր կողմէ:

րոսի դեր մը դրութեան մէջ, այլ միայն իբրև անուն կը խաղայ յարացոյցի դեր: Հերոս մը, որ իր անունը կը գծէ ո՛չ միայն գրութեան սակը, այլև նակախն, իբրև հեղինակ, ահաւասիկ երևոյթ մը, որ կը լուծէ հերոս-հեղինակ յղացքները. այս լուծումն է, որ հերոսի վարկածը կը գոյնէ:

1-3.— Յղումը կը ստեղծէ յարացուցային յարաբերութիւն, զոր կարեւր է կարգալի իբրև Ինտրա-աստուծոյ վերամարմնաւորումը Ձրաքեանի անունին մէջ եւ մարմնին...: Հոգիներու այլակերպման ու վերամարմնաւորման սեսութեան հետքերը ընթեռնելի են «Ներաշխարհի մէջ, եւ ցորչափ կը տեսէր աղօթքը, ոչ իսկ վայրկեան մը՝ կը մնայի անորոշ, սուզեալ, երազագայլ. անասուգապէս, բայց հոգեւին բղձալով այն աղու բաներուն, որ աղօթքին տեսիլներուն մէջ կը ծփային, կը հետասուզուէին, ենթադրելով, մտածելով զանոնք, կարծես զանոնք երկար ատեն զիտնալի ետք մտցած, իրենց «քողած» սպաւորութեան միլիոնաւորութեան կարծես յիշելով, անծին ու շփոթ մանաշարութեամբ մը հետասուզելով անոնց հեռանալութիւնը, որ վերջին բառերէն ետք դեռ կ'երկարաձգուէր, ու կը լուծուէր, կը ցնդէր, աղիկի ըզմաստեութեամբ մը նախազգուշով յաջորդող ժամանակները, բայց որոշապէս զի՞ս նախապնդելով այն խորունկ նոյնութեամբ, որով, ինչպէս ամէնուրեք՝ բան մը նոր չէ տարիքին մէջ, եթէ ոչ այն անագին երազագոյնութիւնը, կիսեմով բեռնուոր, ուր նախկին գմայլումը՝ կարծես նախկին անդրակիստութեան մը աշխարհութեամբը քիթի գմայլումը կը քայծօծի»(22): Ձրաքեան իր յողումաշարքին մէջ, մեր կողմէ ընդգծուած երկրորդ մասը մէջբերելէ յետոյ կը գրէ. «Ի՞նչ է զոր օր. սա նախկին անդրակիստութիւնը, եւ անով քիթի եղած գմայլումը: Ձեռնարկեր բացատրելու. միայն յայտնի է ոմանց, որ հոս spiritismէն եկած գաղափարը կայ յաստիջառնայն ապրուած կեանքի մը, որ սակայն չեա զիտեր ինչու յիշուեր է այն պարբերութեան մէջ, ուր պէտք չկայ իրեն»(23): Նախկին անդրակիստութիւնը իբրև զմայլում կը յայտնուի ներկայ յիշողութեան մէջ, այնպէս՝ ինչպէս զէպի Թոնես գագոյ մեծ բաղձանքը ինքզինք կը տեղաւորէ «անհունին կորիւնին» մէջ. «Անհունին կորիւնը, հակայորդին, որ կը կանչէր քիզի՝ կը լսէ՛ս սրբիս թուումը. ես քիզի կը նանչնայի շատոնց. դարերէ ի վեր»(24): Ներկայ բաղձանքին մէջ կը խօսի դարաւոր բաղձանք մը. հինը կը վերագառնայ նորին մէջ, կարծէք յաւիտենական վերադարձը ըլլար նոյն-անուան մէջ:

Ի՞նչ է «Ներաշխարհ»ը, եթէ ոչ զմայլում մը ինքնին, որուն կ'ակնարկէ Ձրաքեան նոյն յողումաշարքին մէջ. «Ներաշխարհ»ը բնական երևոյթ

(22).— Ն. էջ 168-169: Ընդգծումները մեր կողմէ: Առաջին ընդգծուած մասը կարելի է ուղղակիորէն յղել Պրատտի «Փնտրանքի եւ Մենտէի տեսութիւններուն»:
 (23).— ՆՉԳ.Գ:
 (24).— Ն. էջ 250. ընդգծումը մեր կողմէ: Թէ Ձրաքեան կը հաւատար վերամարմնաւորման, այս եւ այլ զագնաբացակամ Վարդապետութիւններուն, ապացոյց՝ անոր «Յայտնութիւնը Անդրաշխարհէն» յօդուածը «Ոտան»ի մէջ: Թէ գիտակեանքին հետք վարդապետութիւններ անիմա եւ, այլ ետք — Ձրաքեան գիտակեց է առաջ իք ՆՉԳ յօդուածին վերջին մտնի մէջ: Եակամբ այն է, որ Ձրաքեան իր հիմնութիւնը կը գործածէ մեծ գրութիւններու մէջ եւ հետու է ըլլալէ այն շխարհուած բանակեանքները, որուն կ'ակնարկեմ մտքիկ (տես. Վ. Վերակեանքի յօդուածը Ձրաքեանի մտքի, «Մարտիր Երևանի Համալսարան», 1972. քիւ 8):

մէ. և քանի որ ընդհանրապէս ինացում մէջ մտնի բաներու, և տողորուն է խորին բարոյապաշտութեամբ՝ բնական երեւոյթ մէջ, որ ոչինչ ունի այլատերեալ ու վատառողջ, և բացայայտօրէն կենսալի է...»(25): Գրութիւնը, առարկայականօրէն կը դառնայ հիացում մը, նախկին զմայլումը կեանքին առջեւ, կենսաէտութեան հաստատումը և այլակերպման վայրը, եթէ ոչ աչքը, նախկին աստուծոյ: Ինտրա՝ վերադարձը հին ու հետադարձ աստուծոյ. իսկ Ձրաքեանի անուր՝ վայրը՝ այդ վերադարձին: Ազատ՝ յը առ, ա՛յն՝ որ անուրին անդրաստուծու տեղի կ'ունենայ այնքան զկատարեալ ներդրումութեամբ: Անունը կը դադրի յանկարծ պատահականի երեւոյթ անելու կը դառնայ նշանը աւետումին: Աստուծոյ մը, Միքական, խուժումը Ձրաքեանէ ներս, ասոր անունէն ներս, կամ Ձրաքեանի փակագծումը Ինտրայի մուտքով կը կեդրոնացնէ գրքին «Հեղինակութիւնը» միթական ներկայութեան մը վրայ, բացակայ ինքնին, անմարդկային ու շփոթանց ներկայութիւն, որ ճիշդ իբրեւ այդ՝ իբրեւ Միքս (որ խօսելի կը դարձնէ ճշմարտութեան համաձայնութիւն խուսափող կացութիւն մը) ճեղք մը կը բանայ Ձրաքեան-մահականացու անհատին և Ինտրայի միջեւ(26):

Այս բոլորը, իր ոգեպաշտական ու զիտէլոյապաշտ զունաւորումով, կրնան թուիլ անհամագիւ, բայց աշխատող իր ուրոյն արամարանութեամբ: Ինչ որ կը նկատուի ոգեպաշտութիւն զնորաշխարհէն ներս կամ դուրս, օրուն կը կապուի Անունի անդրաստուծան հարցը, հոս, ունի իր տեղը գրութեան մէջ և զայն փակագծել կամ արտաքսել զաղտնագիտութեան ընդհանուր մեղադրանքին տակ՝ կը նշանակէ ինչպէս նեղամտութեան ու կեղծ դրոյապաշտութեան մը մէջ: Այս նշումը հոս չի արուիք իբրեւ «մութ գիտութիւններու» պաշտպանութիւն կամ գոյք, ինչ օր, իր կարգին, պիտի ըլլար այլ, բայց հաւասար դատում Ինտրայի հարատեցը պաղափարներուն: Խօսիլ զխաթարեալ բանականութենէ՝ կամ «հիւանդագին երեւակայութենէ» կը նշանակէ ապաստանիլ արգէն իսկ ինքնորոշեալ շատող քանակականութեան մը մէջ, այսինքն՝ սովորական ու ընկալեալ մասձեւակերպութիւն:

Վերամարմնաւորման տեսութիւնը, որքան ալ դրաւիչ թուի, անկարող է դոցելու բացը՝ միթոսին և գրութեան: Միթոսին մեր յղումը փառաօրէն կը մեկնի գրութեան տարրերէն: Ասոր համար է, որ անունի հարցը անհրաժեշտ է տեղափոխել գրութեան մակարդակին վրայ:

1.4.— Ըսինք, որ անունի հարցը աւանդական ծածկանունային երեւոյթ մը չէ և ստիկա հակառակ Ձրաքեանի իսկ հաստատումին: Կամկանուն մը միշտ կը յղէ ծածկուած Հեղինակութեան մը. իր դերն է թէ՛ ծածկել իսկական անուն-մարդը, թէ՛ յայտնաբերել զինք մասամբ: Քիչ անգամ ծածկանունը կը մնայ ծածկուած ու չի յղեր ծածկուածին: Այն ատեն ծածկումը կը մնար անկատարի ու ծածկանունը կը դառնար անուն, այսինքն՝ ընդհանրութեան մը մէջ որոշադրեալ անձնաւորութիւն: Անոր կրկնութիւնը գրութիւններուն տակ կը կազմէ Հեղինակութեան միութիւնը հիմնող յղացման ու ծրագրի ամբողջականութիւնը:

Այս անկիւնէն դիտուած՝ Ինտրա ծածկանուն չէ, այլ տուն՝ տանց ազգանունի ու առձանունի: Գրութեանական յղում մը կը տանի աստուծոյ

(25).— ՆՃԻ. Ծ.
 (26).— Թէ Ձրաքեան օր մը զգաց այդ բոլորը ու փորձարկեց Աստուծոյ խուժումը մարմնէն ներս՝ կը մնայ ծրկորգակամ, կենսագրական կարեւորը միքսով է և տնայ զբժանաբիւնը գրութեան մէջ:

մը, ինչ որ կը նշանակէ, թէ չէ հետեւցուցած ժարդուն ընկերային անունէն — ընտանեկան անունը այն է, զոր ընկերութիւն մը կու տայ իր անդամներէն ոմանց. անունը միշտ այն է, զոր կը կարգանք միտին աւելորուն մէջ — ։ Անունը կը կազուի գրութեան մը, որուն հետ կու գայ ։ Ստորագրութիւն մըն է ։ Բայց ի՞նչ է ստորագրութիւն մը ։

Աւանդականօրէն ստորագրութիւն մը գրեթէ մաս կը կազմէ գրութեան. կը բերէ անուն մը, անձ մը, յղումի կեդրոն մը, զոր, իր կարգին, կարելի է գիտեղել ընկերային ցուցակումին մէջ. իր համադասները զինք կը կապեն ամբողջ ընկերային ու պատմական կառայցի մը, ուր անունը կ'առնէ տեղ ու դիրք, ենթակայութիւն ու տեսնելու եղանակ — աշխարհմասնութիւն, ինչպէս կ'ըսեն ։ Անստորագիր գրութիւն մը անանուն է եւ կը մնայ անզետեղելի, առկախ, գրեթէ անվաւերական ու կասկածելի, դուրս՝ օրինականութեան սահմաններէն ։ Ստորագրութիւն մը «անհատին» անմիջական ներկայութիւնը կը բերէ. կնիք մըն է բերող ժարդուն ուրոյն, մտնաւորեալ անձնականութիւնը, անոր «անկրկնելի» եւ «անփոխարինելի» իսկութիւնը՝ ստոր գիտակցութեամբ պայմանաւոր ։ Անոր բացակայութիւնը կը կեդրոնադրէ գրութիւն մը ։ Անոր կրկնութիւնը «հեղինակին», «մարդուն» իսկ նորնութիւնն է եւ նոյնութեան գիտակցութիւնը ։ Գիտակցութեան ջնջումը, առնչազն յիմարութեան պարագային, ստորագրութիւնը կը դարձնէ անվաւեր ։ — Օրինակգիրքեր մասնաւոր յողուածներ կը հաստատեն այս մասին — ։ Ստորագրութիւն մը յատկութիւն չէ, այլ «գոյացութիւն» մը համապատասխան անձին ։ Անիկա կը ստորագծէ գրութեան մը սահմանումը. աւելի՛ն. կը բերէ գրութեան վերջը նւ սկիզբը — սկսիլը իրրեւ գրութիւն ։ Մանօթ է գոյացութիւնը «կեղծ» ստորագրութեան, որ կը փորձէ նմանիլ այլ եւ նախադոյ ստորագրութեան մը, կը ջնջէ ստորագրութեան մէկութիւնը՝ բանալով կրկնումի, դիմակումի կարելիութիւնը ։ Կեղծութիւնը կը ծնի, երբ կը յայտնուի տարբերութիւնը անունին եւ անձին, ստորագրութեան ու ձեռքին ։

Ինտրա ստորագրութիւն մըն է՝ գրուած գրութեան մը սկիզբը. միշտ տպուած, գրուած գրքի մը նակտին՝ անիկա կը բանայ գրութիւնը ։ Ո՛չ կեղծանուն, ոչ ծածկանուն, քանի որ ո՛չ կը ծածկէ, ոչ ալ կը կեղծէ. անունն է, որ կը գանցէ ծածկումի, ինչպէս կեղծ-անկեղծի երկուութիւնը ։ Ինտրա չի ծածկեր Ձրաքեանը եւ ասիկա ոչ մէկ տեղ ։

1.5.— Անհրաժեշտ է կարգալ Ձրաքեան-Ինտրա օրինակասութիւնը(27) գրութեանական մակարդակին վրայ ։

«Ներաշխարհ»ի ծանօթութիւնը աւելի է քան բառին տեղեկատուական ընթացիկ իմաստը ։ Անիկա «համառօտ դասաստան» մըն է, կը կազմէ Ձրաքեանի կողմէ գրուած ներածութիւն մը եւ նկատի ունի Ինտրան, որուն մասին կը գրուի երրորդ դէմքով ։ «Ներաշխարհն հեղինակէն դիտուած» գրութեան մէջ նոյնպէս Ինտրա երրորդ դէմքն է եւ Ձրաքեան՝ ընթերցողը, առաջին դէմքը ։ Գրութեան մուտքի առաջին պարբերութեան մէջ կը կարգանք հետեւեալը. «Այս գրքին հեղինակն, երբ զայն կը գրէր, խորհեցաւ որ անոր հրատարակութեան յետոյ քննադատէր զայն ինքն իսկ ։ Արդէն գրքին ըսկիզբը գրուած ծանօթութեան մէջ համառօտիւ իր դասաստանն ըրաւ իբր նախապատրաստութիւն այդ առաջադրեալ քննադատութեան, որու դադարփարն այսօր կ'իրադրուի... ։ Իմ ընկիւխ ուրեմն ուրիշ բան պիտի չըլլայ գրեթէ, քան ընդլայնել ինչ որ գրքին ծանօթութեան մէջ գիտել տուած էի

(27) — Dispositif :

ինչ-ինչ հանդամանքներուն նկատմամբ»(28)։ Մէջբերուած հատուածներուն մէջ, որոնք կը կազմեն սկիզբի ու վերջը նոյն պարբերութեան, Ձրաքեան կը չնշտէ յօդուածաշարքին ու ծանօթութեան կապին վրայ. առաջինը կը նըկատուի վերջինին ընդլայնումը։

Ծանօթութիւնը գրութիւն մըն է, որ առաջուրնէ, գործին հետ տրւած, կը բերէ գործը, կը դնէ զայն ծանօթի շրջանակին մէջ — գրութեան թուականը, թերինները։ Անծանօթ գործը այսպէս կ'ենթարկուի ծանօթացումի աշխատանքի մը, որ տեղի կ'ունենայ Ձրաքեանի գրութեամբ։ Ծանօթացումը որով, արդէն ծանօթ գրքին, կը մտնէ անոր մտերմութենէն ներս, կը բանայ զայն ընթերցումի հանրութեան ու հանրայնութեան։ Ծանօթացումը կը կարգայ գրութիւնը «սկիզբէն» ու կ'անցընէ զայն դատումի, արժեւորումի մը մաղէն. այսինքն՝ անհատականին կը հաղորդէ հանրային շահանքը. այս իմաստով «գոտառատանը» կը շարժի ընկերային կալուածին մէջ ու կը դառնայ որով շահով ընդհանրացման փորձ։

Թէ՛ ծանօթութեան եւ թէ՛ անկէ բխող յօդուածաշարքին մէջ Ինտրա կը մնայ երրորդ Փէժքի տակ, իբրեւ քացակայ անձնաւորութիւն, որուն մասին կարելի է խօսիլ հանրութեան մէջ։ Ձրաքեան՝ ի՛նք, կը մտնէ առաջին գէժքով։ Երրորդ գէժքի գործածութիւնը կտրելի էր նկատել ձեւական» ու «քաղաքակարկան», եթէ նոյն հատուածին մէջ Ձրաքեան ինքն իր մասին չխօսէր առաջին գէժքով։ Սակայն չի վարաներ գրել. «Իմ ըսելիքս», «գրիտել տուած էի», եւ այլն, ապահովելով այսպէս ստորագրութեան նոյնութեան ստանձնումը։ Ձրաքեան կը գրէ Ինտրայի մասին այնպէս՝ ինչպէս Ինտրա պիտի գրէ ինքնին մասին։ Աւելցնենք ասոր հետացման փորձ մը նկատելի ծանօթութեան մէջ, ուր «հեղինակին» անցեալին պատկանող գաղափարներ ներկային մէջ կը մերժուին կամ աւելի ճիշդ ըսուած՝ չեն ստանձնուիր(29)։ Եւր կը գրէ երրորդի մը մասին, որ գրքին մէջ, հետու, կը գրէ Եսով։ Ինտրանուններու այս բախումը սակայն չի նշանակեր «անձնորոշ տարբերութիւն»։ Անոնց կիրարկումը կը ջրուէ Եսին միութիւնը եւ ենթակայութիւնը — իբրեւ տիրութեան մը հիմ — կը վերածէ զայն, գրութեանական մակարդակին վերայ, լեզուական ու քերականական պաշտօնի։

Վերոյիշեալ հատուածին մէջ Ձրաքեան կը գրէր, թէ գրողական աշխատանքի իսկ պահուծ Ինտրա, կամ աւելի մօտ գրութեան «հեղինակը» կը մտածէր գրքի քննադատութեան մասին։ Փաստօրէն Ձրաքեան կը կարգար գրութիւնը գրուելու իսկ պահուծ եւ ասիկա իբրեւ «քննադատութիւն»։ Ահա վայրը, ուր Ինտրա ու Ձրաքեան առանկազոյն շահով իրարու մօտ են, մօտ՝ մեծ հեռաւորութեան մը մէջ։ Բայց նախ՝ ի՛նչ է քննադատութիւնը Ձրաքեանի համար։

Յօդուածաշարքին մէջ Ձրաքեան կը գրէ. «Եւ եթէ ընթերցողներուն մեծամասնութեան առաջին գործն է անիմանալի գտնել նմանօրինակ երկույթներով ու նորատեսիլ ալ գիրք մը՝ քննադատութեան գործն է պատճառաբանել այդ երկույթները, գտնել անոնց հաւանելի ու նոյնիսկ գրուատելի պատճառները, եթէ կան իրօք, եւ շուարմամբ հարեւանցի դատող ընթերցողին միտքն յանկեցնել (orienter)»(30)։ Եթէ ընթերցողներու մեծամասնու-

(28).— ՆԱԻ. Ա. ընդգծումները մեր կողմէ։
(29).— «Վերոյիշեալ ժամանակիս առաջին եւ Ուսու հեղինակիմ ինչ-ինչ գաղափարները, որոնք յայտ անոր լուծիմ այլիս այն երբեմնի կշիռը, գր վերագրած էր անոնց. քերական ճայք բանք պէտք է մտածել թանձ ձիմ համար...» Ե. էջ ԺԵ։

թիւնը — կարելի է շնչտնէ երկու բառերուն վրայ — կը շփոթի անսովորին առջեւ, քննադատութիւնը կը թուի փնտրտուք մը պատճառներու, ան-սովորի եւ ան-իմանալիի բաց-ատրութիւն — ի բաց գնել, բանալ, կապուածը քակել, բայց նաեւ հեռացնել — Գննութիւն ու դատում, այսինքն՝ տրամա-խոհական խօսք եւ ոչ զէմյանդիմանական հակադրացութիւն: Գննադատու-թիւնը կ'ենթադրէ գործին հետ աշխատող բայց զայն յիտող գիտակցութիւն, գործին հանդէպ հեռաւորութիւն ու պրոսութիւն: Իսկ գիտակցութիւնը շատ տարտամօրէն զոյութիւն կը թուի ունենալ Ինտրայի մօտ. «Ինտրա շատ տար-տամօրէն գիտակից է իր փիլիսոփայական այլազան եւ իրարածերժ զազա-փարհներուն իւրաքանչիւրին տեսակին ասարդութեան...»(31): Ուրիշ տեղ տարտամ գիտակցութիւնը ամուշ է. «բայց թերութեանց առջեւ հեղինակին պատճառարանող գիտակցութիւնը բաւական գրաւական մը կրնա՞յ ըլլալ հետագայ երկերու լաւութեան՝ Ինտրա վտանգ չէ այդ մասին: Թերեւս ինչ որ ինքը տարիքի մը վերադարձով ժամանակաւոր կը կարծէ՝ տեւական ըլ-լայ, վերաբերած ըլլալով խառնուածքին ու նկարագրին. կամ՝ միւս կողմէ՝ զուցէ՛ այդ պակասութեանց քարձուժը կարելի ըլլայ ինչ-ինչ յատկութեանց նուազամօր»(32): Գրեթէ երկախօտական այս հատուածին մէջ Ինտրայի գի-տակցութիւնը կը թուի աւելի զէմյանդիմանական — բառը Զրաքեանինն է — քան պատճառարանող. աւելի աշօն է, քան դիտող գիտակցութիւն. իբրեւ այդ՝ կը դառնայ անբաւարար, թերի, դատուած գիտակցութիւն, Զրաքեանի գտող, դատապարտող, գիտող գիտակցութեան առջեւ:

Երկու գիտակցութիւններու յարաբերութիւնը հիմնուած է երկախօ-տութեան մը վրայ, որուն վերջին խօսքը Զրաքեանինն է եւ տեղի կ'ունենայ անոր գրութեան մէջ: Վերը արդէն խօսեցանք, հապճեպ, երկախօտութեան մասին: Ահա ուրիշ օրինակ մը. «Ի՛նչ որ դատապարտելի կը գտնեմ՝ Ինտրայի անփութութիւնն է, որով սկզբնական վիճակին մէջ թողած է զազափարհնե-րը, զգո իր յոյզերն ստեղծեր են, զոր իր արցունքները պսպղեցուցեր են իր աչքերուն, կամ որք յուզեր են զինքը: Եթէ պիտի առարկէ, թէ իր զաղա-փարհներն հակակշիռով, քննադատելով, ու միութեան մ'ի նպաստ յօտելով կը վախճար, որ դանձր բերող կամ անոնցմէ ծնող յոյզը կը խամբեցնէր՝ կը պատասխանեմ իրեն, թէ իր ճշմարտաբերութիւնը պէտք չէր, որ երկնչէր իր խտապահանջութեանն եւ, ընդհակառակն, խանդի նոր պատճառ մը պէտք էր, որ գտնէր ճշգրտութեան մէջ»(33): Զրաքեան եւ Ինտրա կը շարժին եր-կախօտութեան Երբին մէջ, ուր եթէ խօսակիցները կը պահեն իրենց առանձ-նայատկութիւնները, անոնցմէ մէկը սակայն կ'ենթադրուի միւսին դատաա-տանին, կը դիտուի առանց դիտելու: Թատերական այս շատ որոշ կառոյ-ցին մէջ Զրաքեան գիտէ ու կ'ըսէ ճշմարտը: Անոր խօսքը կը պրոսի ճշմար-տութեան տոժարին մէջ, «Ներաշխարհ»ի իբրեւ ներածութիւն, իբրեւ ուղե-ցոյց: Երկախօտութիւնը, հետեւաբար, տեղի կ'ունենայ խօսակիցներու հե-ռաւորութեան մէջ, այն պատիկ հեռաւորութեան մէջ, զոր գիտակցութիւնը կը բանայ:

(Շար. 2 եւ վերջը յաջորդով)

Գ. ՊՇԼՏԵԱՆ

(30) — ՆՆԳ. Գ:
 (31) — ՆՆԳ. Թ:
 (32) — «Ներաշխարհ», էջ 62:
 (33) — ՆՆԳ. Թ:

Բ. Կ Ռ Ա Ն Ե Ա Ն

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՄԱՍԻՆ



Տարիներէ ի վեր զիս կը տանջէ մեր մշակոյթի պատմութիւնը: Եստ զիչ զիտենք մեր մշակոյթի մասին: Ո՛չ միայն այն իմաստով, որ դեռ շատ մը անյայտներ կան եւ պրպտելիք ու երեւան հանելիք յայտնութիւններ, այլեւ դեռ Հաւաքուած, Համադրուած եւ արժեւորուած չեն այն պատկանելի հրատարակութիւնները, որոնք լոյս տեսած են օտարներու կողմէ, մեր մշակոյթի մասին: Ձե՛մ դիտեր, թէ մատենագիտութիւն մը (bibliography) կատարուած է տեղ մը: Կամ, հայոց մշակոյթի մասին լոյս ընծայուած գրքերու դրադարան մը սարքուած է տեղ մը, ուր հաւաքուած ըլլային բոլոր աւիստեր: Որպէսզի ուսումնասիրուին, բաղդատուին, նիւթերը դասաւորուին՝ մեր մշակոյթի ապագայ պատմութեան համար: Ինչպէս սկսաւ ընել թ. Թորամանեան հայկական ճարտարապետութեան մասին: Եստ աւելի գրուած է մեր մասին, քան մեր մտաւորականներն իսկ կը կարծեն կամ տեղեակ են:

Միւս կողմէ, մշակոյթի, ի՛ մասնաւորի ճարտարապետութեան մասին լոյս ընծայուած նոր հրատարակութիւններու մէջ, այժմ աւելի յաճախ կը յիշուին Ուրարտուն եւ Հայաստանը: Ուրարտուն մեծ անձանութեան մէկն է, Եւրուսկներու նման: Հետզհետէ ուշադրութեան կ'արժանանայ եւ նոր ու ցնցող յայտնութիւններու կը յանդի: Պիտարովսկի, Կիրյման եւ աւելի նորեր:

Ուրարտական քաղաքակրթութիւնն

ու մշակոյթը, ըստ երեւոյթին, եղած են շատ աւելի բարձր, քան մեզի յայտնի էր: Եւ իր ազդեցութիւնը տարածուած էր շատ հեռուներ՝ Յունաստան, Իտալիա, Իրան, եւայլն, եւ այդ ազդեցութիւնը եղած է Նշանակելի եւ ինքնատիպ Կառուցողական արուեստի, քանդակագործութեան, մետաղագործութեան եւ ջրարաշխութեան վարպետներ եղած են ուրարտացիները: Նոր պեղումներ եւ գիտական ուսումնասիրութիւններ, վըրտահարար, պիտի երեւան հանեն ցնցիչ յայտնութիւններ:

Սփիւռքի մէջ ունինք հազիւ մէկ-երկու մեծահաս մասնագէտներ, որ կը գրադին մեր մշակոյթի հետազոտութեանը: Հայաստանի մէջ կը կատարուի աւելին: Բայց զիչ է, անբաւարար է, կազմակերպուած չէ: Ատիկա վիթխարի գործ է եւ Համապատասխան նիւթական միջոցներու եւ նուիրեալ մասնագէտներու հոյի մը կը կարտոյ: Յիւնամեակներ, կեանքեր պէտք է մաշին, որպէսզի հայոց մշակոյթի պատմութեան նիւթերը հաւաքուին: Ասոր պիտի հետեւի զըտումը, Համադրումը, դասակարգումը եւ ամենաշփուարինը՝ բաղդատական արժեւորումը: Ապա, պիտի հետեւի ինքը՝ կոթողական երկը: Կասկածէ վեր է, որ մեր նպաստը Համաշխարհային մշակոյթին նշանակելի է, պատկանելի իսկ: Յիշատակութեան եւ Հպարտութեան արժանի: Եստ աւելի, քան մենք կը կարծենք:

Քանի ժը մէջըբրումներ, առանց շատ ընդլայնելու:

Փրոֆ. Պ. Պ. Պրոտրովսկիի գրքի անդիւրէն թարգմանութիւնը լոյս տեսաւ 1957ին, «Ուրարտու» խորագրով: Հեղինակը կը գրէ.

«Ուրարտուն մինչեւ իսկ սկսաւ Ասորեստանէն տաջ անցնիլ: Սարտուրիի արձանագրութիւններուն մէջ, Ք. Ա. ութերորդ դարուն, ռազմական յաջողութիւններ Ասորեստանի դէմ, ուրարտական հողերու զգալի ընդարձակում եւ քաղաքացիական Միջերկրական, հետագայ հակակշռովը առեւտրական շաքիւղանց կարեւոր մասըաներու: Այս նուաճումով, Ուրարտու ազատեց Փոքր Ասիան ասորական տիրապետութենէ եւ ուրարտական մշակույթը սկսաւ իմբզիմբ զգալի դարձընել Փոքր Ասիոյ եւ միջերկրականեան երկիրներու մէջ: Ուրարտական պրոնզէ արձաններ գտնուեցան Փոնտոսի թագաւոր Կորտիսի գամբարանին մէջ (Ք. Ա. Ը. դարու կէսերուն) եւ կաթսաներ թեւաւոր մարդկային կերպարաններու եւ ցուլերու տեսքով, ինչպէս նաեւ փոքր ամաններ՝ կնիզանիներու գլուխներով»:

«Ուրարտական արուեստի նմանօրինակ տիպարներ ո՛ր միայն թափանցեցին Յունաստանի թերակղզին եւ իր կղզիները, այլեւ Իտալիա, եւ ուրարտական արտադրութիւններ սկսան ծառայել իրրեւ նախադիպ փոքր առարկաներու: Հնուանարար այս շրջանին էր, որ միջերկրականեան աւազանին շուրջ երեսն եկաւ տիպարը տանարներու, նակատին սիւնաշարքով եւ pedimentով (յունական տանարի վերեւի եռանկյուն մասը) կառուցուած քարաշէն խորիսի մը վրայ, — ինչպէս գիտեմք ասորական քանդակներէն եւ փաստաբաղթերէն, — որոնք Ուրարտուի մէջ գոյութիւն ունէին Ը. դարու վերջերուն իսկ»:

Յիշեալ տանարին քանդակը կը գտնուի Սարկոնի պալատի քանդակներուն մէջ:

Պրոտրովսկի, այլ տեղ, կը շարունակէ.

«Մուսասիի խալտի տանարի մարտարայնութիւնը բացառիկ հետաքրքրութիւն կը ներկայացնէ եւ անսպասելի է, որովհետեւ բոլորովին տարբեր է Միջագետքի ծանօթ քարեակաւ կամ ասորական տանարներէն: Առանկ եւս, սիւնաշարքով եւ pedimentով ծանօթ ամենաին տանարն է, յատկանիշներ, որոնք յատուկ են Փոքր Ասիոյ տանարներու ճարտարապետութեան, ուրիշ անցան Յունաստան»:

Կրեա՞ք երեւակայել: Յունական հայկապ տանարի նախատիպը ծագում առած է Ուրարտուի մէջ, ինչպէս հետագային, նոյն բարձրասնդակին վրայ ծագում պիտի առնէին Բոսան եւ Գոթական ճարտարապետութեան սկզբունքները: Եարունակներ:

«Մեծն Կիրոսի դամբարանը (559-530 Ք. Ա.) Պագարֆատանի մէջ, կառուցուած խոշոր կրաքարէ, իրարու գծայնիօրէն գոլուած, ի յայտ կը թեր ուրարտական նարտարայնութեան ազդեցութիւնը»: (Հէիմ, Մերձաւոր եւ Միջին Արեւելի արուեստը», Փրոֆ. Գ. Ճ. Տիւրի, 1969):

1951ին Փարիզի մէջ լոյս տեսաւ Փրոֆ. Բ. Կիրլժանի «Իրան» հատորը, որ երեք տարի ետք Պելիզին շարքին մէջ եւս երեւցաւ: Իր գրքին մէջ, էջ 91-92, կը գրէ.

«Պեզումներ երեսն հանցին գոյութիւնը ուրարտական ամրապնդուած քաղաքներու՝ կիկլոպեան կառոյցով, որ անծանօթ էր Միջագետքի դաշտային բնակիչներուն: Իրենց (ուրարտական) նարտարայնութեան մէկ մասնաշաղկապիւնն էր imposte, որ երբեք չէր փոխակերպուեր խոյակաւոր սիւնի մը, բայց զարգարուած էր գոյց մը խոյաղներով (volutes), կազմելով օգակ մը նախադիպական սիւնի զարգացման մէջ»:

Աւելի անդին.

«Կա՛րճ. կային նարտարայնական կարգ մը մասնաշաղկապիւններ, որոնց պիտի հանդիպէինք պարսիկներու մօտ, Պագարֆատանի եւ Պերսպոլիսի եւ այն վայրերուն մէջ, զորս նուանցին՝ Ու-

րարտուի սահմանները լքել է ետք»:

«Երբ մտամ Իրան, պարսիկները հաստատուեցան (աւատական կազմակերպութեամբ), երիտասարդ եւ ուժական քաղաքացիական սահմաններուն վրայ (Ուրարտու) եւ *փոխ առին առատորէն անոր քաղաքակրթութիւնէն»*:

Եւ,

Հետագային, պարսիկները եւս ինկան Ուրարտուի իշխանութեան տակ եւ... «Յայտնի չէ, թէ պարսիկները որքան տուն մնացին ուրարտական սիրակալութեան տակ, բայց երբ լինցին այդ շրջանը, արդէն իբրև որամագլուխ ունին քաւակաւաշափ ծանօթութիւն այդ քաղաքակրթութեան մասին, անոր կարգ մը մասնայատկութիւնները իրենց հետ տանելու համար: Ասիկա մասնաւորաբար ակնյայտ է իրենց ճարտարապետութեան մէջ, արուեստ մը՝ որուն մասին, իրենց քափառաշրջիկ գոյութեան ընթացքին ոչինչ գիտէին եւ գոր գարգացուցին այն երկրին մէջ, ուր հաստատուեցան վերջնականապէս»: (Էջ 93, «Եւրան»):

Փրոֆ. Գաւիթ Տալպոտ Բայս («Բիւզանդական արուեստ» 1935, Պէլիդըն, 1954), Հայկական արուեստի ազդեցութեան մասին սկիզբունքի էր եւ շարժապատկերներու մասին զինքն ինքն զիտէին եւ գոր գարգացուցուցին այն երկրին մէջ, ուր հաստատուեցան վերջնականապէս»: (Էջ 93, «Եւրան»):

1935ի թերահաւատ Փրոֆ. Բայսը, 1965ին կը գրէ.

«Սիրիա մոյնպէս նշանակելի ազդեցութիւն ունեցաւ Հայաստանի վրայ, թէ արուեստի եւ թէ սոկրատիկ մտածու-

ղութեան մէջ, թէն այդ երկրին (Հայաստանի) մէջ գորգացաւ սեփական եւ անկախ կենցաղ մը՝ զգալի նշանակութեամբ: Աստիճաբար գիտնական Ստրչիկովսկին էր, որ աւազիւնը երաւիքեց արեւմտեան պատմագէտներու եւ հնախոյզներու ուշադրութիւնը այս շրջանին վրայ, սակայն, թէն իր (Հայաստանի) յայտնաբերութիւններէն շատերը դարաշրջան կազմող եւ իր տեսութիւնները հետաքրքրական, Հայաստանի մեր ծանօթութիւնը դեռ կը մնայ սահմանափակ՝ պատերազմներու եւ փակ սահմաններու պատճառով, այնպէս որ՝ երկիրը եւ իր շատ մը կարեւոր կառոյցները, որ դեռ կանգուն են, տեսել մը առեղծուած են»:

Եւ,

«Քաղաքականօրէն Հայաստանի ազդեցութիւնը սակայն, շատ յայտն էր, որովհետեւ Բիւզանդիոնին տուաւ քաւական քիւնով կայսրեր եւ շատ մը գաղափարներ եւ գիւտեր, եւ Հայկական արուեստի ազդեցութիւնը Բիւզանդիոնի գարգացման եւ նոյնիսկ Արեւմուտքի՝ նշարեւել էր: Բայց եթէ մենք դեռ հագիւ կրնանք քննարկել, թէ ինչպէս կառուցողական սիտեւներ, որոնք այնտեղ դառնային բուսան եւ գոթական հարստաբանութիւններու յատկանիշները, հասած էին Հայաստանի մէջ նշանակելի կատարելութեամբ մը՝ քաղաքի դարեր առաջ, նախ քան իրենց գարգացումը Արեւմուտքի մէջ, — գտնել կրնանք անելի ծանօթեցնող պատմութեան, մտածումին եւ արուեստին այս զիչ ճանչցուած, բայց կարեւոր շրջանին»:

(Բայց ընդգծումները եւ թարգմանութիւնները իմա են: Մասնագէտներու ներդրումները կը Հայցեմ թերիւնբուն համար):

Այս քանի մը մէջըրուները խորհրդածութեան համար են եւ զգաստութեան:

Բ. ԿՈՒՆԵԱՆ

Ն. Չ Ա Ր Խ Ո Ւ Տ Ե Ա Ն

Ֆ Ր Ա Ն Ս Ա Կ Ա Ն

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

ՅԵՏՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՇՐՋԱՆ (1945-1955)

Մինչ ընկերային և քաղաքական դեպիներու վրայ ժողովուրդը և ղեկավարները կ'աշխատէին դարձանել ծանր վէրքերը և արիւն ներարկել չորցած երակներուն մէջ, բանաստեղծութիւնը կը վերադառնէր իր ազատութիւնը, չքուելու համար իր անխիտանականութիւնը:

Աւանդապաշտներէն մինչեւ ծայրայեղ նորարարները համաձայն են մէկ կէտի շուրջ միայն, թէ՛ բանաստեղծութիւնը արտայայտութեան ինքնուրոյն ձև մըն է, արտերկրային բնադաւառ մը, ուր սահմանափակ թիւով ընտրեալներ միայն կրնան մուտք գործել: Մարդկային զգացումներու արտայայտութենէն աւելի՝ զայն պէտք է նկատել ճամբորդութիւն մը զէպր անձանօթը, հետախուզութիւն մը՝ հողի խորհրդաւոր խաւերուն:

Իր «Արեան քրտին» հատորի նախաբանին մէջ, Փիէո-ժան Ժուլ կը գրէր հետեւեալը.

«Ներկայիս գիտակից ենք, որ հազարաւոր աշխարհներ կան մարդուն ներքին աշխարհին մէջ: Դարերով մարդուն միակ գործը եղած էր քողարկել այդ աշխարհները: Մտրդը այդ հագուած-շքուած երկտամին չէ, այլ տանջանքի անգունդ մը: Արդի մարդը գիտը ըրաւ ներաշխարհին և անոր կանոնները: Իր ներկայ վիճակին մէջ, բանաստեղծութիւնը կը գտնուի բազմաթիւ խտացումներու առջեւ, որոնց մէջէն անցնելով, անիկա կը յաջողի մտտ գործել խորհրդանշաններու աշխարհին մէջ»:

Մէկ խօսքով՝ բանաստեղծութիւնը կ'արհամարհէ արտեան ու օդասակարը և կը գրադի բացարձակով միայն:

Մինչև ժ. դարու սկիզբները, բանաստեղծը մարդ մըն էր մարդոց մէջ, ընկերութեան զործօն անդամներէն մէկը, այսօր սակայն ան առանձին է: Ոչ թէ տոանձնացած փղոսկրեայ աշտարակին մէջ, այլ կորսուած անժանօթ եւ կախարդական աշխարհի մը ոլորտներուն մէջ:

Բանաստեղծը առանձին է, բայց բանաստեղծութեամբ զբաղողներուն թիւը մեր կարծածէն շատ աւելի է: Ժան Ռուսրօ իր «Ժամանակակից ֆրանսական բանաստեղծութեան քառարան»ին մէջ կը թուէ 750 կոչեցեալներ, որոնք հատորներու հեղինակ են եւ որոնց մասին յօդուածներ եւ քննադատականներ գրուած են օրաթերթերու եւ պարբերաթերթերու մէջ: Բայց կան ուրիշ հազարաւորներ, որոնք թերեւս նուազ բանաստեղծ չեն, քան վերը յիշուած 750 քախտաւորները:

Ուրեմն սուտ կը խօսին բոլոր անոնք, որոնք բանաստեղծութիւնը մեռած կը նկատեն: Մանաւորաբար Ծրանսայի եւ ընդհանրապէս աշխարհի մէջ ո՛չ մէկ ժամանակ բանաստեղծներու թիւը այսքան մեծ չէ եղած:

Հիմա դիտենք մետալին միւս երեսը:
Եթէ իւրաքանչիւր բանաստեղծ 1000 ընթերցող ունենայ, ուրեմն Ծրանսայի մէջ միայն մօտ մէկ միլիոն հոգի պէտք է բանաստեղծութիւն կարդայ, եթէ հաւատանք թուաբանական հաշիւներուն: Աւ՛ղ, իրականութիւնը բոլորովին տարբեր է: Եթէ նկատի առնենք փոխատուութեան, մշակութային եւ երիտասարդական տուներու զբաղարանները, կը տեսնենք, որ միջին հաշուով հազար անուն զիրքերէն միայն 45 հարա բանաստեղծական հատորներ են:

Ասիկա յաւելեալ փաստ մըն է մեր վերը կատարած հաստատումին, որ բանաստեղծները առանձին են եւ մեկուսացած: Այս կացութիւնը սակայն չի յուսահատեցներ Որփէտի հետեւորդները, թէեւ Ժորժ Մուսէն զուգուած զտոնութեամբ մը կը յայտարարէ.

«Թերեւս ո՛չ մէկ ատեն այնքան մեծ քիւով մարդիկ չեն գտնուած արտարիելու համար այն բանը (բանաստեղծութիւնը), զոր ոչ ոք կը կարդայ»: Կան բանաստեղծներ, որոնք, նոր իջարներու պէս, հրեշտակի թեւերով կը շարունակեն իրենց խոյանքը դէպի այն աշխարհը, որուն նախահամբ կը զբոսէ իրենց երեսակայութիւնը: Ասոնց համար ուրիշ իրականութիւն չոյլովիս չունի: Ուրիշներ սակայն երբեմն կը դիտեն իրենց ետին թողած երկրազուճար եւ իրենք իրենց հարց կու տան, թէ ո՛ւր կրնայ տանիլ այս արկածախնդրութիւնը:

«Բանաստեղծը չի գիցիր ըլլալ արանստագէտ մը միւս արանստագէտներում պէս: Ինքզինք կը հուշակէ մարգարէ եւ կը դառնայ խաբարայ», — կը գրէ Ռոժէ Քայուա:

Ռոժէ Ժիլպէր Լըքոնթ կողմնակից է մարգարէութեան.
«Պետք է խուսարկել մտքի կալուածը, եթէ կ'ուզենք վերջին վայրկեանին փրկել մարդկութիւնը անխուսափելի ազդեղնի, ամբողջական շնչացումէն: Միայն բանաստեղծութիւնը կրնայ փրկել աշխարհը, այլապէս աշխարհը կը մեռնի»:

Ի՞նչ է ուրեմն բանաստեղծը: Ա՛ն՝ որ կը փոխանցէ Բանը, ա՛ն՝ որ իր ձայնով լոյս կը սփռէ յանկարծ խաւարին մէջ: Մինչ մարդ արարածը իր շուրջը կը տեսնէ մուրթակային անապատներ, գերբնական տեսարաններ, քաղաքներ, որոնց վրայ կը սաւառի հիւլէական ուռմբերուն սունկածեւ ամպը, բանաստեղծը կը զգայ այս բոլորը եւ կը խօսի:

Այդ խօսքը երբեմն խոյ մըն է՝ խորտակելու համար աշխարհը, կամ հրդեհող ջահ մը, որ կ'ուզէ հրկիզել տիրող փտութիւնը, յեղաշրջել աւանդական կարգուսարքը, տիեզերքը մաքրագործել մարդ արարածին նեխած շունչէն: Բանաստեղծը երբեմն լսելի կը դարձնէ իր ներաշխարհին խորունկ եւ կախարհող երգը:

Բանաստեղծները իրենք ալ անկարող են հասարակ յայտարարք գրտնելու, որ հասարակ մահկանացուն համար պիտի ըլլար Արիստոէի փրկարար թելը, որ զիրենք պիտի առաջնորդէր արդէ բանաստեղծութիւն կոչւած լարիւրինթոսին մէջ:

Ինչի՞ մէջ կը կայանայ պոեմի մը էութիւնը: Անոր բաղկացուցիչ տարրերը կրնան փոխուիլ զարէ դար եւ անհատէ անհատ: Ի՞նչ են այդ տարրերը:

Իմա՞տ թէ թելադրութիւն,
Բանականութիւն թէ երաժշտութիւն,
Կլասից թէ խորհուրդ,
Անորոշութիւն թէ կամք,
Կեդրոնացում թէ ցրում,
Շարահիւտութիւն թէ դառանցանք:

Արդեօք բանաստեղծութիւնը բառերու եւ իմաստներու զեղծում է, վերազանուած եւ վերակենդանացած բառամթերք մը, երկուութիւններու միացում մը: Անոր առ տուող արդեօք երկինքին հո՛ւրն է, անոր կալուածը արդեօք անբացատրելի՞ն է, լինելութիւնը, մա՞հը:

Վերջապէս, պոեմի մը երեւութական կառուցէն անդին, նախապատիւններու իմաստէն անդին՝ ի՞նչ է կախարդական այն ուժը, որ կը նրււածէ ընթերցողը: Ի՞նչ տեսակ բայասաններ, ի՞նչ տեսակ թոյներ կը տարբողադէ բառերու, տողերու, պարբերութիւններու այդ քառուէն, որուն դաղտնի ճամբան ինք իսկ չի գիտեր:

Այս բոլորին հետ միասին յետպատերազմեան շրջանի բանաստեղծութեան գլխաւոր յատկանիշներէն մէկն է անոր հոգեկան լրջութիւնը, թանձրացող մղձաւանջը, անջրպետային թռիչքները եւ ներաշխարհային ծալքերուն հետախուզութիւնը, երբեմն երանգուած սեւ հիւմուրով մը: Այս շրջանին է, որ կը հասունանան նախորդ սերունդի լաւագոյն ներկայացուցիչները եւ ինքնավստահ կը դառնան բոլոր անոնք, որոնց ձայնը խեղդուեցաւ թընդանոթներու որոտումին մէջ:

Ի՞նչ ալ ըլլան զրելաձեւը, առաջադրանքները եւ համոզումները, յետպատերազմեան առաջին եւ երկրորդ շրջանի բանաստեղծներուն ներշնչարանները կը մնան յաւիտենական երեք ազրիւրներ: — Մարդը, Բնութիւնը եւ Աստուած:

Հետագայ էջերուն մեր կարելիութեանց սահմաններուն մէջ պիտի ուսումնասիրենք այն բանաստեղծները, որոնք անուն մըն էին արդէն նախապատերազմեան շրջանին եւ իրենք զիրենք պարտադրեցին՝ արժէքաւոր դործեր արտադրելով տուեալ ժամանակաշրջանին:

1. ԼՈՒԻ ԱՐԱԿՈՆ (1907-)

Լուի Արակոն ծնած է Փարիզ, բարեկեցիկ եւ պահպանողական ընտանիքի մը մէջ: Դպրոցական տարիներուն մեծ հետաքրքրութեամբ կը կարդար Պատէսի, Ռուսոյի եւ Մաքսիմ Կուքիի գործերը:

Մետղէին պնդումներուն վրայ բժշկական համալսարան յաճախող Արակոնի կեանքը պիտի ընթանար սովորական ուղիէ մը, եթէ չունենար ճահատապարական երեք հանդիպումներ, որոնք մէկական անկէնսադարձ պիտի թէնէ երիտասարդը իր արեան մէջ կը զգար գրականութեան սէրը եւ կը մըտադրէր հեղինակ դառնալ, սակայն այդ երեք ղէպերը ճշդեցին եթէ ոչ իր ասպարէզը, գոնէ՛ իր ներշնչման ազբիւրները:

Առաջին հանդիպում.— Բժշկական ուսանող Արակոն իր զինուորական ծառայութիւնը կ'ընէր Վալ-սը-կրասի հիւանդանոցին մէջ, երբ ծանօթացաւ բժշկական ուրիշ Պուսանոցի մը, որ կը կոչուէր Անտէ Պրըթոն: Հանդիստի ժամերուն, անոնք կ'իջնէին պարտէզ ու կը զրուցէին իրենց սիրած նիւթին՝ գրականութեան եւ բանաստեղծութեան մասին: Այդ շրջանին է, որ Արակոն սկսաւ ստեղծագործել: Հետագային, Պրըթոնի կողմէն ան մասնակցեցաւ գրական յեղաշրջող շարժումներուն եւ զարմաւ գերիբապաշտութեան գործոն անդամներէն մէկը:

Երկրորդ հանդիպում.— Իր երիտասարդ տարիքին, Արակոն սուր ըզզացումը ունէր մարդոց միջեւ տիրող անարդարութեան: Մօտէն կը հետաքրքրուէր յետպատերազմեան քաղաքական շարժումներով, որոնց նպատակն էր յեղաշրջել տիրող կարգերը եւ մարդկութիւնը առաջնորդել ղէպի երջանիկ վաղորդայններ: 1927ին, պաշտօնապէս կ'անդամակցէր Ֆրանսայի համայնալար կուսակցութեան, որ հիմնուած էր Խոթ տարի առաջ:

Յրրորդ հանդիպում.— 1928ի աշնան, ծանօթացաւ ռուս բանաստեղծ Մայակովսկիին, որուն հետ զրոյցներ կ'ունենար Մոնիպարնտի Լու Քուփոլ սրնարանին մէջ: Հ Նոյնմբերին, երբ սեղանին առջեւ նստած կը դիտէր մայրթերը, դուռը բացուեցաւ եւ ներս մտաւ երիտասարդ ու գեղեցիկ աղջիկ մը, որուն կը հետեւէր Մայակովսկի:

— Քենիս է, էլզա Թրիոլէ, — ըսաւ ռուս բանաստեղծը:

Արակոն երկար նայեցաւ աղջկան աչքերուն եւ հասկցաւ, որ այս այն էակն էր, որուն կը սպասէր տարիներէ ի վեր: Այդ օրէն սկսեալ անոնք երբեք պիտի չբաժնուէին իրարմէ:

1930ին, երեքը միասին մեկնեցան Խորհրդային Միութիւն եւ Արակոն մասնակցեցաւ յեղափոխական գրողներու համագումարին, որ տեղի կ'ունենար Խարբովի մէջ:

Վերադարձին՝ իր կապերը խզեց գերիբապաշտ շարժումէն եւ նետուեցաւ քաղաքական եւ գրական պայքարի մէջ: Ֆրանսայի գրաւման շրջանին՝ ան եղաւ դիմադրութեան հրապարակաբար կրօնիչներէն մէկը եւ գրեց հայրենաշունչ բանաստեղծութիւններ: Եղաւ նաեւ վիպասան եւ հրապարակագիր: 1944էն մինչեւ հրատարակութեան դադարումը՝ ան եղաւ «Լէ Լիբր ֆրանսէզ» շաբաթաթերթին սիւնհրէն մէկը:

Արակոնի բանաստեղծական գլխաւոր հատորները կը կոչուին. «Յաւերժակամ շարժումը» (1925), «Սրտաբեկում» (1941), «Էլզայի աչքերը»

(1942), «Ֆրանսական Տիաճը» (1948), «Նոր սրտաքեկում» (1948), «Աչքերը եւ յիշողութիւնը» (1960), «Ելզայի խնկրը» (1963) :

Արակոնի անձը եւ գործը դեհատուած են նոյնիսկ զազափարական իր հակառակորդներուն կողմէ, որովհետեւ ան եղած է պարկեշտ եւ անկեղծ եւ երբեք չէ շփոթած զրականութիւնը, որ արուեստ է եւ քաղաքական գաղափարախօսութիւնը, որ համոզում է : Ասիկա չի նշանակեր սակայն, որ իր գրութիւններուն, մանաւանդ զհղարուեստական գրութիւններուն մէջ ան կ'արտայայտուի իր համոզումներուն հակառակ . բայց ինքզինքը պարտադրանքի տակ չի դներ՝ իր էջերուն տալու համար քաղաքական գունաւորում, ինչպէս կ'ընեն ուրիշներ :

Կայ ուրիշ յատկանշական կէտ մըն ալ . կեանքի փորձառութեան եւ ապրումներու ազդեցութեան տակ՝ այս թուող համայնավարը դարձաւ աւելի հանդուրժող եւ աւելի անկողմնակալ՝ քաղաքական գետնի վրայ, եւ աւելի պահանջողական՝ զրական գետնի վրայ :

«Աւանդապաշտ մեն գրագէտ» կը կոչէ զայն Կաէթան Փիքոն : Հին կաղապարներու մէջ ան ձուլեց նոր միտքեր, նոր պատկերներ եւ նոր զազափարներ :

Լուի Արակոն բանաստեղծին ներշնչման գլխաւոր երանդը սիրոյ յաւիտենական թեման է : Արակոն երբ տեսաւ էլզան, անմիջապէս զգաց, որ ան էր իրեն սահմանուած յաւիտենական ընկերուհին եւ շփոտուեց այլեւս : Իր սիրոյ երգերը ունին կրօնական բնոյթ մը, թէեւ ինք հաւատացեալ մը չէ, բայց գեղեցկացնելու համար իր տողերը, կամայ թէ ակամայ ան կը դիմէ կրօնական եւ, մանաւանդ, շրիտանէական խորհրդանշաններուն :

Արակոնի արտադրած հասարակներուն թիւը ութսունը կ'անցնի : Անոնցմէ հինգ հաւը պիտի բուեն՝ անմահացնելու համար իր անունը իբր վաւերական բանաստեղծ եւ Բանի կախարդ :

ՆՄՈՅՇՆԵՐ ԱՐԱԿՈՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

ԷԼԶԱ ԿՂՍԷ

Նքէ կ'ուզես որ էնզ սիրեմ, բե՛ր այն մաքուր ջուրէն,
Ուր կ'երբքան յագեմալ բշուաններուն իղձեյը,
Բանաստեղծութիւնը քող ըլլայ վերքի մը արիւնը,
Ինչպէս գործաւոր մը, որ տանիքին վրայ
Կ'երգէ այն թռչուններուն համար, որոնք բայն չունին :

... Բանաստեղծութիւնը քող երգէ հո՛ն՝ ուր սէր չկայ,
Ուր մարդիկ կը տհնին, կ'արիւնին, կը ստոնեն,
Թող ըլլայ եղանակ մը, որ քայլերը կը բեթեցնէ,
Գաւաթ մը սուրն այգաբացին,
Բարեկամ մը, որ կը յայտնուի իսչի ճամբուն վրայ :

ՄԱԿՆԻԹՈՒԿՈՐՍՔ 1932

Ո՛վ իմ սէրս, ո՛վ իմ սէրս, երբա՛նք սիրքը,
Ուր իսալացի մը յարախաղացութիւն կ'ընէ...

Յետոյ կը բարձրանամք դէպի ընկերվարական քաղաքը,
Որում տուններուն պատշգամները փլած են...

Հրապարակներէն մէկուն վրայ քաղմութիւնը կ'ետայ-
Այստեղի կիներում աչքերը այնքան սուր են, որ մարդ կրնայ
խեղդուիլ անոնց մէջ...

Կրպակները կը ճմանին սիրուած կիներու,
Վարդագոյն լուսանկարիչին ճայնին մէջ արցունք կայ:

Փոքրիկ ճի, դռն բան մը չես հասկնար այս բոլորէն:
Արգետոք դուն ալ երբեմն չե՞ս ասեք
Մտրակը եւ յարդիս չեզի համը:
Արգետոք չտեսա՞ր գիւղերու մէջ մարդիկ,
Որոնք անօթի էին ոսկիէ կոյսերու առջեւ:

ՔՍԱՆ ՏԱՐԻ ԵՏՔ

Քսան տարի ետք: Ծաղրակա՞ն վերնագիր, ուր կը սահմանափակուի
Մեր կեանքը ամբողջ եւ երազը կը շեղի
Ազեխանդր Տիւմայի հեզնոյ այս երեք բառերուն վրայ,
Քու սիրուելիդ շուքին տակ:

Սիրուելիդ մէկ հատ է, ամէնէն գեղեցիկը, ամէնէն քաղցրը,
Ան կը յայտնուի միայն այնպէս՝ ինչպէս շէկ Հոկտեմբերը,
Ան է միայն անձկութիւնը եւ յոյսը, ո՞վ իմ սէրս,
Եւ կը սպասեմ, որ ինծի գրէ եւ կը համբմ օրերը:

Ի՞նչ փոյթ- բան մը չկարսնցուցիր այդ երիտասարդէն,
Որ կ'անհետանայ հետունքը, ինչպէս նշան մը կամ գիր մը,
Որ գրուած է սվիտսուի եզերքին,
Զնանչցար այդ ստուերը, այդ ոչնչութիւնը:

Մարդը կը փոխուի, ինչպէս ամպերը երկինքին մէջ:
Ձեռքերդ գորովով կ'անցնէին դէմքիս վրայէն
Եւ ճակտիս յամեցող մտանգութեան վրայ,
Հիշդ հոն, ուր մագերս սկսած էին ներսիլ:

Ո՞վ իմ սէրս, ո՞վ իմ սէրս, դուն միայն գոյութիւն ունիս,
Գոյութիւն մը, ուր կը կարսուի բանաստեղծութեան քիլը,
Որովհետեւ ուզեցի կրկին ըսել. «Կը սիրեմ քեզ».
Եւ այս խօսքը կը տառապեցնէ, երբ դուն ներկայ չես:

ԺՈՐԺ ՊԱԹԱՅ (1897-1962)

Ժորժ Պաթայ ծնած է Գարփանթրա քաղաքը, ուր արեւը կիզիչ է, ծառերը կանաչ եւ աղբիւրներուն ջուրը վճիտ ու զուլալ: Ինք սակայն կը նախընտրէր գիրքերուն խորհուրդը: Հռակեաց եւ առանձնութիւնը սիրող՝ ան սակայն անտարբեր չէր իր մարդ եղբայրներու պայքարին հանդէպ: Մասնակցեցաւ գերիբազալաններու առաջին խմբակին, անդամակցեցաւ Ժողովրդավար Համայնավարներու շրջանակին եւ յուսախաբ եղաւ: Հասկցաւ մարդ արարածին ոչնչութիւնը եւ զարձաւ հաւատացեալ զրիստոնեայ, առանց կորսնցնելու իր յոռետեսութիւնը:

Ժորժ Պաթայ մահուան եւ ոչնչութեան, փոթորիկի եւ անդունդի բանաստեղծն է եւ արդի ըմբոստութեան աւելիբաներէն մէկը:

Իր գլխաւոր հաւաքածոն կը կոչուի «Հրեշտակապետականք եւ ուրիշ պոեմներ», որ լոյս տեսաւ իր մահէն ետք, եւ ուրկէ կը քաղենք հետեւեալ սեւ գուռները:

ՍՈՒՏ ԿԸ ԽՕՍԻՄ

ՈՉՆՁՈՒԹԻՒՆԸ ԵՍ ԵՄ

Սուտ կը խօսիմ
ու տիեզերքը կը գամուի
իմ խնայեց տառերուս:

Ոչնչութիւնը եւ եմ միայն
Տիեզերքը իմ շիրիմս է
Արեւը մահն է միայն

Անհունութիւնը եւ ես
զիրար կը մեղադրեմք իբր ստախոս:

Աչքերը կոյս կայծակներն են
Սիրտս երկինք է
Ուր կը պայթի փոքորիկը

Հշմարտութիւնը կը մեռնի
եւ ես կը պոռամ:
— Յշմարտութիւնը կը սո՛ւ:

Իմ քաղցր գլուխս,
որ կը սուսի ջերմէն,
Յշմարտութեան անձնասպանութիւնն է:

Իմ ներսիդիս
Անդունդի մը յատակը
Անհուն տիեզերքի մահն է:

ԹՐԻԲ ԿԱՅ ԳԼԽՈՒՍ ՄԷՋ

Թրիբ կայ գլխուս մէջ
կը պայթիմ, կ'ստեմ երկինքը
Ո՞վ եմ ես, կը քֆնեմ ամպերուն
Տիւար է անհուն ըլլալ
Սիրտս սեւ մեյլան է
Իսկ առճանդամս մեռած արեւ

Աստղերը ինկած են տեյատակ փռսի մը մէջ
Կու լամ եւ լեգուս կը հօտի
Կարելոր չէ անհունութեան կլոր ըլլալը
Եւ իյնալը քեֆով լեցուն տակառի մը մէջ
Կը սիրեմ մահը եւ կը հրաւիրեմ
Քանանայպետին սպանդանոցը:

ԱՆՏՐԷ ՊՐԸԹՈՆ (1896-1966)

Պրըթոն իրաւամբ կոչուած է գերիրապաշտութեան արարը :

Մնած է 1896ին Պրըթոնիը նահանգին աննշան գիւղերէն մէկուն մէջ : Կանուխէն եկաւ Փարիզ՝ Հետեւելու համար բժշկութեան եւ, ինչպէս տեսանք, իր գիտութեան ծառայութիւնը կատարեց Վալտըր-Կրասի Հիւանդանոցին մէջ գիրատորներ խնամելով, ինչպէս կ'ընէր իր գրչեղբայրը՝ Արապիս : 1919ին, Արապիսի եւ Սուփոյի հետ Հիմնեց «Լիքերաքիւր» պարբերութիւնը, որ ասան մը դարձաւ Տատա շարժումին օրգանը :

Պրըթոն մօտէն կը հետեւէր Յրէջոյտի աշխատանքներուն, նոյնիսկ տեսակցութիւն մը ունեցաւ փրենկացի բժշկին հետ : 1922ին, ինք եւ իր գործակիցները կը բաժնուին Տատա շարժումէն, հիմնելու համար գերիրապաշտ շարժումը, որուն առաջադրանքն էր արտայայտել «մտքին իրական գործունէութիւնը, ազատագրուած՝ բանականութեան գերակշիռէն» :

1924ին, Պրըթոն հրատարակեց իր հոշակաւոր «Գերիրապաշտ մանիֆէստը» եւ հիմնեց «Գերիրապաշտ պարբերութիւնը» : 1927ին, անդամակցեցաւ համայնաւար կուսակցութեան, որմէ բաժնուեցաւ 1935ին : Կատարեց զանազան ճամբորդութիւններ դէպի Մեքսիք եւ Միացեալ Նահանգներ : 1941ին, ապաստանեցաւ Միացեալ Նահանգներ : Վերադարձին՝ կրկին նետուեցաւ գրական պայքարի մէջ, պաշտպանելով իր տեսակէտները, որոնք անփոփոխ կը մնային :

Պրըթոնի գլխաւոր գործերն են. «Ապամտն արան» (1924), «Ազգի-սական գօտիներ» (1920), «Նաճա» (1928), «Անտրատ յղաւթիւն» (1932) փօլ էջիւարի աշխատակցութեամբ, «Ճերմակ մագերով ատրճանակը» (1932), «Եննք սէրը» (1937), «Կախարդագիր 17» (1945), «Պոեմներ» (1948), «Ազատութեան բանալին» (1952) :

Անորէ Պրըթոն մէկն բանէ առաջ արուեստագէտ էր, իր սկզբունքները պաշտպանեց հերոսական անգլիոզութեամբ : Տեղի շտուաւ նոյնիսկ համայնաւարական ճշումին, որմէ հետոյաւ՝ անաղարտ պահելու համար իր գրական համոզումները : Իր բարեկամները հեռացան իրմէ՝ հետեւելու համար տարբեր ուղիներու : Պրըթոն ուրացաւ զանոնք եւ մինակը մնաց պատենէլին վրայ : Գերիրապաշտութիւնը գրական զպրօցէ աւելի՝ կրօնք մըն էր իրեն համար :

Բանաստեղծութեան տեսակէտէն, Պրըթոնի ամէնէն յաջող գործը իր «Նաճա» վէպն է, որուն մէջ պէտք չէ փնտռել դասական վէպի մը յատկանիշները. անիկա տեսակ մը արձակ բանաստեղծութիւն է, ուր նախադասութիւններու հեղեղին մէջ կը շողողան յանկարծ ազամանդեայ պատկերներ : «Անդունդի կռիւն, կը բացուի աստղազարդ դղեակը, շինուած փիլիսոփայական շարք» :

Մտորու հատուած մը Պրըթոնի «Ազատ միացում» բանաստեղծութեանն է :

ԱԶԱՏ ՄԻԱՅՈՒՄ

Փայտի կրակէ վարսերով կինս
 Տախտաբանս կայծակոյ միտքերով
 Աւագածամի մէջքով
 Վագրի ժանիքներուն մէջ սեղմուած ջրադիւտի մէջքով կինս
 Քոխարտագոյն բերանով եւ մեծագոյն աստղափունջով կինս
 Ճերմակ հոգը կրծոյ մուկի ներմակ ակաւներով կինս
 Սաթէ եւ ապակիէ շփուած լեզուով
 Դաշունահարուած ճշտարէ լեզուով
 Աչքերը բացոյ գոցոյ տիկնիկի լեզուով
 Անհաւատալի քարէ լեզուով
 Մանուկի մը գիրքերուն գիծին նման թարթիչներով կինս
 Ծիծեռնակաբոյնի եզերէէ յօնքերով
 Քարէտայտակէ ֆունքերով եւ ջերմաբանի տանիքով կինս
 եւ ապակիներու վրայ թառած մէգով
 Շամբանի շուքերով կինս
 Լուցկիի հաստութեամբ զառտակներով կինս...
 ... Իրկաճեւ սրունքներով կինս
 Յուսահատութեան եւ ժամացոյցի շարժումներով
 Նախտառներու նմանոյ շտքերով կինս
 Քարիի հասկի վիզով կինս
 Ոսկեճարի կուրծքով կինս
 Հեղեղի հունին մէջ ժամադրութեան նման
 Գիշերուած ստիճներուն
 Ծովային բլրակներէ ստիճներով կինս
 Մուսակի քուրանքու ստիճով կինս
 Եղեւմներու տակ վարդի ուրուականի ստիճներով
 Օրերու բացուած ձովսեարի փորով կինս
 Հսկայ ժանիքի փորով
 Ուղղատուց կռնակով կինս
 Սնդիկէ կռնակով
 Լոյսէ կռնակով
 Բայրաճեւ կռնքերով կինս
 Ձեղնաբահի եւ փետրաւոր նետի կռնքերով
 եւ ներմակ սիրամարգի փետուրներով
 Անգոյ կշիռքի նման...
 Արցունքով լեցուն աչքերով կինս
 Բանտի մէջ յանկիճ բուրի նման աչքերով
 Միշտ կացիմին տակ եղոյ փայտի նման աչքերով կինս
 Զօրի, օդի, հողի եւ կրակի հարթաչափի աչքերով կինս :

ԺԱՆ ԺԸՆԷ (1910-)

Ժան Ժընէ արդի գրականութեան անառակ որդիներէն մէկն է անկասկած : Մօրմէն լցուած, հայրը անծանօթ՝ ան իր ժանկութիւնը անցուց Փարիզի մայթերուն վրայ : Նուազ սպանտական, քան իր ժՆ. դարու դրշնդքայր Վիյոնը, Ժընէ ապրեցաւ ժուրալով, յետոյ խումբ մը պատանիներու հետ սկսաւ շահատակութիւններ ընել : Ձերբակալուեցաւ բազմաթիւ անգամներ, շրջեցաւ հետիոտն Եւրոպայի ճամբաներուն վրայ : Վերադարձաւ Փարիզ եւ իր ապրուստը ապահովելու համար եղաւ կաւատ եւ գող : Միասեռականութիւնը եւս մաս կը կազմէր իր ախտերուն :

Կրկին ձերբակալուեցաւ իրր գող եւ երկար տարիներ անցուց Ծոնվըրոյի կեդրոնական բանտին մէջ, ուր ճանչցաւ մարդկութեան տականքը :

Եւ սակայն հակառակ այս բոլոր ստորնացումներուն, հակառակ իր շօշափած նիւթերու զայթակղեցուցիչ երեւոյթին, անոր էջերուն վրայ կը սաւառնէ լուսաւոր դեղեցկութիւն մը :

Ժան Ժընէի պիտաւոր գործերն են .

«Մահապարտը», «Սիրոյ երգ մը», բանաստեղծական հատորներ :
«Նաթր Տամ տէ Փլէտօր», «Վարդիմ հրաշքը», «Գոզի մը օրագիրը», վէպեր :

«Ազախիմները», «Պատշգամը», «Սեւաճարները», «Փարուամները», Թատերգութիւններ :

Իր ամբողջական գործերուն համար Ժան-Փօլ Սարթր գրած է երկար յառաջարան մը :

Իսկնտի իր առանձնութեան մէջ, Ժան Ժընէ որոշեց դրէկ ոչ թէ իր յուզումներն ու գգացումները արտայայտելու, այլ նոր բարոյական մը ըստեղծելու համար : «Գոզի մը օրագիրը» իր մանրակրկիտ կենսագրութիւնն է : Մարդկային ընկերութենէն այս վտարուածը, մայրական սէրէն այս զբոհուածը, հալել կը պահանջէ արդարութենէն եւ ինքզինքը յանցաւոր չի նրկատեր : Կ'ուզէ աւելի խորանալ շարին դիտուպտոյա տուող խորութիւններուն մէջ : Մարդկային ընկերութիւնը զինք գող հռչակած է, ուրեմն ինք պիտի դառնայ կատարեալ գող մը, եւ իւրաքանչիւր այսպանելի արարք պիտի կատարէ մոզական ծիսակատարութեան մը պէս : Այդ ծիսակատարութիւնը իրր տաճար ունի գփոխքը, եւ իրր քահանայապետ՝ Չարը : Իր գրուածքին աւելի կրօնական բնոյթ տալու համար՝ Ժընէ փոխանակ գործածելու Կոյսայի մը վրձինը, կը նախընտրէ Ռաֆայէլի մը գոյները, ինչպէս ցոյց կու տան իր վէպերուն վերնագիրները :

Այս գեհննապարտը, որուն խցիկին մէջ ամէնէն այսպանելի ոճրագործն իսկ մերժած էր բնակիլ, որ դարձած էր միւս բանաստեղծակներուն արհամարհանքին եւ զգուանքին առարկան, դարձաւ Ֆրանսայի ժամանակակից գրականութեան դէմքերէն մէկը : Իր վատ արարքները եւ դատապարտելի զգացումները յորդեցան լուսաւոր ու հրեշտակային նախադասութիւններով, որոնք ունին դասական պայծառութիւն մը :

Կը բաւէ կարգալ «Մահապարտը» հատորէն վերցուած սա հատուածը, համոզուելու համար վերը կատարուած հաստատումներուն :

ՄԱՀԱՊԱՐՏԸ

Անգլէն եւ անգլէն վիզիս վրայ, վիզիս,
 Զոր այրիէ մը անկի թեթեւ եւ անկի լուրջ ձեռքս
 Կը շոյէ օտիֆիս տակ, առանց որ սիրտդ յուզուի,
 Վիզիս վրայ թող ակռաներդ դրոշմնն գայլի իրենց ժպիտը:

Օ՛, եկո՛ւր, գեղեցիկ արեւս, օ՛, եկո՛ւր, սպանական գիշերս,
 Մտիր աչքերուս մէջ, որոնք պիտի մեռնին վաղը,
 Հասի՛ր, բա՛ց դուստ, տուր ինծի ձեռքդ,
 Տար գիս այստեղէն հեռու, մեր դաշտերուն ազատութեան:

Երկինքը կրնայ արթննալ, աստղերը ծաղկիլ,
 Ծաղիկները հառաչել, եւ դաշտերուն սեւ խոտը
 Ստանալ այն եղեւմը, զոր ձեռքը պիտի խմէ:
 Զանգակը դողանցեց. միննայ ես պիտի մեռնիմ:

Օ՛, եկո՛ւր, իմ վարդէ երկինքս, ո՛վ իմ խորտեալ գամբիւզս,
 Այցելէ գիշերուան մէջ քու մահապարտիդ,
 Բզկտէ միսերդ, սպաննէ՛, մազկցէ՛, խա՛ծ,
 Բայց եկո՛ւր, զի՛ր այսո՞ կլուր գլխուս վրայ:

Մենք չէինք աւարտած մեր սիրային խօսքերը,
 Զէինք աւարտած ծխելէ մեր *Ժիթան* գլանիկները:
 Մարդիկ պիտի գարմանան՝ տեսնելով դատապարտութիւնը
 Այսօր գեղեցիկ մարդասպանի մը, որ կը մթագնէ ցերեկը:

Սէ՛ր, եկուր բերնիս վրայ, Սէ՛ր, բա՛ց դուռներդ:
 Անցի՛ր փապուղիները, իջի՛ր, քալէ՛ թեթեւօրէն,
 Բռի՛ր սանդուխներուն վրայ, անկի թեթեւ, քան հովիւ մը,
 Որ կը սաւառնի օդին մէջ, մեռած տերեւներէն անկի:

Անցի՛ր պատերը, եթէ պէտք ըլլայ՝ քալէ՛
 Տանիքներուն եզերքէն, ովկիանոսներէն. պարուրէ՛ լալալ,
 Սպառնա՛, ազաչէ՛,
 Բայց ո՛վ առագաստամուս, եկո՛ւր մահէն ժամ մը առաջ:

... Զուարթ արշալոյս մը կը փայլատակէ աչքիս մէջ
 Նման սալաշատակին վրայ փռուած գորգին,
 Որ պիտի խեղդէ ոսնձայնդ միջանցքներու լաքիւրիներուս մէջ:
 Գորգ մը, զոր փռեցին խուցիդ սեմէն մինչեւ
 Գուռները առաօտեան:

(Շար. 3)

Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԻԻԹԵՐ

ՃՈՁԱՓՈՂ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Եստի տարիէ ճշ ի վեր հրատարակէ վրայ է
 «Հայկական Նիւթեր շօշափոց ուսումնասիրա-
 րիւններ» («Armenian studies — Etude Ar-
 ménienne») խորագրեալ հասարգը, որուն խմբա-
 գրութիւնն ու հրատարակութիւնը իրագործած է
 Լիբանանահայ Համալսարանուարաններու Միու-
 թիւնը:

Անկէ քան 200 էջ հաշուով լիչեալ երկնիզու-
 (անգլերէն եւ ֆրանսերէն) հրատարակութիւնը իր
 պարունակած նիւթերու որակով պատկանելի տը-
 խառնակքի ճշ զէմ յանդիման կը զնէ ընթերցո-
 ղը, միաժամանակ օգտաշատ գործով ճշ Երես-
 տնիկով մեր հարցերը միջազգային լիզուներով
 ներկայացնող ժամանակներուն ցանկը:

«Հայկական Նիւթեր շօշափոց ուսումնա-
 սիրաբիւններ»ը կը բացուի ֆրանսերէն Եւ-
 րասիոյ Փարիզեանի կողմէ հարապարտած խմբ-
 րագրական նախով ճշ, ուր կը պարզուի
 հասարհի հրատարակութեան ղիխաւոր շար-
 ժանիքը — ծանօթացնել հայոց պատմութիւնն

ու հայ մշակութիւնը ստորներուն: Այնուհետեւ,
 խմբագրականը ընթերցողի ուշադրութեան կը
 յանձնէ այն կէտը, որ սկիզբն եւեթ յատուկ
 ժամանակութեան ստորիան եզած է հասարգ խմբ-
 րագրող ու անոր աշխատակցող անձնակազմին —
 ուսումնասիրուած նիւթերը հրատարակելու ստորիա-
 յան ու պիտակն շինուածներով ու գերն պա-
 ւել պահնը զպատգան, համայնքային, զազա-
 փարական եւ պարագայական գունաւորումներէ:
 Փարիզեան իր խմբագրականին մէջ յատուկ խոսք
 ունի նաեւ երիտասարդ սերունդի ա՛յն ներկայա-
 ցուցիչներուն, որոնք կը նրաչքն միտնուի
 Մերձուր Արեւելքի ու հայկական ղիտութիւն-
 ներու խորհրդաւոր զարմանաններուն մէջ եւ կը
 մազիէ, որ ներկայ հասարգ իրիւն առաջնորդող
 ազգակ մը հանգիստայ անոց սրանումներուն եւ
 նպաստ մը՝ իրենց նախաներուն լուսաւորման
 Խմբագրական բաժինը կը փակուի ներսն Եւրո-
 փայլ հայրազգանի կենսազրականը սմփոփող գի-
 ծերով, նկատի սնննաւով, որ հասարհի հրատար-

բակուբեան սարին (1973) զը գուգարկով Ծնոր-
ւային մահուան 800ամեակին:

Թաղոյք էջերուն՝ փրոֆ. Քորթիկանի յիշեալ
խմբագրականը նայնութեամբ արուած է Փրոմ-
սերին լեզուով:

Այնուհետև, Հասարին մէջ տեղ գտած են
տեղերէն լեզուով գրուած ու մասնաւորաբար
Հայոց պատմութեան արդի մասնակիւնը ընդ-
գրկող հինգ լայնածաւալ ու մեծարժէք յօդուած-
ներ, ստորագրուած՝ արեւմտահայ սեմնաւորու-
թիւններու կողմէ:

Գալով Համալսարանի պատմութեան դաս-
խօս Փրոֆ. Բ. Եովհաննիսեանի ստորագրութիւնը
կրող «Հայկական հարցը Օսմանեան կայսրութեան
մէջ» (The Armenian Question in the
Ottoman Empire) գրութեան՝ տն ազա-
նիչ կերպով զը ներկայացնէ 1500-ական թու-
ականներէն մինչև Առաջին Համաշխարհային պա-
տերազմ երկարամեակայ ժամանակաշրջանը Հայ
ժողովուրդին վեճակուած կեանքը, տնոր գոյու-
թեան սարկուղը՝ Օսմանեան արեւմտահայկան
ենթակայ Հայկական դատանիքու մէջ:

Թաղոյք ուսումնասիրութիւնը ստորագրած
է Նիւ Եորքի Համալսարանի ընկերաբանութեան
դասախօս Փրոֆ. Վ. Տարեան: Թգրուածը զը կրէ
«Մշակութային եւ բնկերականութեան տակալ-
մնր եզակէն վերաբարձներու վերաբերող սո-
սիալմտաբանութեան մէջ» («Cultural and social
psychological factors in the study of su-
rervors of Genocides»): Ընդհանուր վերլու-
ծումի ենթարկելէ հոգ շորք ու սղանդ տեսած
Հուսարկանութեան Հասարակաց Հոգեբանու-
թիւնն ու դոյալիմակը՝ Տարեան ստանձնադէս
կ'անդրադատեայ Հայ ժողովուրդի պարզած իրա-
կանութեան:

Ըրանանի Պետական Համալսարանի իրաւա-
բանութեան դասախօս Ծաւարչ Քորթիկանի յօդ-
ուածը խորագրուած է «Հայկական կալուածներու
բնկարտուումը Քուրդիայ կողմէ» («Confiscation
of Armenian property by Turkey»), ուր,
յօդուածագիրը պատմական վաստաթուղթերու եւ
տտար զիտողներու ուսումնասիրութեանց լոյսին
տակ զը պարզէ թուրքին խտրեայ ծրագրները
եւ այդ ծրագրիներուն ոնրային կեանակնդումը:

Է. Վ. Կիւլպէրեան ստորագրած է «Հայ-թրք-
ական երկխօսութիւն» («The Armenian-
Turkish dialogue») խորագրեայ յօդուած մը,
ուր ընդհանուր դիմներու մէջ զը ընկարկէ Ռու-
սիայի լուսն մէջ Օղբայա անուն մէկ պատմա-

բանի «Le peuple arménien et les tenta-
tives du reduire le peuple turc en servi-
tude» Հասարը: Իր յօդուածով՝ Կիւլպէրեան կ'ու-
լընկացնէ Հայ եւ թուրք ժողովուրդներու նոյն
չեղին պատկանած ըլլալու անհնթիք վարկածը,
ուր տաննէ մը է վեր զը քրտնչնէ թուրք պատ-
մարանները:

Գաղմական ուսումնասիրութիւններու այս շար-
քին վերջին յօդուածը ստորագրուած է Պէյրութի
Հայ Աւետարանական Գոյնէն Ծնորին Զուէն
Մըրթեանի կողմէ եւ զը կրէ «Կարս ու Արսա-
հանի հարցը» («The question of Kars and
Ardahan») խորագրերը: Մըրթեան կ'ընէ Հայ-
կական բանագրուելու հոգներուն պատմութիւնը,
ստանցք ունենալով խորագրին մէջ յիշուած եր-
կու դատանիքուն պարզան:

Թաղոյք էջերուն մէջ՝ Սըրսոգ Բանգարանի
պալատեայ Միլլիա Անէմեան Փրոմսերին լեզ-
ուով զը ներկայացնէ իր տեսակին մէջ նոր ու-
սումնասիրութիւն մը, խորագրուած՝ «Միլլիք
արուստի գրքնր Լալիքի Ս. Փառն. Մանկաց
այլկան հարցին հանդէս» («La société des
Melkite dans l'église Armenienne des 40
Martyrs d'Alep»): Թիշեայ յօդուածին կ'ըն-
կերակցին սրբապատկերներու եւ սրմանկարնե-
րու ճիւ Հուսարածոյ մը, ուր լոյստիւրդին կ'ե-
րին յօդուածագրին կողմէ նկատուած յան-
նըւած երեւոյթները:

Գրմակայ Փրոմսերին լեզուով՝ Ճորտարդէս
Փառչալ Փապուհեան ստորագրած է «Հայ Ա Ատրի
յարտերութիւնները Առաջին Դարուն — Ն. Ք.
եւ Ե. Դարուն — Ք. Ե. — «Relations des Ar-
meniens et des syriens du Premier Siecle
Av. J. C. Au septième siècle J. C.» — խո-
րագրեայ ուսումնասիրութիւն մը: Փապուհեան
քարտէսներու տնութեամբ զը պարզէ զարերու
ընթացքին Հայերու ներկայութիւնը Միլլուտեղի
մէջ ու տնոց փոխարարերութիւնները տեղացի
ժողովուրդներու հետ:

Այս ուսումնասիրութիւններէն հոգ, «Հայկա-
կան Քիւրքի յոշափող ուսումնասիրութիւններ»
Հասարը զը ներկայացնէ նոր բաժին մը, ուր
չբախտուած են վերջին բանի մը տարիներու
ընթացքին լոյս տեսած եւ բացառաբար Հայկա-
կան պատմութեան ու ժողովուրդին անդրադար-
ձոց զիրքեր:

Առաջին երկու գրախօսականները ներկայաց-
ւած են Գէորգ Անէմեանի կողմէ եւ իրքու նիւթ
ունին երկու զիրք՝ Մայլէ Փէրէրայի «Արմա-

գանգ ալ՝ լուսքծնէ («An Echo From Silence») եւ ինչո՞ք Սիւրճեանի «Աստույ հերոսները» («Daredevils of Sassoun») խորագրեալ հատորները:

Փէրէյբաշի հատորը պատմական զեպակ ժըն է, որուն կերտն է տեղիական բանակի սպայ լայ ժը (Կարապետ Հայկազան), որ կը ծածկէ իր ինքնութիւնը Շարլի Մասթերճան անունին տակ, եւ որ ժըն ալ այնքան թանկ էր իր ծննդավայրը:

Ինչո՞ք Սիւրճեանի «Աստույ հերոսները» աւելի չլուս առաջադիւզական ընդթի երկ ժըն է, ուր կը ներկայացուի հայ ժողովուրդի դարձուր փրկութեան թիւերը եւ աշխարհաշինարարը:

Ջաւին Մաշիկան կը ներկայացնէ Սիւրճեանի Տէր Ներսէսեանի «Հայկազան» («The Armenians») հատորը, ուր Տէր Ներսէսեան կը պատկերացնէ հայ ժողովուրդի աշխարհաշինարարական ընթացքը դարերու ընդմէջէն:

Տ. Հ. Պոլաճեանի «Հայաստան — պարագան» մագնուած զանգի մը համար («Armenia: The case a for a forgotten Genocides») անուն հատորը կը ներկայացուի Գաղար Տէրտերեանի կողմէ: Գրախօսուած այս հատորին լեզբնակին առաջադրանքը կը լինի թողարկելու զինչ Նազի զերմաններուն եւ Երեւանուրդ թուրքերուն կողմէ գործադրուած ցեղասպանութեան երկու արարչներուն իրենքեան եւ իրենքեան երեւանները:

Մ. Ք. Փրանսերէնով գրախօսած է Հանրի Պարպիէ «Au pays de l'épouvante — L'Arménie Martyre» գիրքը:

Գործեալ Փրանսերէն լեզուով՝ Իպրահիմ Նաժար գրախօսած է Թոմի Մանտլիճեանի «Ազգերու քննարկութիւնը եւ պետութիւնները հայկական հարցին հանդէպ» («La société des

nations et les puissances devant le problème arménien») հատորը:

Ներկայ հատորը փակող գրութիւնը կը պատկանի դարձուր Փրոֆ. Շաւարշ Թորթիկեանի զբողոքին: Թորթիկեան գրախօսած է Ռեյքրա Յովհաննիսեանի «Հայաստանի Հանրապետութիւն» («The Republic of Armenia») գիրքը, որ հայոց պատմութիւնը ներկայացնող հատորներու շարքին մէջ կը զբաւէ յատուկ տեղ՝ իր զեպական ու ստորագրական նոր առեւտրներու վրայ չմտնած ու փաստագրուած սպառն ծանօթութիւններու միջոցով:

«Հայկական Յիւրքեր շղափող յառաջագործութիւններ» սոյն հատորը երեք նոր եւ ուղղախօս իրենց թիւերու շարքին կը զնն ընթացքը:

● Անկա կը պարունակէ ժամանակ երկու ասոր լեզուներով գրութիւններ,

● Կը պարունակէ հայ թէ ասոր (յստիկանական ասոր) լեզբնակներէ ու վաւերագրութիւններէ հոն մէջբերութիւններ:

● Հատորին իրենց աշխատակցութիւնը բնութեան նման ոչ-հայ անհատներ:

Վերջինիս իրենց թիւերուն առնթիւ եւ հարկապահու համար, կարելի է դարձուր վերադառնալ ներսեան-խորագրակներին, որուն մէջ կը շեշտուի ներկայ հատորով հայոց պատմութիւնն ու հայկական ժողովուրդը ասորներու ծանօթացնելու առաջադրանքը: Այստեղ կարելի է յիշեցնել, որ յիշուր առաջագրանքը է զորս է նաեւ որոշ հայերու պարագային, նկատի ունենալով, որ ներկայիս թիւ չէ թիւը սոյն հայ անհատներուն, որոնք զժողովուրդին ունին իրենց սպառնական պատմութիւնն ու անոր արժանազարտ նուաճումները մայրենի լեզուով կարգաւոր եւ հասկնալու:

Գ. Ճ.

Նզմարներ

ԽՐՈՒՇՉԵՒԻ ՑԱԻԸ

Khrouchtchev regretta de n'avoir pas
mené jusqu'au bout la déstalinisation

«Le Monde»,

«Խրուշչևի յուշերը» անուն գործին առաջին հատորին հոսեցուցած առատ մեկանը տակաւին չչորցած, միջազգային մամուլը վերջերս սկսաւ խօսիլ երկրորդ հատորին մասին, որ լոյս անտաւ Պոթժնի մէջ եւ, ըստ «ԼԵ Մոնտշի (7 Յուլիս)», շուտով լոյս պիտի տեսնէ նաեւ Ֆրանսերէնով:

Առաջին հատորը պատճառ դարձաւ խոր տարակարծութիւններու, ո՛ր մանջ վաւերական համարեցին հրատարակուած արդ յուշերը, ուրիշներ՝ սարքովի, մինչ երկրորդին վաւերականութիւնը, ինչպէս կը հաստատէ «ԼԵ Մոնտշ», վեր է ամէն տարակոյսէ. «Շրջագայութեան դրուած իրուշչևեան յուշերուն տուչին հետտորին մասին մարդիկ կրնային տակաւին խնդրոյ առարկայ գործնել անոր վաւերականութիւնը, բայց այն օրէն ասդին մասնագետներուն հազարդուած վաւերաթուղթերը առիթ չեմ տար որեւէ կասկածի»:

Եւ այս երկրորդ հատորին մէջ է, որ Խրուշչևե կը ցաւի ասպատակուած նախնացման իր պայքարը մինչեւ ծայրը շխարհնայ հասցնելուն համար:

Խրուշչևե, ինչպէս իր նախորդները, ինչպէս եւ իր յետնորդները, շատ մաքուր Թղթածրարի մը տէր չէր հարկաւ, բոլորին պէս էր («Բուլց» մեզաւորը հասարակարգն է», — Սոլմենիցիւն): Ստալինեան մաքրագործումներուն գործնապէս մասնակցած գործիչ էր ան եւ իշխանութիւնը ձեռք ձգած տարիներուն բոլորովին շոտոցաւ ստալինեան բարձրը: Ի՛նքն էր, որ կարմիր հրասայլերուն տակ ճգմել տուաւ մարդկային տարրական իրաւունքներու համար ոտքի ելած Պուտովեչտի երկու հարիւր հազար դժբախտները, բարձրացուց «Ամօթի պատը», զրկեց Փաստերնաքը Նոպէլեան մրցանակի հաճոյքէն եւ ազատախոհ մտաւորականութեան մէկ մասը ճամբեց ճամբար, այսուհանդերձ, խորհրդային տիրապետութեան ամբողջ կէս դարուն՝ իշխանութեան գլուխ գտնուած իր տարիներուն էր միայն, որ ձիւնահալի նըշաններ երեւցան կարմիր դիմէն ներս եւ դողահար միլիոնները կրցան պզտիկ շունչ մը փաշել:

Քերեւս այդ էր, սկսած այդ շնչառութիւնը, որ չներեցին իրեն «Ստալինի ժառանգորդները» եւ վերջ դնելով կուսակցական ու քաղաքական իր գործունէութեան, վերադարձան համայնազար սիստեմը ոտքի պահող կարելի միակ միջոցին, բռնութեանց ու հողերու ժառանգանային բոլոր աւանդութիւնները կեանքի կոչելով:

Բայց ինչ մեծ բարիք պիտի ըլլար նախ խորհրդային սահմաններուն մէջ ապրող միլիոններուն, եւ ապա՝ աշխարհի համար, եթէ Խրուշչևե իրապէս պակաս ըլլար իր պայքարը եւ Ստալինի ժառանգորդները ժառանգական բրտութիւններէն բուժելով մեկնէր Ստալինի մօտ...:

Վերապրած Մեծին Փառնը

«Ճիշդն այն է, ինչը տաղանդաւոր է: Յաւերժն այն է, ինչը որակեալ է»:

Այս տարի, Հայաստանի թերթերը նշեցին նշանաւոր նկարիչ եւ քանդակագործ Երուանդ Քոչարի 75ամեակը եւ այդ առիթով Հրատարակութեան տօնին յատուկ ուսումնասիրութիւններ, որոնցմէ մէկը՝ «Առվիտական գըրականութիւն» ամսագրի Յունիսի թիւին մէջ ստորագրած Հենրիկ Իգիթեանի գրութիւնը՝ իր խորացումներով անպայման կ'անջատուի ընդհանուրէն՝ ընծայելով ընթերցողին մտաւորական ճշմարիտ հաճոյք մը: Իգիթեան լուսարձակի տակ առած է նշանաւոր արուեստագէտին կտրած ճանապարհին բոլոր հանգրուանները եւ արձանագրուած նուաճումներուն հանրազումարին զօրութեամբ գայն հռչակած է «մեր ժամանակի խոշորագոյն վարպետներից մէկը», օգտագործելով այդ մասին տարակոյս չձգող ուժեղ տուեալներ:

«Տարածական նկարչութեան հիմնադիր» Երուանդ Քոչարի մասին յօդուած գրած եւ ժամանակակից նկարչութեան ու քանդակագործութեան մասին ընդարձակ ճանաչումներ կուտակած Հենրիկ Իգիթեանի արուեստի հասկացողութիւնը ինքը արդէն վստահութիւն ներշնչող մակարդակ մը ունի եւ ասիկա յանախաղէպ արժանիք մը չէ արուեստի մասին խոսող հայրենի մեր մտաւարականութեան մօտ: Մտածումը բոլորովին նոր չէ, այսուհանդերձ հաճելի է լսել արուեստը պայմաններէն վեր դասող եւ ազատ ընտրութեամբ գլուխ բերուած գործը ըստ ինքեան գնահատելու կոչը ընող սա պնդումները:

«Այս կամ այն արուեստագէտի, մանաւանդ Քոչարի պէս բարդ արուեստագէտի ստեղծագործութիւնը գնահատելիս պարտադիր չեն մակդիրները՝ դրական, բացասական, լաւատես, յոռտես, պաթալոգիական, պլատոնական, եւ այլն: Գլխաւորը ու, թերեւս, առաւել բնութագրակամն այստեղ արուեստի ընկալուող արժէքն է:

«Բնութի հրէշները մարդկային մշտկոյճի համար պակաս արժէքաւոր ու պակաս գեղեցիկ չեն, քան Ռաֆայէլի «Մադոննա»ն, եւ եե՛նց այն բանի շնորհիւ, որ մէկ եւ միւս դէպքում բարձրագոյն չափանիշը ընկալուող բացարձակ գեղարուեստական արժէքն է եւ ոչ թէ ստանդարտ օդը, որի միջից այս կամ այն չափի յակիթներ են անցկացնում: Իւրաքանչիւր ստղանդաւոր արուեստագէտ իր ժամանակի բարոյեւտրն է: Պէտք չէ նրան կասկածի տակ առնել, աւելի ճիշդ կը լինի հասկնալու փորձը՝ թէ ինչու՞ն են այդ բարդ պայրարտի պահները ռզը կեանքի ընթացքում յամաօրէն ուշադրութիւն պահանջում այս կամ այն գաղափարի նկատմամբ: Ճիշդն այն է, ինչը տաղանդաւոր է: Յաւերժն այն է, ինչը որակեալ է»:

Իգիթեան այս ճիշդին, տաղանդաւորին, յաւերժին ու որակեալին լուսնորով ոգոգած է Երուանդ Քոչարը՝ զմեր ժամանակի խոշորագոյն վարպետներից մէկը»:

Հենրիկ Իգիթեանի այս յօդուածը մեզի յիշեցուց համարեա՛ կէս զար առաջ զբի առնուած Վազգէն Եռւշանեանի Քոչարի հետ ունեցած մէկ զրոյցը՝ «Ա՛ր նորնուն հետ» ընդհանուր խորագրին տակ, տպուած՝ Պուքրէշի «Նուտասարգ» հանգէտին (1926) մէջ, ուր երիտասարդ գրագէտը կը խօսի Անկախներու ցուցահանգէտին մասնակցած երիտասարդ այս նկարչին մասին, առանձնացնելով յատկապէս անոր երկու գործերը՝ «Յարութիւն» (Resurrection) եւ «Այլակերպութիւն» (Transmutation), որոնք բացառիկ ու շարժութեան առարկայ զարձած են ֆրանսական մամուլին մէջ, առիթ տալով նոյն անուն, որ արուեստի թննագատները խօսին, գուշակութիւններ ընեն Քոչարի այն փայլուն ազգային մասին, որուն իրականութիւնը ա՛յնքան խոր համարումով ու ձեռնհասութեամբ կը պատկերացնէ այսօր Հենրիկ Իգիթեան:

Ահա առիկ Եռւշանեանի բացատրողական երկտողն ու կատարած Թարգմանութիւնները.

«Ձեռքիս տակ ունիմ երկու գեղարուեստական պարբերականներ, որոնք բաւական երկար կը խօսին իր արուեստի մասին եւ որոնք արտատպած են Անկախներու ցուցահանգէտին տարած իր երկու նկարներն ալ:

«Այդ երկու նկարներն ալ (Resurrection – Յարութիւն, Transmutation – Այլակերպութիւն) արդիւնք են երկարատեւ ու յամառ աշխատանքի, ու համագրութիւնը արուեստի մասին իր ունեցած ըմբռնումներուն. ասոր համար ալ ատոնց վրայ պիտի ուզէի աւելի երկար կանգ առնել. հոս պիտի ստամ միայն ֆրանսական այդ երկու պարբերականներուն կարծիքը իր արուեստին մասին» —

Այս եիանակի արուեստագէտը, որ այնպիսի տարիքի մը մէջ է, երբ ուրիշները իրենց սկզբնաւարտութիւնը կ'ընեն, արդէն իսկ ապահոված է կարկիկ համբաւ մը, որուն իսկապէտ արժանի է եւ ունի փորձառութիւն մը, որուն ֆիչերու մօտ միայն կարելի է հանդիպիլ: Քոչարեանը, նոյն ատեն թէ՛ նկարիչ, թէ՛ քանդակագործ-արձանագործ՝ արդէն շինած է Վենետիկի կարտինալին կենդանագիրը, Ս. Ղազարի արքայապետի նկարը եւ քանատեղծ Իսահակեանի, բայտըն ալ ուժեղ ինքնատպաբեամբ հարուստ եւ արտայայտուելու մեծ կարողութեամբ նշանակելի գործեր:

Իրրեւ նկարիչ՝ Քոչարեանը սրբապէս արդիական է. ապիկա կարելի է ապացուցանել իր երկու տախտակներով (tableaux), զորս վերջին անգամ ցուցադրած է Անկախներու ցուցահանգէտին մէջ, որանց մասին շատ վիճակեցաւ, բայց որ շատ դիւրաւ կը բացատրուին, եթէ արուեստագէտին ըմբռնումներուն ու արուեստի մասին ունեցած հասկացողութեանց ծանօթանալ:

— Առաջին օրէն իսկ, — կ'ըսէ Քոչարեան, — մարդը դատապարտուած է Ազամի ճակատագրին: Ան կ'ուզէ գիտնալ եւ ճաշակել ինչ որ պահուած է, ինչ որ արգիւտուած է: Անա թէ ինչու ան կ'աշխատի շինել, տարբարուծել, ձեւափոխել, գտնել գործողութիւններ, որոնք մէկ նպատակ միայն կը հետապնդեն, — բողազերծել:

Մեկնելով այս կէտէն՝ բոլոր ուսումնասիրութիւնները, բոլոր փորձերը կարելի է բացատրել երկու բառով. — տարբազարութիւն, տարբարուծում: Դայուածքի առանձնայատուկ սեւեռում մը անհրաժեշտ է՝ գտնելու եւ ուսումնասիրելու համար, սեւեռում մը, որ կը պահանջէ իրիմ մեկուսացումը ժամանակին եւ միջոցին մէջ: Արուեստը, որ բնութեան հասկացողաւ-

քիւնն է եւ քաղաքը ծաւալում է զի կրնար խուսափիլ այս օրէնքէն: Անիկա սկզբունքով կը պահանջէ, որ իրը անշարժացուի ժամանակին եւ միջոցին մէջ: Որովհետեւ շարժումի ձեւն է եւ ոչ թէ շարժումը ինքը, գոր կարծիքը պիտի ջանայ կտաւին վրայ թերել: Կը հետեւի ուրեմն, որ արուեստի ճակատագիրը կայունութիւնն է (statique). ասկէ խուսափելու բոլոր ձգտումները գուր են եւ գուր պիտի ըլլան: Իսկական արուեստագէտը պիտի ջանայ գտնել կայունացման ձեւ մը, որ պարունակէ շարժումի բոլոր կարելիութիւնները, ուրիշ խօսքով՝ ան պիտի ջանայ բանօրէն խտացնել իրին անշարժութեան մէջ շարժումի մասը: Եւ ինչ է շարժումը, եթէ ոչ կեանքը, եւ որովհետեւ կեանքը ընթացք մըն է զէպի մտքը, կայունութեան ձեւին իտեպը կը գտնուի ուրեմն մահուան կէտին վրայ:

... Բազմաբարձութիւնը, գոյները, ձեւերը, միւսերը ամբողջ Քոչար-Բանի գործին մէջ մէկ ամբողջութիւն կը կազմեն: Բոլորը կը խառնուին իրարու, կը տարրալուծուին իրարու մէջ, տալու համար հաւատարիմ պատկերը կեանքին, որ զէպի մտքը կը վագէ:

Այս շատօրէն արուեստագէտ, շատ մտածուած, շատ խորունկ արուեստին ճակատագրականօրէն անհազօրէք կը մնան բոլոր ոչ-մաթեմատիկականութիւնները: Բայց անոնց համար, որ գայն կը հասկնան, անիկա ունի իր գոյութեան իրաւունքը եւ իր գեղեցկութիւնը: Յամենայնդէպս, Քոչարեանը այդ կը պաշտպանէ շատ անկեղծութեամբ, համակրութեամբ ու տազանդով:

(«Revue moderne illustrée des arts et de la vie»)

Մենք այստեղ նոր կայնածի մը մէջ ենք, տակաւին անձնօք գետնի մը վրայ եւ հարկաւոր է նախապէս խոր կերպով ծանօթանալ վախճ կամ հիացումէ ազդակելիէ առաջ — այն արտադրութիւններուն առջեւ, որոնք անուանուցն ինքնատուրութեան արժանիքը ունին: Քոչարեանի ստեղծագործութիւնը հաստատուած է մտաւորական խորքի վրայ. այս արուեստագէտին համար մարդը, որ յաւիտենական տեղումէ մը ունի ամէն բան գիտնալու, չի կրնար բնութիւնը քաղաքը թաքցնել իրին սեւեռումով:

... Այսպէս է Քոչարեանի գործը: Ան նախ կը հակադրէ ինքզինքը, կը գարմացնէ, յետոյ կը հետաքրքրէ: Սիրով կարելի է ուսումնասիրել այս հմուտ արուեստագէտին արձանները, գորս ան կը ջանայ վրձինել կտաւին վրայ: Այդպէսով միայն կարելի է քաջալերել երիտասարդ ու խելացի նկարիչի մը վարձը զէպի արուեստի նոր ըմբռնողութիւն մը:

(«Revue du Vraie et de Beau»)

Հենրիկ Իգիթեան լայնօրէն անդրադարձած է «արուեստագէտներով հռչակուած քաղաքում» Քոչարի գործ մեծ ընդունելութեան, մեծերու շարքին զբաւած զիրքին, նշանաւոր քննադատներու համարումին արժանացած անոր վստօքին, ու այդ էջը կնքած է սա հակադրութեամբ.

«Սակայն ոչինչ նրան չէր շլացնում. նա գիտէր՝ արուեստագէտը պէտք է ստեղծագործի իր հայրենի հողին վրայ»: 1936ին Քոչարը վերագրուեցնում է Սովետական Հայաստան»:

Քոչար, ինչպէս եւ ուրիշներ գիտէին, որ «արուեստագէտը պէտք է ստեղծագործի իր հայրենի հողին վրայ», բայց հայրենիքին գիտակցութիւնը նոյն մակարդակը չունէր այդ օրերուն, այդ օրերուն հայրենիքը բուրբովին կորսնցուցած էր արուեստագէտ մը ըստ արժանւոյն գնահատելու գիտակ-

ցութիւնը ու լծուած էր իր ձեռքերը ոչնչացնելու եղբրական արշաւի մը, որուն մահացու հարուածներէն զերծ չմնաց նաեւ իր արուեստանոցը հայրենի հողին վրայ հաստատելու խանդով հայրենիք վերագործած այս բազմաշնորհ արուեստագէտը :

Ահաւասիկ հատուած մը հայրենիքի ճողոննէն՝ հայրենագործ իր գաւակին .

«Երուանդ Քոչար, այսպէս կոչուած քանդակագործը, որ ժողովրդի մերկացուած քջամիներ՝ Դ. Շահվերտեանի եւ մարտարայտ Մագմանեանի օժանդակութեամբ 1936 թուին Փարիզից Երեւան է եկել, Երեւան գալու հենց առաջին իսկ օրից, այդ խարդախն սկսում է պրովակացիան աշխատանքը: Օգտուելով կերպարուեստագետների Միութեան մէջ բռն դրած անհարազատ տարրերի համակրամբից եւ հակայեղափոխականներ՝ Ամասունցու, Ակոբովի եւ Մուղղուսու ջերմ պաշտպանութիւնից, կերպարուեստագետների մէջ նա սկսեց անարդար (խառնակչութեան), դուրս է լարում նկարիչներին միջին: Այդ սրիկան այս աւ այն կողմը մի քանի անգամ լկտի հակայեղափոխական, ըստ էութեան փաշիզմը գովերգող յայտարարութիւններ է արել»:

(«Յորհրդային Հայաստան», 1937, թիւ 226)

Ինչպէս կը տեսնէք, հայրենիք վերագործող արուեստագէտի մը մասին խօսող այս ոճը («այդ խարդախը, այդ սրիկան») իր տաղանդաւոր գաւակներուն գիրկէ բացող առողջ հայրենիքի մը վայել ոճ չէր, չէ: Բարեբախտաբար, Քոչարի դէմ շղթայադրուած պաշտօնական այդ խաշակրութիւնը ծայրայեղ չափերու չհասաւ, «բանասարկուներու, ստորաբարձներու, ու անողնաշար յարմարուողականներու» զրպարտութիւններով յագեցած հայրենական միջնորդին համատարած դժբախտութեան մէջ՝ զիչերու կարգին բախտը ժպտեցաւ նաեւ Քոչարին, առանց որուն զրկուած պիտի ըլլայինք այն անկրկնելի հարստութենէն, զոր վերջին տասնամեակներուն յայտնագործեց ան...

«ՈՒՐԻՇ ՏԷՐ ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ...»

Հայաստանի երիտասարդ արձակագիրներին Մուշեղ Գալլոյան «Սո-վետական գրականություն» ամսագրի այս տարուան Փետրուարի եւ Մարտի Համարներուն մէջ Հրատարակութեան տուաւ իր նոր վէպը՝ «Բովտուն», որուն կցուած խմբագրական ծանօթութիւնը կ'ըսէ, թէ՛

«Գրողների միութեան յայտարարած գրական մրցանակաբաշխութիւնում վէպն արժանացել է առաջին կարգի մրցանակի»:

Այս պատկուած գործին մէջ մեր ուշադրութիւնը դրուեց ի միջի այլոց սաւ Հատուածը:

«Ռեզուտանտից եւ մօրդ գրեցի՝ եթէ Միրաբը փիլիսոփայ դառնայ, բող իր Պարայանգումները փորձի հաստատել բնական օրէնքներով-բնաբան մէջ նայն երեւոյթները կը գտնի: Ես գրեցի՝ անարդարացի պատե-րագւնդները կը պարտուեն այսօրուայ լոգունգին եւ հաւատում եմ. որով-հետեւ առսական հորիզոնների ձմեռն է այդ խօսքը հաստատում. այսպիսի սառնամանիք երկիրը չի տեսել, բայց մենք դիմանում եմք: Հրաշք է՝ բը-նում եմք դիրքերում եւ արքանում առողջ, իսկ գերմանացի զինուորների երակներում արիւնը սառչում է. առսական բնութիւնը, առս մարդու մնան ուրիշ տէր չի ընդունում...»:

Պատմականորէն անառարկելի չէ անշուշտ կատարուած Հաստատումը, բայց բնական ու հոգեբանական տուեալներէ մեկնած՝ անիկա կը բովանդո-կէ խորունկ ճշմարտութիւն մը, որ Հասարակաց է բոլոր Հայրենիքներուն եւ բոլոր ժողովուրդներուն, ի շարս որոնց նաեւ մեր Հայրենիքին, որ «ուրիշ տէր չի ընդունում»:

Մեր պարագային, այս ճշմարտութիւնը առաջին անգամ բիւրեղա-ցուց կոստան Չարեան եւ կրկնեց Համարեա՛ իր բոլոր գործերուն մէջ, «Ան-ցորդը եւ իր ճամբան», «Բանկոսպը եւ Մամուքի սսկարները» թէ՛ «Նաւը լե-րան վրայ» անուն արձակ երկերու էջերուն:

Շօշափուած հարցը ա՛յնքան կենսական նշանակութիւն ունի, որ ան-կարելի է չուրով բաւարարուիլ ու չհազարդել լուրջ խորհրդածութեան առիթ առող զարեանական մշտահոյով փորձառութիւնը, ընդհանրապէս Հայրենի-քի մասին, շաղատողութեան առիթով թէ՛ ազատագրութեան վրայ օ-տարամուտ վարդապետութիւններ փորձողներուն կապակցութեամբ:

«Դաշտ, լեռ, ժայռ, մարդ եւ կով մի կտորից եմ շինուած եւ նայն նայուածքը ունին: Դա մեր բարեբախտութիւնն է, երկնային օրհնութիւնը, որովհետեւ դիմագուրկ չեմք»:

«Երկրի հիմնական այս օրէնքին յարմարուել եմ եւ եկուտները: Այս-տեղ, առս զիւղացին հայանում է»:

«Անցորդը եւ իր ճամբան», («Հայրենիք», Փետրուար 1927)

«Ու գարնամային այն է, կարելի է ասել նախախճամականը այն է, որ ոչ իսկ թշնամիները կարողացել են տիրել երկիրը: Եկել են, քանզի, ան-րել, սպաննել, ամայացրել եւ մեկնել: Նրանք միշտ իրենց զգացել են օտար»

երկիր եկած ժամանակաւոր հիւր, ինչպէս այսօր տանիկները մեր շագատազրուած նահանգներում»:

«Բնակչօսպը եւ Մամուրի սպորները» («Հայրենիք», Յուլիս, 1932)

Ահա եւ ազատագրուածին վրայ անհարազատ վարքագծով ապրելի փորձող մարդոց սահմանուած ապագան.

«Կը գայ մի օր եւ այն մարդիկ, որոնք այսօր կատաղի կերպով ամէն ինչ ուրանում են, կը լինեն հաւատաւոր, մոլորանդ հայրենասէրներ, կ'երդրւեն վարդան Մամիկոնեաններով, մեր Էփեմով, մեր հերթուներով եւ կը դռան բոլոր ազգային արժէքների վրայ... Հայոց աշխարհը էդպէս է. Ոսկէն քարովում է, նուաճում է եւ իր նպատակներին ծառայեցնում ճոյնիսկ իր ենթադրեալ թշնամիներին»:

Արձանագրուածը հեքիաթ չէ, ոչ ալ բնականական վարկածներու սահմաններուն մէջ մնացած քմահաճ խօսք: Բնութեան եւ մարդուն առնչութիւնները վճռական անդրադարձներ ունեցած են կեանքին ու պատմութեան ընթացքին վրայ: Լեռը՝ իր ձեւով, ծառը՝ իր շարժումով, գետը՝ իր շտապով, հովը՝ իր սոյլով, ծաղիկը՝ իր գոյնով ու միւս երեւոյթներէն իւրաքանչիւրը իր նկարագիրով կ'անդրադառնան մարդուն արիւնին, նկարագրին, նախասիրութիւններուն վրայ ու կը ձեւաւորեն անոր հոգին, որ այնուհետեւ կ'ենթարկուի անոնց ձողութեան, հմայքին, թելադրանքներուն, միշտ նոյն ու անդիմազբիւի ուժերէն մղուած, իր էութեան լրացուցիչ մասերը գտնելու, ամբողջանալու անիմանալի պայակով մը:

Հաւանաբար այս կապին շնորհիւ է, որ տուեալ երկիրը իր ժառանգորդներուն համար կը դադրի բնակավայր մը ըլլալէ ու կը ստանայ ուրիշներէ շկուհուած բովանդակութիւն մը: Ուրիշը, օտարը, օտարին միտքան վատասերածները մեր Սեւանը նկատեցին արդիւնաբերական կարելիութիւններ ունեցող պարզ ջրամբար մը, իսկ Արարատը՝ աւելորդ զանգուած մը, համայնավար հին բառաթերթով՝ «մեռած մի կէտ: Բիզնէսի անօգուտ մի հազազայտ: Բուրժուա, մակաբայծ, անարդիւնաբեր մի լեռ, որը անագին տեղ է բռնում եւ գառազ իր գագաթի վրայից իշխում լայն երկրամասերի վերայ, միլիոնաւոր ժողովուրդների սրտում արթնացնում հեակգիտական, ըզգացական, ռումանթիք եւ միստիք գգացումներ»:

Այս վերաբերումը չէր կրնար երկար տեւել ու երկար շտեմել, որովհետեւ հայ մարդը չի կրնար ցամաք Սեւանի մը յիշատակով ապրել, կամ շնչել Արարատը արդիւնաբերական անկիւններէ դնահատելով: Սեւանին ջրաբառ նոր երակներ հաղորդելու անոր անկուրի զոհարեութիւնը ծանօթ է աշխարհին ու Արարատը խորհրդանշական իր նախկին իմաստին մէջ արժեւորելու հոլովոյթը փաստի չի կարօտիր: Այդպէս է մեր երկիրը իր ողջ բընութեամբ, չի հանդուրժեր զինք չըմբռնողներն ու այլասերելու ելած հարստահարիչները, Մուշեղ Փալշոյանի նկարագրած ռուսական բնութեան պէս է, ո՛չ ուրիշ տէր կ'ընդունի, ոչ ալ ուրիշ տէրերու ծառայող կամակատարներուն կը ձգէ իր բախար տնօրինելու գործը...

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱՆՔ



ՍՏՈՒԵՐ ԵՒ ԱՐՁԱԳԱՆԳ (Բանաստեղծություն), Զարեհ Խրախունի,
Փարիզ, 1973

ՀԱՅԱՇՈՒՆՁ (Բանաստեղծություն), Մարտիրոս Գազանճեան, Պոս-
թըն, 1974

ՀԵՐՈՄԱԿԱՆ ՇԱՏԱԿԻ ԱՐՄՇԱՏ ԳԻՒՂԸ (Պատմական), Մելիք
Ազիզեան, Պէյրուս, 1974

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՇՂԹԱՆ (Բանաստեղծություն), Ս. Հերեան,
Պէյրուս, 1974

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵՐԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 40 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 20 ՏՈՂԱԲ
ՀԱՏԱՎԱՅԱՌ 4 Լ. ՈՍԿԻ

باكين
مجلة شهرية ، ادبية وفنية عليا
مدير المسؤول
السيد ارتين كارنيك قزانيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

•

ԽՐԱԳԻՐ
Գ. ՄԱԳԵԱՆ

Հեռագրային՝ 296898

Վարչութեան հասցէ

K. ARARADIAN
Rue Selim Boustani
Beyrouth -- Liban